



# ԻՈՐՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ  
ՍՏՐԻԱՐՔՈՒԹԵՄՆ  
ՀԱՅՈՓ  
ՆՐՈՒՍԱԳԷՄԻ

ԾԳ ՏԼԲԻ

Ե-Բ

1979



# ՄԻՈՆ

ԾԳ.

ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԳԼՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ

1979

ՅուՆուար — Փետրուար

Բ | Գ - Գ

1979

January — February


No. 1 - 2

# SION

VOL. 53

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY  
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press  
Jerusalem

# ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ԶՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՍԸ

## ԲԵԹՂԵՀԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ

### Ժ Ո Ղ Ո Վ Ո Ի Ր Գ Է Ս Յ Ո Ց

ՈՐ ՅԵՐՈՒՍՈՂԷՄ, Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ

Կը խօսիմք ձեզի աշխարհի ամենէն նուիրական սրբավայրէն, Բեթղեհէմի Սուրբ Ծննդեան Այրէն, ուր մօտ երկու հազար տարիներ առաջ՝ ծնաւ սիրոյ եւ խաղաղութեան իշխանը, աշխարհի Փրկիչը:

Աստուածային մանուկը, որ վերստին կը ծնի մեր հոգիներուն մէջ, որուն կը հաւատան բոլոր քրիստոնէայ ժողովուրդները, խորհուրդն ու մարմնառութիւնն է խաղաղութեան եւ սիրոյ, ինչպէս պատմեցին հրեշտակները Ծննդեան սրբազան գիշերուան մէջ:

Արիւնի եւ խռովի այս օրերուն, երբ ամէն ինչ նիւթի եւ ուժի կնի-  
 ֆով է կնիաւոր, երբ մեր կեանքը գեղեցկացնող հոգեկան արժէքները այլեւս  
 նուազման եւ ընկրկումի են ենթարկուած, աւելի քան մխիթարական է նօ-  
 րէն բանալ մեր հոգին հրեշտակներու պատգամին, «յերկիր խաղաղութիւն եւ  
 ի մարդիկ հանութիւն»:

Ոչ մէկ ասեմ երկիրը չէ ունեցած այսօրեան արցունք եւ արիւն, եւ մարդ-  
 կութիւնը այսօրեան տառապանք, եւ այս ամէնը՝ իրմէ իրեն: Կ'ապրինք անկ-  
 ման մէջ եղող աշխարհի մը մէջ, փեռելկոտած անբուժելի հակասութիւննե-  
 րով: Չկայ հոգեկան եւ Ֆիզիքական ապահովութիւն, մարդը կ'ապրի ոնիրի  
 եւ ստուերներու աշխարհը: Մարդկութիւնը իբրեւ բարոյական հասկացողու-  
 քիւն հոգեվարէ մը կ'անցնի, նման անոր՝ զոր ունեցաւ հին աշխարհի վախ-  
 նանին, երբ քրիստոնէութիւնը այդ կործանումին կը բերէր կարելի փրկութիւ-  
 նը, նիւթէն եւ ֆայֆայումէն դուրս ֆաշելով անդնդատոյց ոգեղէնը մարդուն:  
 Այսօր պատկերը աշխարհին աւելի մեծ չափերու վրայ կը կրկնէ նոյն այդ ող-  
 բերգութիւնը: Օրերը որ մերն են, լեցուն են աղմուկով եւ անձկութեամբ: Նոր  
 դիմազեղծող ուժեր կը միջամտեն մեր կեանքին, փոխելով անհասարակ զանգուա-  
 ծի, միտք՝ մեքենայի: Իսկ սիրապետման բնագոյն ու եսապաշտութիւնը ազ-  
 գերու, գազանային անգրութիւններու կ'առաջնորդեն մարդը իր ընկեր մարդուն  
 դէմ, ախտաբանական նկարագիր հագնելու չափ: Պատերազմներու եւ խռովու-

քիւններու պատճառներէն մին ալ հոգեկան այլացումն է, աւելի անգութ բառով մը՝ այլասեռումը: Նոր աշխարհը որ ի լինելութիւն է, տարբեր արժէքներու կը նայի, մարդէն ու նմանութենէն աւելի կը գնահատէ ուժը, ցեղը, զանգուածը, մեքենան: Արդարութիւնը տրամադրուած է ուժէն: Ս.հա պատկերը մեր ժամանակին եւ զգայնութիւնը մարդուն ամբողջական գերութեան:

Մեղմելու համար նիւթին, ուժին եւ երկաթին ննուամբ մեր ուսերէն եւ հոգիներէն, մենք պէտք ունինք, ինչպէս միշտ, ֆրիստնէական հրամայականներուն, սիրոյ եւ խաղաղութեան, որոնց մարմնացումը եղաւ այս գիշեր վերջոսին ծնող մանուկը, վերակազմելու մարդուն աղաքուած դիմագիծը: Չկայ խաղաղութիւն առանց սիրոյ: Մէրը ձգողական օրէնքն է բարոյական եւ ընկերային աշխարհին, որ կը լեցնէ բոլոր մարդերը եւ կ'ընէ զանոնք իրարու հաւասար եւ մօտ Աստուծոյ: Առանց սիրոյ եւ արդարութեան՝ կարելի չէ երթալ խաղաղութեան: Մարդկային կեանքի ամենէն շինիչ ուժերուն աղբիւրն ու ներշնչարանը, թուառութեանց ամենաբոյժ ամոխիչը, ֆաշիստեան ամբապնդիչ պահպանակը, առաքինութեանց դրդիչը, արդարութիւնն է:

Այս խօսքերուն հանգամանաւոր հեղինակը վախ չունի ֆարոզ ըլլալու, ջատագովութիւն պարսկելու կամ յոխորտալու դարու ոգիի անդիմադրելի բափին դէմ: Այս խօսքերը սիրտի մէջ բանաձեւուած եւ միտքով պատկերացուած տառապանքի մը արտայայտութիւններ են: Հարիւր տարին բաւական եղաւ որ աշխարհը հաշտուի անհաշտելիին, որպէսզի արիւնի եւ ոնիրներու իր սարսափը հեշտանքի վերածուի, որպէսզի սերունդներու տաժանագին զոհաբերումով իրագործուած շէնքը — արեւմտեան ֆաղափալքութիւնը եւ ֆրիստնէական ոգին — իյնան օտի կոխան, աշխարհը վարող նենգամիտ ֆաղափագէտներու: Որպէսզի արդարութիւնները հերժուին եւ ամբողջական ժողովուրդները բնաջրնջուին եւ խաչուին եւ զլացուի իրենց թիզ մը հող Աստուծոյ այս անոյշ արեւին տակ: Այս խօսքերը չեն գար գարձեալ մարդկային միջոցներու միայն հաւատարմութեամբ եւ աշխարհէն ամէն բան սպասող հոգեվիճակէ մը: Անոնք որ զաւակներն են ժողովուրդի մը, դարերով անարեալոյս տառապած եւ այդ գիշերուան մէջ իսկ չվախցած, չընկրկած, կրնան տակաւին հաւատալ խաղաղութեան, սիրոյ եւ արդարութեան, որ տրտնուի է այս գիշեր վերջին ծնող Աստուծոյ:

Ինչ փոյթ գառանցանքը մարդերուն, շառաչիւնը կործանումներուն, պատճառները նիւթին եւ ուժին: Մենք կը հաւատանք որ Իր տրեւեռական սէրը, ցանուած այս աշխարհի վրայ եւ մարդոց հոգիներուն մէջ, կ'անի ու կը մեծնայ ամէն օր, ըլլալու հսկայ ծառը եղբայրութեան, համաձայն Իր պատգամին:

Ժողովուրդ Հայոց, դուն դարերով խաղաղութեան ծարաւն ու իղձն ես ունեցեր, ազատութեան տենչանքին չափ բուռն եւ երկնին չափ խորունկ: Քեզի պարտադրուած պայմաններու արգասիքը չէ միայն պատճառը այս ըզձանքին, այլ որովհետեւ դուն կը հաւատասա թէ խաղաղութեան եւ սիրոյ աւ-

խարհի մը մէջ միայն կարելի է իրագործել Աստուծոյ քազաւորութիւնը եւ լեցնել մարդուն կարօսը: Իմ եւ Սրբոց Յակոբեանց զինուորեալ Միաբանութեան սիրսը քեզի է որ կը բացուի նորէն, նուիրական այս գիշերով, եւ կեցած Սուրբ Ծննդեան վեհավայրին մէջ, քեզի կը փոխանցենք աւետիար՝ զոր օր մը հովիւներն ու հրեւեակները տուին աշխարհին, եւ որուն հաւասֆը քան դարեւէ ի վեր կը լեցնէ ու կը զօրացնէ մեր քրիստոնէական կեանքը: Շարունակէ հաւասալ Յիսուսի Ծննդեան ու մարդուն աստուածացումին, եւ մայրացուր հոգիդ այս գիշերուան մեծ խորհուրդովը, նման քու աստուածաբեալ պսպարուդ, որոնք գիտէին գեղումի հանել գիշերները, բանալու դռները երկնքին, իջեցնելով Աստուածորդին իրենց սիրտերուն մէջ եւ մտաւրի գաղջ ընթացութեանը:

Աղօթենք ի արեւ, որ Բերրեհեղմի երկնքին վրայ յայտնուած աստղին լոյսովը լուսաւորուին աշխարհի ղեկավարներուն միտերը, տեսնելու համար խաղաղութեան իրական նամբան, որպէսզի կարելի ըլլայ սէրն ու խաղաղութիւնը հաստատել այս երկրի վրայ, Աստուծոյ փառքին եւ մարգերու բարիքին համար: Ամէն:

Ս. Ծնունդ, 1979





ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ս. Էջմիածին, Ս. Ծնունդ 1979

Նորին Ամենապատուաբան  
Տ. Եղիշե Արքեպիսկոպոս Տէրտէրեան  
Պատրիարք Երուսաղէմի Հայոց  
Երուսաղէմ

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ»

Սիրելի Սրբազան Եղբայր,

Մեր հայեացքը սեւեռած ղէպի բարձունքները երկնքի, ուրկէ դարեր առաջ ատենացաւ մեր աշխարհին հրաշալի ծնունդը Աստուածորդուն եւ պատգամը խաղաղութեան, Մենք այսօր նոյն լոյս ատենար կը բերենք Ձեզի, հաւաստով աներեր որ շնորհներովը տուրք Ծննդեան, պիտի բաշխուի աւելի խաղաղարար ոգի մեր օրերու մարդկութեան եւ աւելի փոխադարձ հանուրիւն ազգերու եւ պետութիւններու միջեւ:

Փառք Փրկչին մեր Քրիստոսի որ Իր հետ երկիր իջեցուց մեծ ու սքանչելի տեսիլք խաղաղութեան եւ ի մարդիկ հանութեան:

Քոզ բարին Աստուած Իր խաղաղութիւնն ու կեանքար սէրը առատօրէն բաշխէ Տիրախնամ Սուրբ Արքայիդ ու ձեր զինուորեալ քաջակորով Միաբանութեան, միշտ լծուած հոգեւէն ու ազգապահպան առաքելութեան, Ձեր լուսամիտ ու իմաստուն հովուապետութեամբ:

Այս երջանիկ առթիւ բոլլ տուէր նաեւ Ձեզի ներկայացնել Մեր ամենազեւեմ մարդանկները Ձեր քաջառողջութեան եւ Ձեր առաքելութեան պտղաւաս իրագործումներուն համար, ի փառս Քրիստոսի եւ ի փառաւորումն մեր առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ Ա Ջ Գ Է Ն Ա .

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Վատիկան, 10 Յունուար 1979

Ն. Ամեն. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրութեան

Պատրիարքարան Հայոց

Երուսաղէմ

Սրտագին շնորհակալութիւններ Ձերդ Ամենապատուութեան, Ս. Եննդեան եւ Նոր Տարւոյ առթիւ Ձեր յղած շնորհաւորութեանց եւ բարեմաղթութեանց համար: Թող Երկնային Մանուկը շնորհէ Ձեզ Իր խաղաղութիւնը յառաջիկայ տարուան ընթացքին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ - ՊՕՂՈՍ Բ. ՊԱՊ

Ն. Ամենապատուութիւն

Եղիշէ Պատրիարք Երուսաղէմի

Ձերդ Ամենապատուութիւն,

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,

Եղբայրական խոր անկեղծութեամբ եւ հոգեկան հրճուանքով է որ կը շնորհաւորենք Ձեզ՝ Քրիստոսի հրաշափառ Եննդեան մեծ եւ սրբազան յիշատակի եւ մերծակայ Ամանորի առիթներով:

Յղելով Ձեզ մեր շնորհաւորութիւնները այս մեծ տօնին առիթով, կը բաժնենք Ձեզի հետ պայծառ հրճուանքը՝ աշխարհի նորածին Փրկչին խորհուրդին ընդմէջէն, եւ գոհարանութիւն կը մատուցանենք Հայր Աստուծոյն որ «այնքան սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ Անոր հաւատայ՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը» (Յովհ., Գ. 16):

Խոստովանելով եւ փառաւորելով Աստուածայայտնութեան խորհուրդը, որով մեզ յայտնուեցաւ զօրութիւնն ու մեծութիւնը՝ մարդկային ցեղին հանդէպ Արարին ունեցած սիրոյն, կը յղենք մեր ջերմեռանդ աղօթքները նորածին Մանուկ Քրիստոսի, որպէսզի Ան, աշխարհի փրկիչը, օրհնէ մեզ՝ մեր եկեղեցական ծառայութեան մէջ, ի փառաւորումն Իր Սուրբ Եկեղեցիին, եւ պարգևէ աշխարհի բոլոր ժողովուրդներուն երկարօրէն ցանկացուած խաղաղութիւնը եւ ամէն բարգաւաճութիւն:

Առ Աստուած սիրով՝

Պ Ի Մ Է Ն

Պատրիարք Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ

Ս. Եննդ, 1978/79



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Դեկտեմբեր 11, 1978

Ամենապատիւ Տ. եղիշէ Արքեպս. Տէրտէրեան  
Պատրիարք Հայոց Երուսաղէմի  
Երուսաղէմ

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր,

Թէեւ սփիւռքի համար բախտաւոր շրջան մը չհանդիսացաւ 1978 տարեշրջանը, սակայն մեզի համար գոհունակութիւն եղաւ հաստատել թէ խաղաղ ու բեղուն տարի մը բոլորեց Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, Ձեր խոհեմ եւ նուիրեալ հովանիին ներքեւ:

Մեր սրտագին բաղձանքն է որ բացուող Նոր Տարին խաղաղութեան ու շինարար գործի տարի մը ըլլայ սփիւռքի բոլոր գաղութներուն համար, որպէսզի մեր հարազատները ամէն երկինքի տակ նուիրուին ազգապահպանութեան վսեմ գործին:

Նոյնպէս կը մաղթենք որ Երուսաղէմի Միաբանութիւնը եւս շարունակէ իր բեղուն կեանքը՝ պատրաստուած եւ հմուտ հոգեւոր առաջնորդներ պատրաստելու սփիւռքի տարբեր գաղութներուն համար:

Շնորհաւորելով Ձեզ եւ Ձեր հաւատաւոր Միաբանութիւնը Ամանորի եւ Սուրբ Ինունդի առիթով, կը մնանք,

Խորին յարգանքով՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ

Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի անուան տօնին առիթւ —  
աօն Ս. Վարդանանց զօրավարաց — Ն. Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետեւեալ հեռա-  
գիրը յղեց Նորին Սուրբ Օձուութեան. —

Երուսաղէմ, 28 Փետրուար 1979

Ն. Ս. Օձութիւն Տ. Տ. Վազգէն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Ձերդ Վեհափառութեան անուան տօնին առիթով, հաճեցէք ընդունիլ Մեր եւ մեր Միաբանութեան սրտագին շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները՝ Ձեր արեւշատութեան համար: Թող Տէրը անսասան եւ բարգաւաճ պահէ միշտ Մայր Աթոռը:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԵՐԵԱՆ  
Պատրիարք Հայ Երուսաղէմի

**ՓՈՒՍԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ**

**ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ**

**ՎԱՍԵՄԱՇՈՒՔ ՏԻԱՐ ԱԼԷՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՈՒՂՂՈՒԱԾ**

**ՄՕՆԹՐԷԱԼԻ ՄԷՋ ԻՐ ԿԱՌՈՒՅԱԾ ՎԱՐԺԱՐԱՆԻ**

**ԲԱՅՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս և շնորհիւ Ամենա- սուրբ Հոգւոյն Պատրիարք Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի, վերատեսուչ սուրբ և տնօրինական տեղեացն Քրիստոսի, յորմէ հասցէ շնորհք և օրհնութիւն ի վերայ նորին Վսեմութեան Ալէքս Մանուկեանի, մեծի բարերարին Արմէն Քէպէք Մանուկեան նորակառոյց վարժարանի:

Սրտի անհուն զոհունակութեամբ կ'ողջունենք ազգին անզուգական և մեծ բարերարը, Տիար Ալէքս Մանուկեանը, մեր օրերու ամենէն պատկառելի և բացառիկ արժէք ներկայացնող դէմքը: Անհատներու կեանքին մէջ քիչ անզամ կարելի է հանդիպիլ որ պատուոյ և դիրքի յառաջգիմութիւնը զուգընթաց քալած ըլլայ գուտ անձնական արժանիքին, ինչպէս կը հաստատուի Տիար Ալէքս Մանուկեանի պարագային: Այս է պատճառը անտարակոյս որ իր կեանքը տեսարան մը ըլլալէ աւելի փառք մըն է:

Տիար Ալէքս Մանուկեան այս կերպով մին է ազգային այն բարերարներէն և պարծանքներէն, որ զիտէ գիմաւորել իր ժողովուրդին կարիքները կիրթ և ազնուական զգացումներով: Իրեն համար դրամը ուժ մը չէ միայն, այլ արժէք մը՝ կիրարկուելու արժէքներու ի խնդիր: Առանց այս փրկարար փոխարէնին, դեղին մետաղը զոյն մը և ձայն մըն է միայն:

Բան մը ըլլալէ աւելի բան մը ընելու իղձը ամենէն մաքուր ճիգն է եղած իր հոգիին: Սրտի և մտքի անստղծ յատկութիւններով օժտուած մարդ, որ վարժուած է միշտ մտածելու թէ իր ժողովուրդին վերականգնումի և զոյատևման ամենէն կենսական լծակը առաւելարար կրթութիւնը կրնայ ըլլալ և այդ պատճառով իր ամենէն զորովագեղ ուշադրութեան առարկան ըրած է ազգային կրթութեան զործը: Մեծ ու սրբատաշ քարերով կառուցուած բարերարութիւններ են Տիար Ալէքս Մանուկեանի նուիրարերումները, որոնք իրերայաջորդ սերունդներու երախտիքն ու վկայութիւնը պիտի ունենան իրենց իրրև զրաւական:

Եթէ հարկ ըլլար պատմական հին մեթոտի մը հետևելով մեր պատմութեան որոշ շրջանները ներկայացնել միակ մարդու մը դէմքովն ու անունովը,

ապահովորար բոլոր ձայները պիտի միանային մեր պատմութեան վերջին շրջանը տիազուսելու Ալէքս Մանուկեանի անունով, և այս՝ առանց չափողանցութեան:

Մեր ժողովուրդին լատգոյն օրերը կը զուգաշիպին միշտ իր բարոյական մեծութեան թուականներուն: Այդ թուականներէն իւրաքանչիւրին վերև կը սուտանի դէմքն ու անունը տեսիլքով լեցուն մարդոց, որոնց մէջ կ'ապրի Աստուծոյ հոգին, առաջնորդութեան ճշմարիտ ուժը: Այդ հոգիէն զեղեցիկ բաժին մը կայ Տիար Ալէքս Մանուկեանի մէջ: Առանց այդ ոգիին, ամէն օր մարդուն մէջ ապրող կենդանի տեսիլքին, մենք պատրանքի զոհեր ենք միայն:

«Լաւ է տալ քան անուշ»: Եւ տարանական պատգամին այս կշիռքով է որ կը կշռուի մեծ բարերարին նուիրաբերութիւնը: Այս պատգամը ժողովուրդի մը հոգիին թափը միայն չ'արտայայտեր, այլ կ'անցնի աւելի անդին և կը դառնայ զերագոյն հրահանգութիւն մը բոլոր անոնց համար, որոնք այս անցաւոր աշխարհի երեսին կ'այցուին լուսաւոր ձգողութեամբը անանցին: Մարդեր՝ որոնք զիտեն արդիւնաւորել հոգեղէնին հունձքը, զտնելու տևողութեան կտորը զիրենք ռանակիս հալածող ազէաներէն, իբրև քաղցրութիւնն ու սփռփանքը ուրիշներու:

Բարեգործութիւնը հոգեկան արարք մըն է իրապէս, երբ տուողը նիւթական նկատումներէ անկախ է, և ստացողները կ'ընդունին զայն երախտագիտական զգացումներով: Այն ատեն է որ ան կը դառնայ «հոտ անուշից», որ բերկրանքի քաղցրութեամբ կը զուարթացնէ ստացողներուն սիրար և կ'ըլլայ «պատարազ ընդունելի, հաճոյ Աստուծոյ և մարդոց»:

Այս իշխանական նուիրատուութեան օրիթով, որ վստահ ենք թէ վերջինը պիտի չըլլայ իր ցարդ կատարած մեծ բարերարութիւններուն ոսկի շղթային, պարտք կը համարինք Արմէն Քէպէքի մերագն ժողովուրդի զգացումներուն միացնել մեր ալ ուրախութիւնը, ազօթելով որ մարդացեալ Փրկիչը մեր Յիսուս Քրիստոս կրթանուէր և մեծանուն բարերարին պարզէ արևշատութիւն, առողջութիւն և երջանկութիւն, որպէսզի ան տակաւին երկար տարիներ շարունակէ իր ազգապարծան և փրկարար գործը, Սփիւռքի բոլոր կեդրոններուն մէջ, բարերարելու իր ժողովուրդին զաւակները:

Մնամք ողջունիւ Քրիստոսաւանդ սիրոյ և օրհնութեամբ՝

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պատրիարք Երուսաղէմի

ՎՍԵՄ. ՏԻԱՐ ԱԼԷՔՍ ՄՍՆՈՒԿԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ, Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ

Ք Ս Ա Ն Հ Ի Ն Գ Ա Մ Ե Ա Կ Ի Ն Ա Ռ Ի Թ Ո Վ

Նիւ Եորքի մէջ, Դեկտեմբեր 9ին, Շարաթ գիշեր, հանդիսաւորապէս տօնախմբուեցաւ Հայ Բարեգործական Ընդհանուր ազգապարծան Միութեան ցկեանս Նախագահ Տիար Ալէքս Մանուկեանի 25-ամեայ պաշտօնավարութեան արծաթեայ Յարելեանը:

Մեծարանքի ճաշկերոյթ - հանդէսին, որ կազմակերպուած էր Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի կեդր. Յանձնաժողովին կողմէ, 60) հանդիսականներ ներկայեղան, որոնք եկած էին Միացեալ Նահանգներու և Գանատայի զանազան աստաններէն, մինչև իսկ հեռուոր Քալիֆօրնիայէն: Ուրիշ 200 անձեր զրկուեցան անոր մասնակցելու հաճոյքէն, պարզապէս տեղի չգոյութեան պատճառով:

Բացման աղօթքէն ետք, Կարգադիր Յանձնախումբի Ատենապետ Պր. Ճօրճ Տապաղեան առջարկեց բաժակ բարձրացընել օրուան մեծարեալին կենացը, ինչ որ ծափահարութեամբ և յատկայա կատարուեցաւ:

Ընթրիքէն ետք, օրուան սեղանապետ Պր. Ռիչըրտ Կրէյլըրի ընթացք տուաւ յայտադիրին, որուն վրայ նշանակուած զլիսաւոր խօսողներն էին Պէնթլի Գուլէճի Նախագահ Տքթ. Կրէյլըրի Աղամեան՝ Անգլիերէն և Ամերիկահայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս՝ Հայերէն լեզուով: Իսկ զանազան հանգամանքներով ողջոյնի խօսքեր արտասանեցին Տ. Փառէն Մ. Վրդ. Աւետիքեան՝ Տիթրոյթի Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայց. Եկեղեցւոյ հովիւ, Պր. Յակօր Պարսուհեան՝ Սանուց Միութեան Ատենապետ, Պր. Տատուր Տատուրեան՝ Երկարամեայ բարեկամ և Մայր Տաճարի Շինութեան Յանձնախումբի փոխ ատենապետ, Պր. Յակօր

Տէրաէրեան՝ Երկարամեայ բարեկամ-գործակից և Հ. Բ. Ը. Մ. ի կեդր. վարչութեան անդամ, Պր. Հրայր Յովհաննեան՝ Արմինիան էսեմլիի վարչութեան ատենապետ և բարեկամ, Գերշ. Տ. Տիրան Արքեպիսկոպոս՝ նախկին առաջնորդ և բարեկամ, Պր. Սեդ Մամճեան՝ ՄԱԿի մօտ Միաց. Նահանգներու պատուիրակութեան ղեկապան և բարեկամ, Պր. Էտուըրա Մարտիկեան՝ Հ. Բ. Ը. Մ. ի Ամերիկայի կեդր. Յանձնաժողովի ատենապետ, բարեկամ և Երկարամեայ գործակից, որոնք սիրով, գնահատանքով և երախտագիտութեամբ անդրադարձան Պր. Մանուկեանի անձին, նկարագրի յատկանշական դիժերուն, ազգային ոգիին և բարեգործութեանց նշանակութեան:

Իրենց ներկայութեամբ և սրտարուխ խօսքերով հանդիսութեան փայլ աուրին Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Շնորհք Արքեպիսկոպոս և Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս, որոնք մասնաւորապէս ծանրացան Պր. Մանուկեանի Հայց. Եկեղեցիին կատարած մեծագումար նուիրատուութեանց վրայ, և Յարելեարի արժանաւոր արդին՝ Պր. Ռիչըրտ Մանուկեան, որ զուարթախոս արտայայտութիւններով և հպարտութեան զգացումներով բնութագրեց իր ծնողաց անձերն ու կատարած հանրային գործերը: Հակիրճ ելոյթ ունեցան նաև հիւրաբար մեր մէջ զանուող Պր. Նուպար Նաղարեան՝ Միութեան Լիբանանի շրջանակին կողմէ և Պուէնոս Այրէսի Մարի Մանուկեան վարժարանի այս տարուան (անդրանիկ) շրջանաւարտներէն՝ Օր. Լիլիանա Էքչեան, յանուն իր գասընկերներուն և Միութեան Արժանթիինի շրջանակին: Տ.

Շահէ Սրբազան, յանուն եղիշէ Պատրիարքին և Երուսաղէմի Քաղաքապետին, Պր. Մանուկեանը Ս. Քաղաք հրաւիրեց որպէսզի ուրախութիւնը ունենան նման հանդիսութեամբ մը պատուելու Ս. Աթոռի մեծ բարերարը:

\* \* \*

Այս ուրախ առթիւ աշխարհի զանազան կողմերէն ստացուած էին շնորհաւորական հեռագիրներ և նամակներ. ժամանակի սղութեան պատճառով՝ Պր. Կրեկըրի կարգաց միայն քանի մը ծանօթ ազգայիններու և կողմակերպութեանց անունները: Թորգոմ Սրբազան կարգաց Ամենայն Հայոց Հայրապետին՝ Վազգէն Ա. ի կոնգակն ու յանձնեց նորահաստատ «Ս. Ներսէս Ծնորդալի» Ա. Կարգի Շքանշանը ի գնահատութիւն Հայոց. Եկեղեցիի պայծառութեան և շինարարութեան ի նպաստ անոր կատարած մեծագումար նուիրատուութեանց և մատուցած ծառայութեանց (Վեհշր 1960ին Պր. Մանուկեանը պատուած էր Ս. Գրիգոր Լուսաւորչի Ա. Կարգի Շքանշանով):

Դեսպան Պր. Մոմճեան կարգաց Մ. Նահանգներու Նախագահ Ճիմի Գարթլըրի շնորհաւորական նամակը, որ բարձրորէն կը գնահատէր Պր. Մանուկեանի մարդասիրական գործը, Հ. Բ. Ը. Միութեան 25ամնայ նախագահութիւնը և երկրին բերած նպաստը: Սեղանապետը կարգաց նաև Նիւ Եորք Նահանգի Կառավարիչ Հիւ Քէրիի և Նիւ Եորքի Քաղաքապետ Էտուըրտ Գոչի շնորհաւորական և բարեմաղթական նամակները:

Այս ուրախ առիթով, Ամեն. Տ. եղիշէ Պատրիարքը Յորելիարին յղած էր շնորհաւորական հեռագիր մը, զոր հրատարակեցինք Ամսագրիս նախորդ թիւով:

Գերշ. Տ. Շահէ Աբբեպո. ի ողջոյնի խօսքը. —

«Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր, հոգևոր եղբայրներ, Վսեմաշուք Յորելիար Տիար Ալէքս Մանուկեան և յարգելի հանդիսականներ,

Քաղցր պարտականութիւն է նախ

ինծի համար, ձեզի բերել ողջոյն և օրհնութիւն Երուսաղէմի Պատրիարքէն, ձեզի բերել աղօթք և մաղթանք Երուսաղէմի զինուորեալ Միաբանութենէն, ձեզի բերել ջերմ սէր և համակրանք Ձեր և Ձեր Տիկնոջ անունը կրող ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի ուսուցչական կազմէն և մեծ ու փոքր ուսանողներէն:

Եկանք հեռաւոր Երուսաղէմէն միացնելու համար մեր ծայնը փառաբանանքի մը, որ արդար վարձքն է քսանհինգ տարիներու ձեր փառաւոր նախագահութեան:

Կր նայինք ձեզի և կը տեսնենք ձեզ՝ կեցած հաստաբուն ծառի մը նման մեր ժողովուրդի արտասահմանեան կեանքի փոթորիկներուն դիմաց, ձեր թեւերը տարածած մեր բոլոր կարիքներուն վրայ, իշխանական լայնասրտութեամբ:

Լուսաւոր ամպի մը նման կը տեսնենք ձեր փայլը հայկական տարածուն աշխարհի երկնքին վրայ, պատրաստ ցօղելու ձեր գուրգուրոտ անձրեւը ձեզի նայող ծարաւի հողերուն, անսպառ առատութեամբ:

Հաւատքի մարդ, դուք նայեցաք հայու Աստուծոյն և ապահովեցիք Անոր Աջին զօրութիւնը, մեր փորձութիւններէն և տատանումներէն առաջնորդելու համար ձեզի վստահուած Բարեգործականը, ձեզի յատուկ իմաստութեամբ և ազգասիրութեամբ:

Բարեգործականը դուք վերածեցիք բարոյական ոյժի մը, որ, իր պարիսպները նետած հայ հոգիին շուրջ, կը պաշտպանէ զայն օտարացումի հարուածներէն:

Դուք հաւատացիք երեք մեծ սրբութիւններուն, որոնք գաղթական մեր կեանքը առաջնորդող դրօշներն են — հայրենիք, դպրոց և եկեղեցի: Ձեր լայն սիրտը բրած հնոցը հայ հողի, հայ լեզուի և հայ հաւատքի զգացումներուն, դուք Բարեգործականին տուիք գաղափարականի մը լոյսը, որով առաջնորդուեցաւ ան և առաջնորդեց մեծ զանգուածները մեր ժողովուրդին:

Դրամաբաշխ կազմակերպութենէ մը, դուք ազգապարծան Միութիւնը ըրիք դրօշակակիրը հաւասարակշռուած գաղափարաբանութեան մը: Կոչ մը ըրիք զայն միութեան, գործակցութեան, իրար-հաս-

# ԿՐՈՆԱԿԱՆ

## ՆՈՐՈԳՈՒՈՂ ԺԱՄԱՆԱԿԸ

(Ամսուհի եւ Ս. Ծննդեան տօներուն առթիւ)

Քաղաքակրթութեան արչալոյսէն իսկ մարդեր փորձած են ժամանակ կոչուած անտարազելի իսկութեան անվերջ ու միօրինակ գնացքին, թաւալումին մէջ նշանակել հանգրուաններ, ուր պահ մը առիթը ունենային ներամփոփումի եւ ինքնաքննութեան, յետադարձ ակնարկով մը նայելու մտաւոր անցելին, հաշուեյարդարի ենթարկելու զայն, ու նոր աւիւնով ու կորովով, այլ մանաւանդ նոր ծրագիրներով ու իտէալներով խիզախելու ապագայի սկի սեմէն ներս:

Սակայն ժամանակի այլազան տրուհումներէն — օր, եթնհակ, ամիս — տարին է, այսինքն 365 կամ 366 օրերու միջոցը, որ կրցած է ըլլալ յարմարագոյն տեղութիւնը այն շրջանին՝ զոր պիտի ուզէինք սկսիլ իրբեւ նոր շրջան մը, զատորոշուած զայն կանխող եւ անոր յաջորդող նոյնատեւ շրջաններէն:

կացողութեան, թելադրուած Հայ Ազգի մեծ սէրերէն:

Գիտակցութեան դաշտ մը ըրիք Բարեգործականը, ուր հայ մտաւորական եւ արուեստագէտ երիտասարդութիւնը ամբացուց ինքնութեան իր զգացումը եւ արդար հպարտութեամբ մը ըստծրածայն յայտարարեց իր հայկականութիւնը: Դպրոցներուն օգնութիւն հասցնող Միութենէ մը, դուք Բարեգործականը վերածեցիք մեծ դպրոցի մը, ուր սերունդներ եկան առնելու ողջմտութեան եւ հաւասարակշռուած դատողութեան դասեր:

Մեծ եղաք դուք, եւ ձեր սրտի ու հոգիի մեծութեան գործով կնքեցիք Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որուն համար Ազգն ամբողջ երախտապարտ է եւ երախտապարտ պիտի մնայ Ձերդ Վսեմութեան»:

Քրիստոնէական մտածողութիւնը առաջին դարէն իսկ Ս. Ծննդեան խորհուրդովը ուզած է ողջունել նոր Տարին (այլ եկեղեցիներ զայն կը տօնեն նոր Տարիէն շարաթ մը առաջ, իսկ մերսնք՝ 5 օրեր ետք, ընկելով այդպէս Ս. Ծնունդը առաջինն ու գլուխը տարուան մը տօնեքուն): Նորոգուող ժամանակը շատ բան պիտի գիջէր իր իմաստէն, եթէ մենք չկարենայինք նոր Տարին բանալ Ս. Ծննդեան կամ Աստուածայայտնութեան ճեմ խորհուրդով:

Ամանորը եթէ յարմարագոյն առիթն է նորագումի, հինին սխալներէն հրաժարելու եւ նորին առջև աւելի պայծառ ու իրատես հայեացքով մը կեանքին նայելու, Ս. Ծնունդը, մարդկային պատմութեան բերած մեծագոյն նորութեան յիշատակի տօնը իբրև, յարմարագոյն առիթն է սխալելու անբրկելը ընթանալ Աստուածորդիին մեր առջև բացած, մեզի համար գծած ճանապարհէն:

Ու նաև, եթէ Ամանորը մեզ կը յուշէ ժամանակի արագասոյր ընթացքն ու կեանքի անցաւորութիւնը, Ծնունդը կամ Աստուածայայտնութիւնը, միւս կողմէն, մեր միաքը կը տանի Աստուծոյ գերազանց սիրոյն արգասիքը (զի վասն մեր մարմնացաւ) եղող մեր Փրկչին մարմնացումով մեզի Աստուծոյ որդեգիրներ — այսինքն յաւիտեանական կեանքի ժառանգակիցներ — ընկելու կենարար ու փրկաւէա խոստումին:

Յիսուսի ծնունդը հրաշապատում դըրուազ մը չէ միայն, որուն առջև մարդ կենայ պշուցեալ ու զմայլահար: Ան սկիզբ մըն է նոյն ատեն: Սկիզբ մը նոր կարգերու, նոր ընկերութեան, նոր քաղաքակրթութեան, նոր իմացումի, մասնաւորութեան ու աշխարհայայտեցքի:



Տրտմութիւն է հաստատել թէ քրիստոնէական մեծ ոստաններու մէջ այսօր Ամանորին հետ Ս. Ծնունդն ալ պարպուած է իր իսկական իմաստէն, դիմաւորուելու չափ ժողովրդային զանգուածներէն հեթանոսական դարերը յիշեցնող

կայթառանքով և խենչն ու լպիրշ բարքերու ցուցադրութեամբ, որով աւելի ևս կը խախտի արդէն իսկ քայքայուած բարոյական կառոյցը մերօրեայ ընկերութեան: Տօնէն շարաթներ առաջ սկսուած տենդագին պատրաստութիւնները — տօնածառ, ցուցադրողներու զարդարանք, կաղանդչէքներու բաշխում — արտաքին երեսները, կեղեւները հանդիսանալու փոխարէն, քրիստոնէական երկրորդ մեծագոյն տօնը արժանաւարապէս դիմաւորելու օժանդակող ու անոր յատուկ մթնոլորտ մը ստեղծելու նպատակով, կը թուին դարձած ըլլալ նպատակը տօնին, զանոնք պսակող ցայգային կերուխումի ու շուայտութեան մէջ խեղդելով պատգամն ու խորհուրդը աշխարհի պատմութեան մեծագոյն դէպքին:

Մարդկութիւնը որքան հեռանայ Բեթղեհէմի աւետարեւր աստղէն ու մսուրի Մանկիկէն, այնքան դժուար պիտի զգայ ինքզինք նորոգել ամէն Ամանորի, միշտ ամիսսալով անցնող տարիներու հաշուոյն ու սոսկալով գալիք ու գինք իր անփառունակ վախճանումին տանող տարիներէն:

Ծնունդը նորոգումն է ու մեծագոյն անկիւնադարձը պատմութեան ու մարդկային կեանքին: Նորոգումը, կամ աւելի ճիշդ՝ սրբագրումը, մարդուն Աստուծոյ հանդէպ ունեցած թիւր ու թերի ըմբռնումին: Վերջակէտը՝ հեթանոսական ապականիչ բարքերէն ու օրէնքի կապանք-

ներէն, բիրտ լուծէն հեծող, հիւժած ու հաշմանդամ մարդկութեան ու սկիզբը «չնորհաց ու սիրոյ» թագաւորութեան:

Որքան ատեն որ մարդկութիւնը չկարենայ ինքզինք ազատագրել հին աշխարհը անդճանքով ու երկիւղով պաշարած հեթանոսութեան յատուկ սգիէն ու մտածելակերպէն, ու չորդեգրէ «Արդարութեան Արեւակ»ին բերած սիրոյ ու ազատութեան սկզբունքներն ու զազափարները, ա՛յնքան ատեն Քրիստոսի ծնունդով աւետուած «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւնը» քաղցր ու հեռաւոր երազ մը պիտի մնայ միայն, առանց կարենալ իրականութեան վերածուելու, հակառակ աշխարհի հզօրներուն այդ ուղղութեամբ, երբեմն նոյնիսկ բարի կամեցողութեամբ, առնուած դրական ու շինիչ քայլերուն:

Գիտնանք ուրեմն, նորոգուող ժամանակին հեա, նորոգել ընթացքը մե՛ր ալ կեանքին, սրբագրել մեր թերութիւններն ու մաքրել մեր հոգիները մեղքի բիծերէն ու ժանգերէն: Վասնզի ինքզինք նորոգել ուրիշ բան չէ եթէ ոչ հանդերձել մեր սրտերը, ըլլալու համար բնակարանը Բեթղեհէմի անշուք քարայրի աշխարհակալ Մանուկին:

Կրկիննք, այս առիթով, Շնորհալի Հայրապետի գոհար աղօթքը. «Նորոգող հնութեանց, նորոգեա և զիս, նորոգ զարդարեա»:

Գ. Ժ.





## Ե Ր Բ Կ Ը Ն Ա Յ Ի Մ

Երբ կը նայիմ անհունի  
Կաղսնիքներուն անբափանց,  
Մարմիններուն՝ հրագունս,  
Որոնք անդուլ կը դառնան  
Շարժումներով ներդաշնակ  
Կապոյտին ծոցն անվախնան,  
Իրենց ծիրին մէջ անեղ,  
Կը մտածեմ թէ ինչ որ  
Մենք կը տեսնենք ու կը զգանք  
Բլեկումներ են միտքին:  
Ժամանակի թելն ոսկի  
Կը փաթթըւի մեր միտքի  
Ճախարակին մեզադարձ,  
Կը նորոգուի անդադար  
Տեսողութեան մէջ անհուն,  
Յաւերժութեան երթալու  
Բխումներով կենսախայտ:

Գանկիս խուցիկն մէջ փակուած  
Ոստայնանկներ թիւով ճինգ,  
Կը հիւսեմ ու կը ֆակեմ  
Ժամանակի պատմունանն,  
Վիտեսն ու հրնուսնի մարդուն:  
Շուրջս ամէն ինչ կը հոսի  
Գետի մը պէս անվախնան,  
Պատրաններուս, ցնորիս  
Վերեւ կամուրջ կը նետեմ,  
Վար չիյնալու անդունդի  
Կըլափին մէջ լայնաբաց:  
Գործաւորն եմ անհունին,  
Պատրաններուս երկներանգ,  
Որոնք ծիլ ծիլ կը բուսնին  
Այգիին մէջ հոգիիս,  
Երկինքներէն առած սերմ:

Սակայն կը զգամ թէ անգութ  
Եւ ապարդիւն խաղ մ'է այս,  
Ինքզինքն անվերջ կըրկընող:  
Միտքն համբերող է, կրնայ  
Յարմարիլ այս հանդէսին,  
Անսկիզբ ու անվախնան:  
Սիրքը սակայն ապստամբ  
Կ'ուզէ բանալ կարիքին  
Բոլոր ցանցերն ըսփոխել,  
Տեսնել, զգալ, շօտափել,  
Ինչ որ պահուած կը մընայ  
Վարագոյրի մը ետին,  
Ու կը մղուի փնտռելու  
Կայծակ մտաւոր անտես  
Որ կը մըղէ մեզ յաւէտ  
Պայտարի մը անաւարտ:  
Կը զգայ թէ իր կօւմարին  
Ետին կայ մէկն զինք կանչող,  
Կ'ուզէ անոր միանալ,  
Խորհակելով իր մարմնի  
Պատուարները բռնակալ:

Կեանքը խաղ մ'է անիմաստ,  
Որուն բեմին կը խաղան  
Մեր հոգիի եւ միտքի  
Դերասաններն անարուեստ:  
Մարդն անկարող, երեւուն,  
Նստած համբուն խաչածեւ  
Իր իղձերուն, միտք փոխող,  
Լուռ կը դիտէ իրերուն  
Հոսումն անվերջ եւ ունայն:

Ժամանակին հարկատու  
Էակ մըն է մարդը ճիղն,

Շինուած կաւէն, երազէն,  
ձամբայ ելած արգանդէն  
Գերեզմանին երթալու:

Այգիին մէջ ա շխարհին,  
Որ մեր միսն է եւ արիւն,  
Կը ցանենք մեր երազներն  
Եւ կ'ոռոզենք սերմերն իր  
Քրտիններով մեր արգար:  
Հնձանին մէջ կը նմլենք  
Բարիքներն իր քաղցրահամ,  
Կ'ըմպենք զինին իր բոցսապ,  
Երկիններու ըսկիւնով,  
Յետոյ կու լանք, կը խնդանք  
Երազներով կարհասել:

Մարդուն համար ցաւասանջ  
Արարք մըն է մըսածել,  
Թէ ինք եկած է աշխարհ  
Ըլլալու լոկ մահուան կեր:  
Ու կը լըսեմ իմ ներսէս  
Ճիշտ, կանչեր հապւսապ,  
Զօրակոչի, պայտարի,  
Հրազինելու մեր ուժերն  
Գուպարին մէջ մեր վաղուան:  
Կանչն այդ անհուն, բարձրացող  
Էութեանս խորերէն,  
Նախնիներուս սասն է լուռ:  
Մեռելները չեն հանգչիր  
Հողերուն տակ այս երկրին,  
Անոնք ծառի, քոչունի  
Եւ հովերու արբներով,  
Մեզի անվերջ կը խօսին:

Առանձինն չենք այլ բանակ,  
Նախնիներով միասին,  
Երէկ, այսօր, յաւիտեան:  
Երբ զայրանանք կամ սիրենք  
Անոնք է որ կը սրսմին  
Կամ կը ժպտին մեր մէջէն:  
Ուրուականները անոնց,

Տիւ ու գիւեր անդադար  
Մեր գանկին մէջ կը պարեն  
Ու չեն ուզեր մահը մեր,  
Մեր մահը մահն է իրենց:  
Այս տեսիլքը ամէն ժամ  
Կը մտաւիկ մեր հոգին,  
Յաւերժութեան երթալու  
Ըղձաններով տարփագին:  
Լի ենք անկապ ձայներով,  
Արցուններով, արիւնով.  
Բոց մը սակայն մեր մէջէն  
Կը բարձրանայ զերթ դաւոյն,  
Մութին կողը խրուելու:

Երջանկութիւնն ապրիլ է  
Գժբախտներու հետ բոլոր.  
Լոյսը՝ դիտել մթութիւնն  
Աչքներով անպղտոր:  
Մարդը գիր մ'է անուան  
Գիւցազնաւունջ մասեանին,  
Տիեզերքին դէմ բացուած  
Իր ծնունդէն դեռ առաջ:

Լոյսով գանկիս լապտերին  
Կը բարձրանամ անընդհատ,  
Վերածելու վերելքն այս  
Յաղթանակի մահուան դէմ:  
Գարերը մութ կը հոսին  
Բացած իրենց արբուններ,  
Ամէն վայրկեան անդունդ մ'է  
Մեր օտերուն դէմ բացուող:

Երկրէն երկինք երկարող  
Լարին վըրայ կըրակէ,  
Բոցէ քոչուն մ'է թառեր  
Իր կըքուցին նիւղ մը մորն:  
Ան կը քոչի գունիս գունս  
Ոլորտներէն ոլորտի  
Եւ կ'երգէ երգն իր սիրոյ:  
Կը քաղցրանան արգանդներն  
Քառաններուն եւ նիւրիսն,

Երգին մէջէն կենսայորդ,  
Քարէն բոյսեր՝ ջուրերէն  
Կենդանիներ կը սողան,  
Ու կը վերնայ շիրմաբան  
Որ մեր յոյսերն կ'ընդհողէ:

Հեռուն, ձեռքը կը զակին,  
Աչքերն երկրին մեր յառած,  
Ծալապատիկ բազմեր է  
Տանուէրը աշխարհին,  
Զոր մենք Աստուած կ'անուանենք:  
Մարդն հեզեր է դարերով,  
Իր բառերով անընտել,  
Այս առեղծուածը անլոյծ,  
Որու արհիւն՝ Տիեզերքն  
Յոբենահաս է չնչին:

\*

Մարդն այսօրուան չի հաւ'սար  
Յզացններուն այս բոլոր:  
Ապերասան միտքն անոր  
Խոովներով կը յորդի,  
Կը փորձէ նոր գոյներով  
Պատկերել դէմքն Աստուծոյ  
Եւ կը հաւ'սայ թէ ինքն է  
Ստեղծիչն այս աշխարհի,  
Գրաբատէն վերջ ցաւառիք:

Քալեր է ան դարերով,  
Ճամբաներէն երազին,  
Անասունէն մինչև մարդ,  
Մարդէն Աստուած անդրագոյն:  
Ապշուպեր է հուրն անմար,

Երկիններու բովերէն:  
Աստուած իրեն պէտք ունի  
Կը մըսածէ մարդը նոր,  
Մարդն ապստամբ ու կամոտ,  
Որ կը լուրջով մ'անսովոր  
Կ'ուզէ ինքզինքը կռել,  
Կենալ հպարտ ու խորոխ  
Տիեզերքին դէմ առ դէմ:

Մարդն ու Աստուած անձկանօք,  
Ըմբիւներու պէս երկու,  
Պայտարեք են դարերով,  
Մին միւսը որսալու  
Մըսադուրքեամբ ու սիրով:  
Ճակատագրի համբայէն՝  
Քալեր են միտք անվտան,  
Իրացնելու փառքեան  
Խորհուրդը մեր դարերուն,  
Նոյն սեղանին վըրայ սուրբ,  
Արիւն - գինի, մարմին - հաց,  
Սերունդներուն անօթի:  
Որպէսզի նոր հըրաւում  
Հոգիներուն մէջ կարի  
Մանանան մեր օրերուն:  
Մանուկ, պարման, ծերունի,  
Ունենան խաղ, սէր ու հաց,  
Յեղանէն այս աշխարհին:  
Մարդն ապիրտ ու բռնառ  
Արդարութիւնն 'քէ կ'ուզէ,  
Թող հաւասայ, լայ, սուզուի  
Խորը սիրոյն Աստուծոյ,  
Որ գինն է սուրբ միութեան  
Մարդը մարդուն առընչող:

ԵՂԻՎԱՐԴ



## Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Օր մը այս արեւը պիտի ա՛լ չըծագի,  
Պիտի ա՛լ չըսես ձայնը այս կոչնակի,  
Հեռասանի զանգերն հոգիդ պիտի չորրեն,  
Ունայնութիւնն պիտի վայէ յաւերժօրէն:

Ա.Եուն է համաժամած ...  
Մըսիս մէջ բու մը թառած  
Կը վայէ անվերջօրէն՝  
Երազին վըրայ մեռած:

Ա.Եուն է հոգիիս մէջ ...  
Ո՞վ Յոյսին լոյսերն մարած  
Կը դարձնէ կեանքն էջ առ էջ՝  
Ոչինչին նայուածքն յառած:

Վերբերէս մէկ-մէկ ծաղիկներ բուսան,  
Վերբէ մ' կարմիր վարդ, ուրիշէ մ' շուշան,  
Մեխակ, մանուշակ, յակիկնք ու նարկիզ.  
Մարդիկ բոյրն առին, վերբը չըսեսան:

Վերջին Երազն ալ մեկնեցաւ անդարձ,  
Կանչերն հոգեթով լըռեցին յանկարծ,  
Ունայնութիւնը կը հիստ ուսայն,  
Պատրանքը դամբան կ'երթայ ուսամբարձ:

Կիսագիտակ ներկայութեամբ մ'անըրջային,  
Մաս կազմէի արեւոյսի շող ու շողին,  
Մաս կազմէի ես թախծալի մըթընճաղին,  
Ու զեփիւռին մէջ շարական շրջընջայի:

Չըլլային եթէ տառապանքն ու մահ, ցաւ ու սիրոյ վէրբ,  
Պիտի չըլլային ոչ արուեստ, ոչ երգ,  
Ոչ հոգու թըռիչք՝ կատարներ անհաս, ոչ երազներ պերն ...  
Պիտի՛ յաւէտ տիւր Չանձրոյթը ըսերջ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ց Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

Աւարայրի լուսանակաս հերոսներ,  
Ձեր արնագեղ յիշատակին դէմ նորէն  
Հոգիս պայծառ հիացումով է կանգներ,  
Բայց ձեր մռայլ, դառնագածան օրերէն

Պառնագոյն չէ՞ մեր օրերուն սա անդէմ  
Մեր շուրթերուն մասուցած մուրն ու լեղին,  
Մինչ ձեր կամփի առողջ, ուժեղ պասին դէմ  
Կը փերէին հիւանդ նետերն ոտխին:

Երանելի ժամանակներ, իրաւ, ուր  
Նիւթի, փառփի երկրպագու մարդոց ֆով  
Ամէնուրեք կային պայծառ հաւատով

Մարդեր, օրոնք իրենց արիւնը մահուր  
Քափելով վեհ նպատակի մ' ի խնդիր  
Կը լուային աշխարհի մեղքը զազիր:

## Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Ապագան որքան մռայլ ու ահաւոր ինձ թըլի,  
Գեռ կը մնամ ես գերին իր հմայփին անխնաց.  
Սիրսս նայն խենթ սրովով խօլ մտքիս հետ կը կռուի  
Ամէն անգամ ափսոսայ երբ օրերուն վրայ մեկնած:

Գուցէ ներկան սալ մարմին չկարհեայ երազիս,  
Ներկան՝ սօգոյն, անծայիտ, իր խոստումին դրուժան.  
Այլ ապագան՝ լուռ ու կուղպ, գեռ կը մոգէ այսօր զիս.  
Լաւ է ապրիլ բայց այսպէս, մնալ Յոյսէն անբաժան:

Գ. Ճ Ա Ր Տ Ա Ր

# ԳՐԱԿԱՆ

## Ա Ն Կ Ա Պ Խ Ո Ղ Ե Ր

Ամէն ժամանակներու հանճարեղ իմաստասէրներու և օրէնսգէտ փիլիսոփաներու բանաձևած բուրբ ճշմարտութիւններէն գերիվեր, անոնց մէջ գրեթէ եզական կայ ու կը մնայ կեանքի խորունկ փորձառութենէ բխած խօսքը շրջից մեծ իմաստունին, որ ամենէն աւելի բախար ունեցած էր վայելելու պատրոզ հաճոյքները այս անցաւոր աշխարհին. «Անայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է»:

×

Մի կաշկանդեր հոգիդ շղթաներովը բիրտ նիւթին: Արգիլէր անոր թռիչքը՝ ոգեկան աշխարհի մը երանական ոլորտները գէպի: Բուժաներ զայն կիրքովը առելութեան ու նախանձին, ցաներ անկէ ներս սերմերը մախանքին ու թշնամութեան, ու անկէ պտուղ քաղելու չափ ըլլար անմիտ: Ու երջանկութիւնը քուկդ կարենալ ընելու չափ ծանծաղամիտ: Ինչպէ՞ս մեր հոգին աշնանահար ծառի մը նման մերկ ու անպտուղ վերադարձնենք Անոր՝ սրմէ ստացած էինք զայն իբրև աւանդ, բեղմնաւորելու ու բազմապատիկ արդիւնք տալու անհուն կարողութիւններով օժտուած:

×

Ի՞նչն էր որ իբրև արժէք տեսար մարդոց առաքինութիւններէ մերկացած հոգիներէն ներս և ուղեցիր որ ընդօրինակեմ: Պատիւն ու պարկեշտութիւնը. բայց չէ՞ որ վաճառքի էին հանուած անոնք հրապարակներու վրայ այնքան գունկօրէն, փոր մը հացի փոխարէն: Հեղութիւնն ու անկեղծութիւնը. բայց չէ՞ որ միամտութիւնն էր մերօրեայ հոժա-

նիշը անոնց: Ներօղտմութիւնը. բայց չէ՞ որ նիւթն ու մետաղը դաւանեցան միակ աղբիւրը բարութեան ու անոնց հանդէպ իրենց սէրը գլխց-անցաւ սահմանները պաշտամունքին: Հանդուրժողութիւնն ու համբերութիւնը. բայց չէ՞ որ խոշընդոտ մըն էր ան լուկ իրենց վաւաշտա կիրքերուն ու անասնական բնագոյններուն գոհացման ճամբուն վրայ:

Ի՞նչն է որ իբրև արժանիք կը կարծենք զամբ ըլլալ մարդոց հոգիէն ներս: Սուան ու կեղծի՞քը, խարդախութիւնն ու քսութիւնը, զորս իրենց հոգևոր դրամագլուխը ըրած ըլլալուն համար սոնքացողները լեզէոն կը կաղմին: Չորս զանոնք իրենց հզօրագոյն գէնքերը ըրած ըլլալու փիլիսոփայութիւնը գերագոյն իմաստութիւնը կը դաւանին կեանքին, Ի. դարու կեանքին, իրենք իսկ հաստատելով այսկերպ չարիքին ամենակալ տիրապետութիւնը մերօրեայ մարդոց հոգիներուն վրայ: Չարին դէմ չար ըլլալ: Չարիքը չարիքով փոխադարձել: Ինչ որ շատ պարզօրէն կը նշանակէ աշխարհի երեսին գործուած ոճիրները, բարոյական թէ՛ նիւթական, կրկնապատկել: Բայց ե՞րբ է որ կրցած է մարդը չարիքով յաղթել չարիքին: Ե՞րբ է եղած որ սեխն վրայ սե քսուելով ճերմակ գոյնն է յառաջ եկած. աղաք մաքրելու կերպը անոր վրայ ուրիշ աղա ցանե՞լն է միթէ, կամ աղի ջուրը անուշցնելու պայմանը մէջը վերըստին աղ լեցնե՞լը:

×

Ամէն մարդ քիչ թէ շատ չափով բռնուած է տեսանելի ու անմիջական եղող՝ քան ապագային իրազօրձուելիք, թէկուզ ստուգապէս անհերքելի, արժէքներուն առաւելագոյն կարեւորութիւն ընծայելու տկարութեանէն: Ասով բացատրելի կը դառնայ մարդերուն անօտման հետաքրքրութիւնը հանդէպ նիւթին ու հոգածութիւնը հանդէպ անով պայմանաւոր արժէքներուն, մեր Փիղիքին ու անով պայմանաւոր աստուոր կեանքին, ի հեճուկս մեր հոգիին ու անոր համար սահմանուած կեանքին, թէկուզ առաջինը հունաւոր

ըլլայ ու վաղանցուկ, իսկ երկրորդը՝ մնա-  
յալն ու յաւերժական: Երկրորդին հան-  
դէպ մեր անուցած անհաւատութեանն կամ  
անսր ստուգութեան մասին մեր յայտնած  
կասկածներէն աւելի ա՛յս է պատճառ՝ որ  
մենք «նոզուով չափ» փարինք այս աշ-  
խարհի կորնչական արժէքներուն ու ան-  
ցաւոր վայելքներուն:

Գիտեմ թէ պիտի ուզես ընթանալ  
մարդոց մեծամասնութեան քալած ճամ-  
բէն, նոյնիսկ եթէ քարքարուտ ըլլայ ան  
և փուշերով ցանցնուած, ու պիտի հեռու  
փախչիս նեղ այն արահեանէն՝ ուրկէ «սա-  
կաւ ընարեալները» միայն կը նախընտրեն  
անցնիլ, թէկուզ եզերուած ըլլայ ան ե-  
ղեմական ծաղիկներով ու թաւշանման  
բոյսեր ծածկեն յատակը անսր:

Որովհետեւ գիտեմ թէ բոլորս ալ  
բռնուած ենք քիչ թէ շատ «նոստանքէն  
քչուելու» տկարութեանէն, նախընտրելու  
չափ բազմամարդ դժոխքը անմարդարնակ  
արքայութեանէն:

×

Դժուար թէ երջանկութիւնն ու եղ-  
բայրսիրութիւնը տիրապետեն երկրիս  
վրայ, եթէ նոյնիսկ արդարութեան ու  
հաւասարութեան սկզբունքներով ղեկա-  
վարուի մարդկութիւնը ու պատերազմ  
բառը ամփոփուի բռնարաններու կողքէն  
նեղս: Վասնզի բախտ ըսուածը նոյն ժպի-  
տով չի դիմաւորեր ամէնուն ու վասնզի  
Աստուած իր քանքարները հաւասարապէս  
չէ բաժնած մարդերու միջև: (Ուրիշ հարց՝  
մարդկութեան շահած ծով բարիքները  
նախախնամութեան այս գերազանցօրէն  
իմաստուն կարգադրութեանէն): Արուի ու  
էգի, յաղթանդամի ու տկարկազմի, գե-  
ղեցիկի ու տգեղի (յատկապէս իգական  
սեռին մօտ), ուշիմի ու բթամիտի բնա-  
ծին տարբերութիւնները բաւական են  
մարդոց միջև ստեղծելու նախանձի զօ-  
րաւոր զգացում, ինչպէս նաև դժգոհու-  
թիւն ու արտունջ, եթէ ոչ իրենց նման-  
ներուն՝ զէթ Աստուծոյ նկատմամբ, որ  
այդպէս է անօրինած իրենց համար: Լոկ  
կրօնական դժացումն է ու ճշմարիտ քրիս-  
տոնէական ոգին՝ որ կը մղէ մարդս ան-

արտունջ համակերպելու իր ճակատագրին,  
ու միշտ բարիք մը նախատեսելու Տիրոջ  
այդգեկերպ անօրինումին մէջ:

Ուրեմն, զո՛ր եղիք Աստուծոյ քեզի  
տուածէն: Դժգոհութեանն ու արտունջէն  
մ'չ սք բան մը շահած է երբեք, մինչ  
քիչ չէ թիւը անոնց՝ որոնք իրենց ունե-  
ցած քիչն ալ կորսնցուցած են անոր յարգը  
չգիտնալէն ու անտեղի որքան ապիմաստ  
արտունջէն: Այլ գիտցիր թէ միակ կերպը  
ունեցած քիչդ բազմապատկելու զայն քան  
է, սրտանց ու անսակարկելիօրէն, յօգուտ  
այդ շնորհքէն անմասն ու այդ բարիքին  
կարօտ քու նմաններուն: Գիտցիր հաշտ  
ըլլալ այս վարատօտալ ճշմարտութեան  
հետ, ու մի՛ մոռնար երբեք խօսքը հե-  
թանոսաց առաքեալին. «Լաւ է տալն քան  
զաւնուլն»:

×

Գեղեցկութիւնը, դժուար սահմանելի  
բառ մը ինքնին, յարաբերական վիճակ  
մըն է: Ահա թէ ինչու մենք կը յաւակ-  
նինք գտած ըլլալ զայն առաւելագոյն  
չափով մեր սիրած էակին ինչպէս իրին  
վրայ: Ահա նաև թէ ինչու մենք քիչ ան-  
գամ կը յաջողինք անկողմնակալ ըլլալ  
մեզի բուռն կերպով սիրելի կամ բուռն  
կերպով ատելի մարդոց հոգեպատկերը  
գծելու ատեն, չափազանցելով առաջին-  
ներուն արժանիքները կամ վերագրելով  
անոնց արժանիքներ՝ որոնցմէ անմասն են  
բոլորովին, ու անհունօրէն բազմապատ-  
կելով զոյ կամ կարծեցեալ, վիճելի թե-  
րութիւնները վերջիններուն: Սիրոյ ինչ-  
պէս ատելութեան նահանջումով՝ իրենց  
իսկութեանը մէջ կ'երևին ֆիզիքական  
թէ հոգեկան բոլոր թերութիւնները կամ  
առաւելութիւնները, նկարագրի բացասա-  
կան թէ դրական բոլոր գիծերը մեր շուր-  
ջիններուն:

×

Գիտցիր որ կեանքի մէջ քիչեր, մեծ  
հոգիներ միայն պիտի հանդուրժել քեզ  
սեսնել բարձունքներու վրայ, ու շատեր  
պիտի աշխատին, կարելի բոլոր միջոց-

ներով, քեզ վար բերել արիւնեւով շահուած այդ դիրքէն, փոխանակ իրենց սեփական սյոթերով հասնիլ փորձելու նոյն այդ կատարին: Մարդերէն շատերու հոգիներուն մէջ սրջացած ծուլութիւնն ու նախանձոտութիւնը դաշնակցած են յաճախ փառամոլութեան հետ, որը իր յագուրդը կը գտնէ բարձրացումի կարճ ու դիւրին ճամբուն ընտրութեամբ: Արդ, մ'ըր դիւրին է կեանքի մէջ, բարձրանալը՝ թէ բարձրացածին քար նետելը, զայն գլորելու համար իրենց սաքերուն առջև, յետոյ, զայն պատուանդան ըրած, իրենց գեանաքարչ ստորնութենէն գէթ քայլ մը բարձրանալու համար ամենայն հնչտութեամբ, յագուրդ տալով այդկերպ իրենց հոգիները կրժող նախանձին:

Զախորդութեան մը պարագային, քեզ կարեկցողներէն կամ հետզ լացողներէն անհամեմատօրէն մեծ պիտի ըլլայ թիւը վրադ խնդացողներուն: Իսկ յաջողութեան մը պարագային՝ ճիշդ հակառակը: Որովհետև ձախորդութեանը ու անկումիդ մէջ մարդիկ պիտի տեսնեն ամենէն արագ կերպն ու ասպնով սանդուխտ՝ զիրենք մեծութեան առաջնորդող: Մինչ քեզի հանդիպած ամէն մէկ յաջողութիւն՝ կորսւած հրանութեան մը կսկիծը լսի պիտի առաջացնէ սրտերուն խորը անոնց:

×

Մի՛ մոռնար որ թիրութիւններուդ խոչորացոյցով նայողները յաճախ իրենք քեզմէ առաջ ու աւելի բռնուած են նոյն այդ մտութեանց ճիրաններէն: Որոնք իրենց նկարագրին ազեղ ու սկար կողմերը ստուերի մէջ ձգելու ասպնովագոյն միջոցը գտած ըլլալ կը կարծեն ուրիշները զրպարտելով, անոնց նկարագրին մէջ անգոյ կամ փոքր չափով գոյ նոյն այդ

ազեղութիւններուն ու սկարութիւններուն համար: Գիտցիր որ նախանձոտութիւնդ երեսիդ զարնսողներուն սիրար յորդ է նոյն այդ չար զգացումով, քեզ բարկացոտ կոչողներուն սրտերը բոցավառ են բարկութեան կրակով ու անպարկեշտութիւնդ կասկածի ենթարկողները զայդ կ'ընեն մղուած իրենց անպարկեշտ արարքները պարակելու անզօրութենէն:

×

Քիչերուն է արուած կամքն ու պատեհութիւնը բարձունքներ նուաճելու, և աւելի քիչերուն՝ այդ կատարին վրայէն աշխարհին տուած փառքն ու բարիքը արհամարհելու, առնուազն անտեսելու իմաստութիւնը, ինչպէս նաև այդ մեկուսացումին, մարդերու գոհակութենէն ազատագրուած այդ միջավայրին մէջ իրենք զիրենք Աստուծոյ — և երջանկութեան — աւելի մօտ զգալու հրանութիւնը:

Առանձնութիւնն ու լքուածութիւնը յաճախ բաժինն է եղած իրենց կրողը նուաճած ու բարձունքներու հասած մարդերուն: Որոնք գիտեն սանձահարել իրենց յոռի բնազդներն ու կիրքերը, և ընդոտնել, գէթ արհամարհել ամբոխներէն պաշտուած կուռքերը: Որոնք ունին փոյթն ու ջանքը, և գիտեն գաղտնիքն ու արուեստը՝ մարդերէն աւելի (և երբեմն անոնց իսկ փոխարէն) Արարչին հաճելի գառնալու:

Օ՛, կարծր միամտութիւնը անոնց՝ որոնք կը ճգնին հասնիլ կատարը երանութեան լերան՝ բայց ո՛չ մէկ յոգնութիւն զգալ իրենց ծունկերուն: Որոնք կ'ուզեն քաղել զեղատեսիլ ու հառաւէտ վարդեր՝ կեանքի անձայրած իր անդատտանէն, առանց երբեմն զգալու փուչերուն խայթոցը իրենց մտանկերուն վրայ:

(Շար.՝ 2)

Գ. ՃԱՐՏԱՐ



# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՍՏԵՓԱՆՈՍ ԿՅՂ. ԱՂԹԱՄԱՐԱՅ

(1608 - 1649)

Ստեփանոս Կաթողիկոս Աղթամարայ պաշտօնավարած է աւելի քան քառասուն տարիներ, ըստ յիշատակարաններու, գրուած երկու տասնեակ ժամանակակից անձերէ, որոնց վկայութիւնները կ'ուզենք արձանագրել նախ՝ ժամանակագրական կարգով:

1. - 1604, Սահակ Գրչէն.

«Եւ մերոյ աթոռակալի,  
և առաջնորդն է Ս. Կարապետի.  
Կղզընացեալ ի մեր ծովի,  
Ստեփանոս վարդապետի» - Յիշատ. ԺԷ. Դարի, Ա. Հատոր, էջ 142:

2. - 1608, Կիրակոս Գրչէն.

«Ի հայրապետութեան տեառն՝ Աղթամարայ նորընծայ Ստեփաննոս Կաթողիկոսին. Տէր Աստուած պահեսցէ զնա անսասան ի պարծանս մեր» - Բանբեր Մատենադարանի, թիւ 12, էջ 254: Յիշատ. ԺԷ. Դարի, Ա. էջ 309:

Նկատելով որ Ամիրազիզի սրբին Գրիգոր Գրիչ 1611ին Աւետարան մը օրինակած է «Ի հայրապետութեան տեառն Գրիգորիս Կաթողիկոսին Աղթամարայ» (Յիշատ. ԺԷ. Դարի, Ա. էջ 430), նարկ կը դառնայ ենթադրել թէ երիտասարդ Ստեփանոսը ունեցած պէտք է ըլլայ աթոռակցի հանգամանք:

Գրիգորիս Կաթողիկոսի յիշատակութիւնը 1617 թուին (Յիշատ. ԺԷ. Դարի, Ա. էջ 633) տարակուսական է: Եթէ ՌԾԶ տարեթիւը ճիշդ է, 1607 թուականը յարմար կու գայ արդարեւ:

Այդ յիշատակարանը, Բուենց գիւղի Բաղդասար քահանայի գրչէն՝ շահեկան է իր չափաբերեալ շարադրութեամբ, որ օրինակ հանդիսացած է հետագայ գրիչներու: Ահաւասիկ ուշադրութեան արժանի հատուածը.

«Ընդ հովանեաւ Սուրբ Գէորգեան,  
Կաթողիկոս Աղթամարայ,  
տէր Գրիգորիսն էր սրբազան,  
վարուքն սուրբ և առաքինի  
անուանակցին իւրոյ նման,  
թուին Սրբոյ Լուսուորչին,  
որ հայրապետ նստաւ յԱւղան:  
Հայցեմք յապինիադ Տեառնէ  
անփորձ մնայ և անսասան,  
չըքեղ փառաք նա զարդարի,  
ընդ վարդապետս երկստասան...»:  
- Յիշատ. ԺԷ. Դարի, Ա. էջ 633:

Նոյն Բուենց գիւղը, 1621ին գրուած ուրիշ յիշատակարան մը, Պարսամ Գրչէն, Ստեփանոս անունը ունի փոխան Գրիգորիսի:

«Ընդ հովանեաւ Սուրբ Գէորգեան,  
Կաթողիկոս Աղթամարայ  
տէր Ստեփանոսին սրբազան,  
վարուքն սուրբ և առաքինի»:  
Շարունակութիւնը կը պահուի. կախման կէտ դրուած է լոկ. - Յիշատ. ԺԷ. Դարի, Բ. Հատոր, էջ 20:

Աւելի ուշ, 1638ին, Պահանէս քահանան ևս կը կիրարկէ նոյն բանաձևը.

«Ի դուռն Սուրբ Գէորգեան...  
Կաթողիկոս Աղթամարայ  
տէր Ստեփանոսն էր սրբազան,  
վարուքն սուրբ և առաքինի  
անուանակցին իւրոյ նման,  
Սուրբ Ստեփանոս էր առաջին,  
որ Քրիստոսի համար քարկոծեցան:  
Հայցեմք յապինիադ Տեառնէ  
անփորձ մնա և անսասան...»:

Այստեղ ալ շարունակութիւնը յապուսուած է կախման կէտերով. - Յիշատ. ԺԷ. Դարի, Բ. էջ 733:

Վերոգրեալ նմանութիւնները կու գան հաստատելու թէ Գրիգորիսին յաջորդած է Ստեփանոս, բայց թէ երբ վախճանած է առաջինը՝ կը մնայ անյայտ:

3. - 1614, Գրիչ Սահակ Արեղայէն.

Ա. - «Ի յառաջնորդութեան մերոյս աթոռոյ տէր Ստեփաննոս Կաթողիկոսին» - Յիշատ. ԺԷ. Դարի, Ա. էջ 529:  
Բ. - 1615, նոյն Գրչէն.

«Ի Կաթողիկոսութեան աթոռոյս մեր Աղթամարայ սրբազան Ստեփաննոսի» - նոյն, էջ 551:

4. — 1616, Ոսկերիչ Յովհաննէս Գրչէն.  
«Այլ և հայրապետութիւն Աղթամարայ տեառն Ստեփաննոսի» . — Յիշտ. ժէ. Դարբի, Ա. էջ 577:

5. — 1618, Աւրնդանցի Կիրակոս Գրչէն.

Ա. — «Եւ ի մերոյս Կաթողիկոսութեան Աղթամարայ տեառն տէր Ստեփաննոսին» . — Յիշտ. ժէ. Դարբի, Ա. էջ 647:

6. — 1618, Գրիչ Յակոբ Երէցէն.

«Ի Կաթողիկոսութեան Աղթամարայ տեառն Ստեփաննոսին» . — Յիշտ. ժէ. Դարբի, Ա. էջ 654:

7. — 1619, Մարտիրոս Գրչէն.

Ա. — «Ի հայրապետութեան Աղթամարայ տէր Ստեփաննոս Կաթողիկոսին» . — Յիշտ. ժէ. Դարբի, Ա. էջ 693:

Բ. — «Ի Կաթողիկոսութեան հայկազեան սեռի տեառն Ստեփաննոսին Աղթամարեցոյ» . — Յիշտ. ժէ. Դարբի, Բ. էջ 18:

8. — 1620, Գրիչ Ստեփաննոս Քահանայէն.

«Ի հայրապետութեան Աղթամարայ տեառն Ստեփաննոս Կաթողիկոսին» . — Յիշտ. ժէ. Դարբի, Ա. էջ 723:

9. — 1621, Գրիչ Պարսամ Քահանայէն զոր մէջ բերինք վերև:

10. — 1621, Պօղոս Գրչէն.

«Ի յառաջնորդութեան մերոյս աթոռոյ փոքր Ստեփաննոս Կաթողիկոսի» . — Յիշտ. ժէ. Դարբի, Բ. էջ 39:

11. — 1622, Գրիչ Խիզանցի Կարապետ արեղայէն.

Ա. — «Ի հայրապետութեան Աղթամարայ տեառն Ստեփաննոսի» . — Յիշտ. ժէ. Դարբի, Բ. էջ 73:

Բ. — 1623, նոյն Գրչէն.

«Եւ Աղթամարայ տէր Ստեփաննոս Կաթողիկոսի ամենայն Հայոց» . — Յ. Չեռ. Ս. Յակոբեանց, Գ. էջ 599:

12. — 1626, Զաքարիա Գրչէն.

Ա. — «Ի հայրապետութեան Աղթամարայ տեառն Ստեփաննոսի» . — Յիշտ. ժէ. Դարբի, Բ. էջ 216:

Բ. — 1628. — «Եւ ի մերոյս Կաթողիկոսութեան Աղթամարայ տեառն տէր Ստեփաննոսին» . — Նոյն, էջ 303:

Գ. — 1630. — «Եւ ի մերուծս Աղթա-

մարայ Ս. Խաչի Ստեփաննոս Կաթողիկոսի» . — Նոյն. էջ 380:

13. — 1630, Թացուեցի Յոսէփ Գրչէն.

«Եւ Աղթամարայ Կաթողիկոսին՝ տէր Ստեփաննոսին» . — Յիշտ. ժէ. Դարբի, Բ. էջ 387:

14. — 1632, Գրիչ Նիկողայոս Քահանայէն.

«Եւ մերոյս Աղթամարայ տեառն Ստեփաննոսի, որ էրարձ զկրճիմն անհնազանդութեան, եղև հլու և հպատակ լուսանկար գրիգորաշէն Սուրբ Էջմիածնայ և էառ օրհնութիւն Լուսաւորչին ի գլուխ իւր և ի ծոց» . — Յաւանք Զեռարաց Մշոյ, էջ 69: Նաև Յիշտ. ժէ. Դարբի, Բ. էջ 494:

15. — 1635, Զաքարիա Գրչէն.

«Ի յառաջնորդութեան Աղթամարայ տեառն Ստեփաննոս Կաթողիկոսին ամենայն Հայոց» . — Յիշտ. ժէ. Դարբի, Բ. էջ 620:

16. — 1635, Գրիչ Թուծայ Քահանայէն.

«Ի Կաթողիկոսութեան հայկազեան սեռի տեառն Ստեփաննոսի Աղթամարցոյ» . — Յիշտ. ժէ. Դարբի, Բ. էջ 622:

17. — 1635, Գրիչ Աւետիս Երէցէն.

«Եւ Աղթամարայ Կաթողիկոսին՝ տէր Ստեփաննոսին» . — Յիշտ. ժէ. Դարբի, Բ. էջ 626:

18. — 1636, Յազմեցի Յովսէփէն.

«Եւ ի մերոյ աթոռոյ Կաթողիկոսութեան կրօնոյ Աղթամարայ տեառն Ստեփաննոսի» . — Յիշտ. ժէ. Դարբի, Բ. էջ 664:

19. — 1638, Գրիչ Յոհան Քահանայէն զոր մէջ բերինք կանխաւ:

20. — 1640, Գրիչ Վարդան Քահանայէն.

«Եւ ի հայրապետութեան Աղթամարայ Ստեփաննոս Կաթողիկոսին» . — Յիշտ. ժէ. Դարբի, Բ. էջ 817:

Դարձեալ Աւրնդանցի Կիրակոս Գրչէն.

Բ. — 1640. — «Եւ ի մերոյս Կաթողիկոսութեան Աղթամարայ, տեառն տէր Ստեփաննոսի» . — Յ. Չեռ. Ս. Յակոբեանց, Ը. Հասար, էջ 282:

21. — 1649, Հիզանցի Յոհան Գրչէն.

Ա. — ի յաթոռակալութեան «Աղթամարայ տէր Ստեփաննոս Կաթողիկոսին» . — Յ. Չեռ. Ս. Յակոբեանց, Զ. Հասար, էջ 548:

TWO LEAVES OF ACTS IN THE PERKINS LIBRARY, DUKE UNIVERSITY

In his recently published *Catalogue of Mediaeval Armenian Manuscripts in the United States*, A. K. Sanjian describes a manuscript of the Four Gospels in the Perkins Library, Duke University, Durham, North Carolina(1). That Library also possesses two leaves of the Acts of the Apostles in Armenian which are described here(2). They were examined by the writer on the occasion of a visit to Durham in 1974.

DUKE UNIVERSITY

William R. Perkins Library

(Durham, North Carolina 27706)

Armenian MS. 2. TWO LEAVES FROM THE ACTS OF THE APOSTLES, 17TH CENTURY

*Physical Description.* Two leaves on vellum, in fine *bolorgir* script; 10 x 13.7 cms.; two columns each containing 26 lines of writing

(1) University of California, Near Eastern Studies, Volume 16n (Berkeley & Los Angeles: University of California, 1976), 643-650.

(2) The fragment is published by permission of John L. Sharpe III, Curator of Rare Books, William R. Perkins Library, Duke University, Durham, N. C.

on each page. Black ink and regular script of the type written in the 16th-17th centuries. The script of the lower part of column i and of column ii of folio 1r is notably smaller than the rest. The leaves are well preserved. The second has had the words "Armenian MSS no. 2" written on it.

*Text.* The text is the Acts of the Apostles as follows: folio 1 v 19:14-26; folio 2 r 27:44-28:10, folio 2 v 28:11-21. The leaves apparently come from a New Testament or a collection of New Testament books. The following chief variants from Zohrabian's edition were observed.

- 19: 4 ի 20] om
- 11 առնէր Ած.] Ած. առնէր ձեռն] ձեռս
- 12 մինչև] մինչ զի և քրտանէ] քրտանեն ախտիցն] աշխիցն
- 14 քահանայի] քահանայապետի
- 25 ժողովեացն] ժողովեաց
- 28: 6 դարձուցի] դարձուցեալ զքանս և] զբարբառսն
- 10 պատուով] պատուաք
- 11 երիս] երից
- 12 երկուս] երիս
- 17 զհրէից] զհրէիցն

MICHAEL E. STONE

Բ. — Ի Հայրապետութեան «Աղթամարա տեառն աէր Ըստեփանոսին»։ — Յ. Չեռ. Ս. Յակոբեանց, Է. Հատոր, էջ 276:

Այս յիշատակութեանց համաձայն, ան 1604ին վարդապետ էր, և առաջնորդ կառուցի Ս. Կարապետ վանքին:

1608ին նորընծայ Կաթողիկոս էր Աղթամարայ:

1621ին վկայուած է «վարուքն սուրբ և առաքինի», իր նախորդին՝ Գրիգոր Կաթողիկոսի նման: Նոյն թուին Պօղոս Գրիչ զինք կ'անուանէ «փոքր», թէ ինչո՞ւ, կը մնայ բացատրութեան կարօտ:

1623ին Կարապետ արեղայ իրեն կուտայ «ամենայն Հայոց Կաթողիկոս» տիտղոսը:

1632ին Նիկողայոս քահանան կը գրէ թէ Ստեփանոս Կաթողիկոս հպատակութիւն յայտնեց էջմիածնի [Մովսէս Տաթևացի] Կաթողիկոսին, և ստացաւ Լուսաւորչի օրհնութիւնը:

1635ին Ջաքարիա Գրիչ զինքը կ'որակէ «Կաթողիկոս ամենայն Հայոց»:

1638ին Գրիչ Յօհան Քահանան ևս կը կրկնէ «վարուքն սուրբ և առաքինի» ասացուածը:

Վերջին յիշատակարանը, ուր կը տեսնուի իր անունը, կը պատկանի 1649 թուին, բայց հիմ մը չկայ նկատելիւ զայն իբրև վախճանը իր պաշտօնավարութեան կամ կեանքին:

Ն. ԱՐՔ. ԵՈՎԱԿԱՆ

# «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱՐԱՂԱՍՈՒ ԵՒ ՅՈՎԱՍԱՓՈՒ»

Հայերեն Թարգմանութեան նորայայտ  
մի հնագոյն ընդօրինակութեան առիւ



Վաղ միջնադարի համաքրիստոնէական գրականութեան առաւել համբաւուած ու տարածուած հրկերից է «Բարաղամու և Յովասափու պատմութիւն»ը: Հեղինակն է համարուած ոմն Յովհաննէս կրօնաւոր՝ Երուսաղէմից, յօրինման ժամանակը՝ 11-րդ ար: Սկզբնագրի լեզուն առ այսօր ստուգապէս չէ ճշգրտւած. սանսկրիտերէն է, թէ՛ պահլաւերէն, ասորերէն . . . Յայանի է, որ Եւրոպա է ներթափանցել յունարէնի միջոցով: Իսկ յունարէնը . . . արդեօք ճիշդ է, որ վրացերէնից է թարգմանուած Եւթիմոս Իրեբացու կողմից ժկամ ժԱ. դարում: Դեռևս ճշգրտւած չեն ստորերէն, արարերէն, հայերէն և այլ թարգմանութիւններին առնչուած բնագրական, գրական, թարգմանական և բանասիրական բնոյթի շատ հարցեր: Այս առումով նշուած բնագրի հնագոյն մի ընդօրինակութեան ի յայտ գալն այսօր, անտարակոյս, ունի գիտական-բանասիրական շատ կարևոր նշանակութիւն:

Բնագրի բովանդակութիւնը հիմնականում հետեւեալն է. Հնդկաստանի Արեւելք թագաւորը վերջապէս ունենում է մի արուզաւակ, Յովասափ անունով: Համաձայն գուշակների վկայութեան, նա մեծ յաջողութիւնների էր հասնելու, սակայն ընդունելու էր քրիստոնէական կրօնը: Հակառակ հօր բազմաթիւ բարդ ու դժուարին արգելքներին, երբ նա ի վերջոյ շփոււմ է արտաքին աշխարհի և մարդկանց հետ, ծանօթանում նրանց կեանքին, կեցութեանն ու փորձութիւններին, ընկնում է ծանր խնդրանքների և մտածմունքների մէջ: Օգնութեան է հասնում նախախնամութիւնը: Բարաղամ անունով մի

ճգնաւոր, ծպտուած իրրև վաճառական, մի թանկագին «մարգարիտ» (Քրիստոսի վարդապետութիւնը) վաճառելու պատրուակով, մի կերպ մուտք է գործում պալատ: Իր նպատակադրութեան համապատասխան, նա հանդիպում է Յովասափին և հետևողական քարոզութեամբ, առակներով ու քրիստոնէական ջատագովական բանարուեստի միջոցներով նրան քրիստոնէայ հաւատքի է բերում և մկրտում:

Հայրը տեղեկանում է այս բոլորին, ստատիկ վրդովում է: Ամէն կերպ աշխատում է, որ Յովասափը վերադառնայ իր կրօնին: Բոլոր փորձերն էլ ձախողութեան են մատնուում: Վերջնական արդիւնքը լինում է այն, որ Յովասափը ոչ միայն չի սերանում Քրիստոնէութիւնը, այլև քրիստոնէայ է դարձնում իր ողջ շրջապատը, նոյնիսկ հօրը՝ Արեւելքին: Թէև կարգոււմ է թագաւոր, բայց հրաժարոււմ է, ուրիշին՝ Բարաղամին է յանձնում իշխանութիւնը: Ինքը դնում է որոնելու իր ուսուցչին՝ Բարաղամին, որը վաղուց հեռացել էր պալատից: Նրան գտնում է անապատում, ընդունում նրա վերջին խրատները: Բարաղամի մահից յետոյ, Յովասափը ևս մնում է անապատում 37 տարի, ապրում է խտակրօն, ճգնազգեստ կեանք, և ապա խաղաղութեամբ աւանդում հողին: Նրա աճիւնը փոռքով ու հանդիսաւորութեամբ թաղում են հօր՝ Արեւելք արքայի գերեզմանի մօտ:

Սոյն պատմութիւնը, հիմնական գծերի մէջ, սերտ ընդհանրութիւն ունի Բուդդայի կենսագրութեան հետ, միայն խորապէս և լայնօրէն քրիստոնէականացուած է բազմազան մանրամասնութիւններով, ընդարձակ ջատագովութեամբ, բարոյական ու կենցաղային խրատաբանութեամբ: Այս առնչութեամբ հարկ է նշել, որ բնագրագիտական տեսակէտից խիստ արժէքաւոր իրողութիւն է Բ. դարի յայն իմաստասէր Արիստիտեսին վերագրուած հանրայայտ Ջատագովութեան պահպանումը սոյն բնագրի մէջ, որն առանձինը նմանապէս վաղ միջնադարի

քրիստոնէական գրականութեան նշանա-  
կալից երկերից է համարուում (1):

«Պատմութիւն Բարազամաւ և Յովա-  
սափու» յիշեալ բնագիրը Միջնագարին  
միանգամայն հարազատ ու բնորոշ երկ է,  
ժամանակի ոգու և բարոյական ընկա-  
լումների խիստ ճշմարտացի արտայայ-  
տութիւնը: Բայց սիրուած ու տարած-  
ուած է եղել ոչ միայն իր կրօնաչառնչ  
բովանդակութեան համար: Այս պարագա-  
յին մեծ դեր ու նշանակութիւն է ունե-  
ցել նրա զեղարուեստական, միանգամայն  
վիպական կառուցուածքը, յուզականու-  
թիւնը, մեղծ, անմիջական արամադրու-  
թիւնը և պարզ ու աշխոյժ պատմելաձևը:

Պահպանուած են հայերէն թարգմա-  
նութեան երկու խմբագրութիւն՝ ընդար-  
ձակ և համառօտ: Վերջինս ընդօրինա-  
կութիւնները շատ են, որովհետև այն  
մուտք է գործել «Յայսմաուերք»ի մէջ  
և ըստ այդմ՝ բարձրացուել:

Վերոնշեալ նորայայտ ընդօրինակու-  
թիւնը(2), որի մասին է խօսք լինելու  
այստեղ, ներկայացնում է ընդարձակ  
խմբագրութեան բնագիրը:

Ընդհանրապէս հայերէն թարգմանու-  
թեամբ և յարակից հարցերով զբաղուել  
են Մ. Բրոսսէն, Յր. Կոնիքիբը, Ն. Մառը  
և Մեսրոպ Մազիսարոսը (Տէր-Մովսիս-  
եան): Այս առիթով մեզ հետաքրքրում  
են ի մասնաւորի վերջինս արդիւնքները՝  
հայերէն թարգմանութեան ընդարձակ  
խմբագրութեան բնագրի իր հրատարա-  
կութեան առնչութեամբ(3):

Մեսրոպ Մազիսարոսը հաստատում է,  
որ հայերէն համառօտ և ընդարձակ խըմ-

բագրութիւնների բնագրերի միջև կան  
զգալի տարբերութիւններ: Ոչ միայն հա-  
մառօք չունի ընդարձակից որոշ մասեր,  
այլև, հակառակը, ընդարձակը զուրկ է  
համառօտի որոշ հատուածներից: Թէև  
ենթադրոււմ է, որ հայերէն թարգմանու-  
թիւնը կատարուած է յունարէնից, բայց  
նաև այս երկուքի միջև էլ տարբերու-  
թիւնները քիչ չեն թէ՛ ըստ ծաւալի, թէ՛  
ըստ բովանդակութեան: Այս հանգամանքի  
մանրամասնութիւնները նրան այն հա-  
մոզման են բերել, որ Մ. Բուսոսնատի  
կողմից, 1832 թ., Փարիզի մէջ հրատա-  
րուուած յունարէն բնագիրը (Anecdota  
Graeca, Tom. IV) չէր կարող հայերէն  
թարգմանութեան հիմք ծառայել, բայց  
որոշ է, որ մէկ այլ. այժմ կարած, յու-  
նարէն բնագրի հիման վրայ է կատարուել  
հայերէն թարգմանութիւնը, այստեղից  
էլ՝ նրա մէջ առկայ բնագրական տարբե-  
րութիւնը յունարէնի համեմատութեամբ:

Սոյն բնագիրը Հայաստանում ծանօթ  
է եղել վաղ ժամանակներից, գոնէ ԺԳ.  
դարից, ինչպէս ցոյց է տալիս Վարդան  
Արեւելցու մէկ կարեւոր վկայութիւնը:  
Բայց Մ. Մազիսարոսի կարծիքով, սոյնը  
վերաբերում է համառօտին: Իսկ թէ՛  
նոր է եղել հայերէն թարգմանութիւնը,  
յայտնի չէ, հաւանաբար Ժ-ԺԲ. դարերի  
ընթացքում, կամ 850-1050 թուականնե-  
րին, ինչպէս ենթադրել է Յր. Կոնիքիբը:

Գիտականօրէն ինքնին շատ կարեւոր  
է բուն՝ ընդարձակ բնագրի հրատարակու-  
թիւնը՝ համառօտից որոշ հատուածների  
և Առաքել Սիւնեցու նոյն բնագրի մշակ-  
ման հետ համատեղ, մասնաւորաբար այն  
պատճառով, որ բնագրագիտական համե-  
մատական աշխատանքի օգտակար հնարա-  
ւորութիւն է ընծայում ընթերցող-մաս-  
նագէտին(4):

Համեմատական նման աշխատանք կա-  
տարելու առիթը մեզ էլ վիճակուեց: Ար-  
դիւնքը՝ հետաքրքիր ու շահեկան: Բայց  
նախ նորայայտ ընդօրինակութեան բուն  
ձեւագրի կարեւոր հանգամանքների մասին:

(1) Robert Lee Wolf, The Apology of Aristides  
— A Re-examination. Reprinted from "The Harvard  
Theological Review", Vol. XXX, No. 4, November  
1937, pp. 233 - 247.

(2) Այն սիրալոյսար մեզ է արամադրել  
վաստակաշատ բանասէր Նորայր Արքեպիսկ-  
օզարեանը, որին յայտնում ենք խորին շնոր-  
հակալութիւն:

(3) Նկարագրութիւն հոգևորական վարուց  
Յովասափու որդւոյ թագաւորին Հնդկաց-  
դրեալ՝ Յոհաննու Կրօնաւորի. աշխատասիրեց՝  
Մեսրոպ Վարդապէտ Տէր-Մովսիսեան, Վարդաշա-  
պատ, 1897:

(4) Տե՛ս մանրամասն, Մեսրոպ Վարդապէտ  
Տէր-Մովսիսեան, նշուած աշխատութիւնը:

Չեռագիրը պատկանում է Սրբոց Յակոբեանց Մատենադարանին: Կրում է 3190 թուահամարը: Ժողովածու է: Ընդօրինակուած է «ընդ հովանեաւ Սուրբ Թորոս կոչեցեալ, անուամբ՝ Դերձկի, անպատի» (Կիլիկիա<sup>6</sup>), հաւանաբար ԺԳ. դարու առաջին տասնամեակներին, թերեւ՝ քիչ աւելի վաղ (ըստ հնագրական վիճակի): Գրիչը՝ Կարապետ կրօնաւոր, և մասամբ՝ Գրիգորէս սարկաւազ: Նախագաղափար օրինակը արամադրել է Թէոդոսեպիսկոպոսը՝ «հոհտոր գրակարգաց»: Գրութիւնը՝ միասին, խոշոր բոլորգիր, անկանոն ու անհաւասար: Նիւթը՝ թուղթ, խունացած ու բամպակակալած: 548 էջ: Մանրանկարչութիւն, զարդագիր չունի: Սկզբից և վերջից թերի է, թերթեր են ընկել: Կիսամաշ է, տեղ-տեղ՝ ցեցակեր: Կազմը՝ կաշեպատ տախտակ (հետագայի): Ատառը՝ սպիտակ գծերով կապոյտ կտաւ: Վերանորոգուած է ԺԶ. կամ ԺԷ. դարում:

Բովանդակութիւնը. [Պատմութիւն Բարաղամու և Յովասափու] (1-157), Պատմութիւն Երանելոյն առն Աստուծոյ կամաւոր աղքատի ումեմն, որ վասն Քրիստոսի աղքատացաւ (157-171), Այլ կամաւոր աղքատ Ալիքսիանոս. վարք և ձգնութիւն Երանելոյն սրբոյն Ալիքսիանոսի (171-187), վարք Երանելոյն Քսենիփոյնի Սինկղիտոսի և Մարիամու և Յոհաննու և Արկադեի (188-209), Եւ քորոզէ սարկաւազն վասն հանգուցելոցն, և քահանայն մտե[ա]լ ի խորափիա, ընթեանու Հանգիստ կրանելոյն Յոհաննու (210-217), վարք Երանելոյն Յոհաննու կամաւոր աղքատացելոյ (217-230), Դաւթի փիլիսոփայի ասացեալ՝ Ներբողեան ի սուրբ խաչն Աստուածընկալ (230-253), Վկայարանութիւն սրբոյն Անդրէի առաքելոյն, որ Հարչարեցաւ ի պարտէզս յառաջ քան զմի կողացն, Դեկամբերի ամսոյ (253-279), ի մեծի ճրագալուցին տեառն Սեպերիանոսի Էմեսոյ կալի[ս]կոպոսի ասացեալ ի ծնունդն Քրիստոսի, ի սուրբ տեղիսն Երուսաղէմի (279-288), ի հետ տաղ՝ կոյս անպական Մարիամ սուրբ Աստուածածին . . . (289-290), Պատմութիւն երանելոյն Մակարայ և աստուա-

ծասէր ամիրային (291-365), Պատմութիւն վարուց Երանելի Հաւրն Մարկոսի, որ ի մոզոնաւ չափ մերձ ի դրախան րնակէր (366-378), Նորին Արքայի Եփրեմի ասացեալ՝ Յաղագս սեղծման մարդոյն և փոխելոյ յաստեացս յանանցն սրբոց և անսրբոց ի գործոց վրէժ. . . (378-383), Դարձեալ սրբոյն Եփրեմի՝ Յաղագս մեղաւորաց բաժանման ոգոցն, սաէ, ի մարմնոյն (383-387), Հարցումն և պատասխանիք սուրբ Հուր մերոյ Մակարայ և երիտասարդի միոյ տխմարի՝ վասն սեղեղ վարուց և ամենայն գործոց առաքինութեանց (388-409), Սրբոյն Եւսեբի Էմեսոյ կալիսկոպոսի՝ Յաղագս քառասնեակ պահոյց սրբոյ աղուհացից (409-416), Սրբոյն Յոհաննու իմաստասիրի Հայոց Կաթողիկոսի ասացեալ՝ Ի խրատ վարք (416-421), Իմաստութիւն և Խրատ Խիկարի՝ զպրի Սինեքերիմ[ս] արքայի և Ննուէի<sup>5</sup>) (422-469), Խաւաք Կամրասա[ս] Հայոց Կաթողիկոսի և Պիոսի Հովմ[ս] Հայրապետի (470-494), Երանելոյն Եփրեմի ասացեալ յԱռաջաւոր պահան ի մարգարէն Յունան և ի Ննուէ (494-509), Վկայարանութիւն Սրբոյն Կիւրղի կալիսկոպոսի երուսաղէմ[ս] Հայրապետի (509-521), Հարցումնք սրբոյն Բարսղի և սրբոյն Գրիգորի Սքանչելագործի, որ է հայրապետ և լոյս Հոռմայ, և նման Գրիգորի Աստուածաբանի պատմէր զթիւս և հաստատէր զհայք (521-540), Տեսիլ Սրբոյ Կուսին Մարիամոյ՝ մաւր տեառն Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի . . . (540-548):

Տեղի սղութեան և լրացուցիչ անհրաժեշտ գրականութիւն ձեռքի տակ չունենալու պատճառով, այժմ հնարաւորութիւն չունենք յատկապէս յիշեալ նորայայտ ընդօրինակութեան ընձեռած փաստական և բնագրական առեւտրների հիման վրայ հանգամանօրէն անդրադառնալու «Պատմութիւն Բարաղամու և Յովասափու» կարեւոր բնագրին առնչուող մեծ ու

<sup>5</sup>) Սոյն բնագիրը գիտական-բնագրագիտական առումով առաւել մեծ հետաքրքրութիւն ունի, որին անդրադառնալու ենք առաջին իսկ առիթով և յանձնելու ենք հրատարակութեան:

փոքր հարցերին<sup>(6)</sup>։ Կ'ուզէինք գէթ այսօր քանը յայտնած լինել, որ այն ուշագրաւ օգտակար բաւարար նիւթ տալիս է արժէքաւոր եզրակացութիւններ յանգելու համար։ Նախասենք, որ այն առկայ հնագոյն ընդօրինակութիւնն է և առայսօր հնագոյն համարուած էջմիածնի թ. 634 (այժմ Մաշտոցեան Մատենադարանի թ. 732) ձեռագրի ընդօրինակութիւնից (1322 թ.) առնուազն 100 տարուայ աւելի հնութիւն ունի։ Ինքնին շատ կարեւոր հանգամանք է լուրջ տարբերութիւններ ունի Մեսրոպ Մագիստրոսի հրատարակած ընդարձակ խմբագրութեան (վերոյիշեալ թ. 634 ձեռագրից) համեմատութեամբ թէ՛ ծաւալով, թէ՛ կառուցուածքով ու բաղձազան տարբնթերցանութիւններով։ Յաւելեալ ունի աւելի քան 800 ձեռագրական սող, մերթ՝ մէջ ընդ մէջ, մերթ՝ միտակաւոր տեղարաշխմամբ։ Նկատուած յաւելման այս պատկերը բնագրի աւելի նախնական, սկզբնական վիճակի արտացոլութիւն է և ոչ հետագայ պարզ միջամտութեան կամ յաւելագրութեան արդիւնք։ Նոյնպէս՝ կարեւոր իրողութիւն, առաւելապէս բնագրագիտական տեսակէտից։

Համառօտ խմբագրութեան հետ համեմատութիւնը ևս հաստատում է զգալի տարբերութիւնների առկայութիւնը. անհամեմատ աւելի մեծ ծաւալ ունի, որ ինքնին հասկանալի է, և այլ կառուցուածք ու բաղձաթիւ տարբնթերցումներ։

(6) Աւելի հանգամանալից ուսումնասիրութիւնն ու բնագրի հրատարակութիւնը թողնում ենք այլ առիթի։

Այս նոյնպէս ուշագրաւ ու շահեկան երեւոյթ է գիտութեան ու բանասիրութեան համար։

Տարակոյս չկայ, որ նորայայտ այս հնագոյն ընդօրինակութեան համեմատութիւնը մանուանդ յունարէն, սսորերէն, վրացերէն, արաբերէն թարգմանութիւնների հետ՝ միանգամայն գիտական արժէքաւոր արդիւնքների կը յանգեցնի, մեծապէս կը նպաստի հայերէն աւելի ստոյգ և նախնական բնագրի վերականգնման, առկայ թարգմանութիւնների փոխադարձ աւնչութիւնների և այլ յարակից հարցերի պարզաբանման։

Գիտական միանգամայն լուրջ արժէք է ներկայացնում բնագրի վերջում պահպանուած յիշատակարանը, որը հեղինակի Յօհան կրօնաւորի շատ սուղ վկայութիւնն է իր կողմից բնագրի յօրինման հանգամանքների մասին։ Միայն այստեղ է որոշակի աւոււմ, թէ Յօհան կրօնաւորը ոչ միայն Հնդկաստան է գնացել, տեսել է Բարաղամի, Յովասափի և Արենէրի գերեզմանները, այլև, որ ամենակարեւորն է, ինքն է գրել «զատուածահաճոյ վարս նոցա մի ըստ միողէ» (էջ 155)։ Հրատարակուած հայերէն բնագրերը շունեն այս արժէքաւոր ստոյգ հաստատումը։

Այսքանն էլ, կարծում ենք, բաւարար է համոզուելու, որ նորայայտ սոյն հնագոյն բնագիրը գիտական որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում ոչ միայն հայ բանասիրութեան համար։ Աւելի համոզիչ ու շահեկան կը զառնայ, երբ կարելիութիւն ունենանք հանգամանօրէն ուսումնասիրել այն և յանձնել հրատարակութեան։

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ



**ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ**

Ձ. — Վ Ա Ս Ն Պ Ա շ Ո Ց

Նորին Թեոփիլոսի, արի եւ քաջ վարդապետի, ասացեալ Վասն Պահոց<sup>1</sup>

Սուղորութիւն իսկ է վաճառականաց զի ի մի տեղի կուտեալ ժողովն զինչս մեծագինս եւ զանազանս, զորս եւ պիտանացուք իցեն մարդկան<sup>2</sup>, անդ վաճառեսցեն: Եւ որք գիտեն զսուղորութիւնն պատրաստութեան՝ զգինն պատրաստեն, զի յորժամ գայցէ ժամանակն վաճառելոյ<sup>3</sup> երթ իցեն անդ եւ գնեսցեն զոր ինչ ի պէտս լինիցի նոցա: Իսկ իբրև քակտի վաճառատեղն<sup>4</sup> եւ խափանեսցի վաճառն, եթէ քիւրապատիկ առաւել եւս գինս պատրաստեն, ոչ գտանիցեն ինչ անդ զի գնեսցեն, եւ թէ տեսանիցէ զոք եւ հարցանիցէ<sup>5</sup>, ոչ այլ ինչ լուէ ի նմանէ բայց միայն զայս որ ասէ. Ով մարդ<sup>6</sup>, միթէ ո՞չ գիտես զժամանակ վաճառոյն, եղաւ վաճառն ըստ ժամանակի սուղորութեան, զոր գնեսցին պատրաստեալքն, եւ գնացին ի վաճառել<sup>7</sup>:

Այսպէս եւ աստ պարտ է իմանալ յառուրս քառասներդաց պահոցս<sup>8</sup>, որպէս զյիմար կուտանացն լուաք, որք խնդրեցին զիւզն եւ ոչ գտին, եւ փակեցաւ նոցա դուռն առաջատին<sup>9</sup>: Եւ արդ, որպէս աւրինակեցաք զկեանս զայս<sup>10</sup>, ժամանակ սերմանելոյ, եւ զկեանսն զայն՝ ժամանակ հնձելոյ<sup>11</sup>, նոյնպէս եւ զժամանակ քառասներդաց<sup>12</sup> պահոցս սահմանեաց մեզ Աստուած, ժամանակ ապաշխարանաց, եւ զոր ինչ ի կենցաղս յայս ցրուեսցուք՝ ի կեանսն յայն ժողովեմք. այսպէս զինչ ի ժամանակս տարւոջն յանցանս<sup>13</sup> ժողովեալ եմք, ի ժամանակս պահոցս այս ցրուեմք՝ զղջմամբ եւ խոստովանութեամբ<sup>14</sup>. Եւ թեթեւեցեալ թեւաք թռուցեալ վերանամք անդ, ուր պսակադիրն է, եւ հատուցանէ իւրաքանչիւր ումեք, ըստ գործոց իւրոց:

Եւ արդ մի՛ զժամանակս ապաշխարութեան այնպէս վարեցուք, որպէս զայս ժամանակս ամաց եւ ամոց, եւ մի՛ համարս արկցուք<sup>15</sup> զառուրս պահոցն: Որպէս թէ թագաւոր ոք կապեսցէ զոք եւ արգելցու<sup>16</sup> ի բանտին առուրս չափով, պայմանս գիցէ նմա, եւ ապա արձակեսցէ զնա<sup>17</sup>: Եւ նա մինչ ի զնդանն իցէ<sup>18</sup>՝ տագնապեալ նեղի, մինչև հասանիցէ ի պայմանն ազատութեան: Այլ այնպէս յժարեցուք ի կապանս (եւ ի զընդան) այս պահոցս, իբրև ումեք ասիցէ թագաւորն թէ զայս Խ աւր պահոցս ապաշխարութեամբ կաց եւ ի տառապանս, յահ եւ ի տաղնապ, երկիւղիւն Աստուծոյ: Եւ ես<sup>19</sup> պարգևս մեծապատիւս շնորհեցից քեզ, եւ նա յուսով խոստմանն համբերեսցէ

Բնագիր Գ (էջ 573բ-580բ): Հմմտ. Ե (էջ 69ա-82ա): Ձ (= էջ 361-365), Գ (էջ 790ա-797ա):  
1 Հիցեալքի միջոց աղուհացիցն, Երանելոյն Թեոփիլոսի ասուածաբան վարդապետի ասացեալ, Գ:  
2 Ի մի տեղուոյ կուտեալ ժողովին, եւ ինչս մեծագինս եւ զանազանս, զոր եւ պէտս իցէ յայն մարդկան, Գ:  
3 վաճառոյն, Գ:  
4 Իսկ յորժամ քակեսցի վաճառն, Գ:  
5 Ձուցի՛ եւ թէ տեսանիցէ զոք եւ հարցանիցէ, Գ:  
6 Ձուցի՛ որ ասէ. Ով մարդ, Գ:  
7 Ի վայելել, Գ:  
8 Ձուցի՛ յառուրս քառասներդաց պահոցս, Գ:  
9 դուռն հարսանեացն, Գ:  
10 Ձուցի՛ զայս, Գ:  
11 հանդերձելոյ, Գ:  
12 Ձուցի՛ քառասներդաց, Գ:  
13 Ձուցի՛ տարւոջն յանցանս, Գ:  
14 Ձուցի՛ զղջմամբ եւ խոստովանութեամբ, Գ:  
15 որպէս զայլ ժամանակս տարւոյն, եւ մի՛ ի համարս ալրկցուք, Գ:  
16 Ձուցի՛ եւ արգելցու, Գ:  
17 Եւ առուրս չափով պայմանս գիցէ նմա եւ արձակեսցէ զնա, Գ:  
18 Ձուցի՛ մինչ ի զընդանն իցէ, Գ:  
19 Թէ զ Խ աւր աշխատութեամբ կաց եւ ի տագնապումն, եւ ես, Գ:

և ներեսցէ տառապանացն յաւժար կամօքն: Եւ թէ<sup>20</sup> այսպէս ընկալցուք զաւուրս<sup>21</sup> աւագ<sup>22</sup> պահօցս, և ելանելով ի սմանէ ոչ յաճախեմք ի շատակերութիւն և յարբեցութիւն, ի շնութիւն և ի պառնկութիւն, ի բարկութիւն և յերգումն, յանէծս և ի նախանձ, ի բամբասանս և յատելութիւնս, յոխակալութիւնս և յայլ ամենայն ազգի ազգի<sup>23</sup> աղտեղութիւնս, կարող է Աստուած զամենայն յանցանս, զոր ի մանկութենէ մերմէ գործեալ եմք, թողուլ և արդարացուցանել զմեզ:

Եւ թէ մինչև ցայտուր ժամանակի, որ մի(ն)ջինքն է աւագ պահօցս<sup>24</sup>, ոք գործեալ իցէ մեզս և յապաղեալ<sup>25</sup> յապաշխարհայոյ, սակայն յայսմ հետէ փութով ճգնեսցի և արդարացի: Եւ եթէ յայլ յապաղեալ՝ ի միւս այլ շարաթուն յայնմիկ<sup>26</sup> կարող եմք քաւել զամենայն յանցանս զոր գործեալ իցեմք. քանզի մարդասէր է Աստուած, և այնպէս ընդունի զեկեալսն<sup>27</sup> առ նա ի մեատասն ժամուն, իրրև զայնստիկ որ իցեն առաջին ժամուն:

Եւ զայս լսելով՝ մի՛ ասիցես թէ արարից զամենայն ժամանակօ զկամս մարմնայ իմոյ, կերայոյ և արբից և կատարեցից զցանկութիւնս մարմնայ իմոյ<sup>28</sup>, և յաւուրս ծերութեան գարձայոց և ապաշխարեցից. քանզի յանկարծակի գոյ մահ, և հասանի ի ժամուն<sup>29</sup>, յորում ոչ գիտենաս, և ի պահու, յորում ոչ իմանաս: Եւ այլ զի մահ<sup>30</sup> հաւասար հասանելոց է ծերոց և աղայոց: Բայց թէ յամենայն տարի Ա. մարդ մեռանէր, դեռ ևս պարտ էր ամենայն մարդոյ երկնչել և սարսել, վախենալ և դողալ<sup>31</sup> յանձնէ իւրմէ. և զինչ ասացից յամենայն տարի, թէ յԱզամոյ մինչև ցայտուր Ա մարդ մեռանելոց էր, պարտ էր ամենայն մարդոյ զմահ ի միտ ունել<sup>32</sup>:

Չոր տարինակ թագաւոր կուտեալ զբողում ամբսս ի մի վայր, և բողոք զուժեալ թէ մի ոմն ի ձէնջ սպանանելոց եմ, ո՞չ ապաքէն իւրաքանչիւր ոք յանձնէ իւրմէ դողայր և սարսէր<sup>33</sup>: Եւ զարձեալ ասէր թագաւորն<sup>34</sup> ընդ ամենայն ժողովն, եթէ ոք ի ձէնջ զայս ինչ լուսամբղութիւն<sup>35</sup> արասցէ կամ զայն, բողում և անբաւ պարգևս գասնիցէ ի թագաւորութենէս իմմէ: Ի՞չ ապաքէն ամենայն մարդ փոյթ եղեալ կատարելով զհրամանս<sup>36</sup> թագաւորին, զի առցէ զպարգևն անցաւոր, և վայելեսցէ անցաւոր մարմնովն զխոստմունս մարմնայն, որ այսաւր պայծառանայ իրրև զձաղիկ և վաղիւն ոչ է, և ոչ ևս երեւի տեղի նորա:

Իսկ եթէ որ խոստացաւն մահկանացու է, և որ ընդունելոց էին պարգևս, այնպէս քանս զնիցէ<sup>37</sup> տաքնապաւ առ ի կատարել: Իսկ արդ մեք զինչ պատասխանի տալաց եմք, որ խոստացողն Աստուած է, և խոստումն արքայութեանն երկնից անվախճանս: Եւ<sup>38</sup> այնքան առաւել բիւրապատիկ պայծառ(յ)գոյն է վոյելումն կենաց, այն քան զանցաւոր կենացս այս, որչափ լոյս արեղականն քան զլոյսս զիշերոյն:

Արդ եթէ ցուցանէր քեզ թագաւոր տուն մի վատակաթիւք և գէճ, մութն և խաւար և ժահճոտ, այլ և ցուցանէ զսպիկեղաւծ<sup>39</sup> զարպասն իւր, և զայլ ամենայն վայելումն իւրոյ արքայութեան, և ասէր քեզ թէ՛ երթ կաց<sup>40</sup> ի տունն յայն, զայս

20 եթէ, Գ 21 զաւուրս, Գ 22 քառասներորդաց, Գ 23 Չուցի՛ ամենայն ազգի ազգի, Գ 24 Չուցի՛ որ մինչինքն է աւագ պահօցս, Գ 25 Չուցի՛ և յապաղեալ, Գ 26 ճգնեսցի, և քանս եղեալ ճեղեսցի և եթէ այսմ յապաղեալ, որ միջոց է պահօցս, ի միւս այլ շարաթն փութացի, և մինչև ի մեծի շարաթին. զի և ի շարաթուն յայնմիկ, Գ 27 զեկեալսն, Գ 28 և կատարեցից զկամս ցանկութեան իմոյ, Գ 29 յանկարծակի հասանելոց մահ և զայցէ ի ժամուն, Գ 30 Չուցի՛ մահ, Գ 31 Չուցի՛ և սարսել վախենալ և դողալ, Գ 32 ի միտ առնուլ, Ե: ի մտի ունել, և ասել. մի՞թէ ես իցեմ այն մարդ, Գ 33 Չուցի՛ և սարսէր, Գ 34 Չուցի՛ թագաւորն, Գ 35 Չուցի՛ լուսամբղութիւն, Գ 36 փութացեալ ի կատարել զհրամանս, Գ 37 զիցէ, Գ 38 և խոստմունքն արքայութիւնն անանց: Եւ, Գ 39 տուն մի վատթարագոյն, և ցուցանէր զսպիկեղաւծ, Գ 40 կացիր, Գ

չափ ժամանակս, և ապա բերից զքեզ ի բնակութիւն այս վայելման, և հանապազ  
աստ կեցցես և վայելեսցես: Ո՛հ ապաքէն զայն ժամանակն, որ ի վատթարագոյն  
տունն կեցար, փոստէիր, հեծէիր յոյժ, և տաղնապէիր հասանէիր պայմանն, զոր  
եղեալ էր<sup>41</sup> զի վայելէիր զվայելումն բնութեանն այն:

Այնպէս պարտ է մեզ ամենեցուն համարել<sup>42</sup> զայս կենաց բնակութիւնս: Մի՛  
այսուհետեւ հեշտացուք ի կենցաղս յայս, և զերթեալն<sup>43</sup> ի մէնջ այնպէս աւաղես-  
ցուք, իրր թէ այլ տաւել պայծառագոյն լայս ոչ է տեսնելոց, և կամ թէ զրկե-  
ցու ի փափակ կերակրոց, և յանոյշ ըմպելեաց<sup>44</sup> և ի պայծառագոյն զգեստուց, և ի  
քաղցր ընկերաց<sup>45</sup>. քանզի ունիցի անդ աւարակալ<sup>46</sup> զամենայն տաւելապէս. ունիս  
անդ<sup>47</sup> պատմուծանս մեծագինս, ունիս անդ կերակուրս հոգևորս, ունիս<sup>48</sup> անդ ըզ-  
փառս վերինս. զիտրդ և կամ սրպէս<sup>49</sup> լուր. Բս. լիցի<sup>50</sup> քեզ ոյգ ամենայն, հան-  
դերձ, կերակուր և տուն, գլուխ և արմատ<sup>51</sup>. քանզի որ ի Բրիտոս մկրտեցաք,  
զԲրիտոս զգեցայք<sup>52</sup>, ասէ տաւաւածային առաքեալն Պօղոս: Եւ Բրիտոս ասէ. «Թէ  
որ ուսէ զմարմին իմ՝ նա կենդանի մնացէ յաւիտեան. և նա յիս բնակեցէ և ես  
ի նմա»: Եւ դարձեալ թէ՛՝ Ես եմ որթ և դուք ուս: Արդ ասացից թէ եզրայր Բրիտ-  
ոսի, սրպէս և ասէ Պօղոս<sup>53</sup>. Եղև նա անդրանիկ ի մէջ եզրարց բազմաց: Ասացից  
և բարեկամս, սրպէս և Բրիտոս իսկ ասէ<sup>54</sup>. Ոչ կոչեցից զձեզ ծառայ<sup>55</sup>, զի ծա-  
ռայն ոչ գիտէ զինչ գործեսցէ տէր նորա. այլ բարեկամս, զի զամենայն զոր լուայ  
ի Հօրէ իմմէ, ծանուցի ձեզ:

Եւ արդ<sup>56</sup> տաւելապէս պարտ է պահել զբերանս մեր մաքուր, և զլեզուս մեր  
յերդմանէ<sup>57</sup> յանիծից, ի խաւսից դարչելեաց, յանարդանաց, ի բամբասանաց<sup>58</sup>, ի հայ-  
հոյանաց, ի յիշընցաց<sup>59</sup>, ի ստախաւուկեանէ, ի մատնութեանէ, և յայլ ամենայնէ, որ  
այսմ նմանիցեն, ի խեղկա(յ)տակութեանէ<sup>60</sup>, ի ծաղրածութեանց, և ի բոց վարեա ըզ-  
սովորութիւնն, զի մի դարձեալ անդրէն ի նոյն դարձցիս. ցածոյ զբարկութիւնն,  
չիջոյ զսրտմաւութիւնն, հեղացոյ զայրակցութիւնն, զի մարդ ես<sup>61</sup> և ոչ զազան. մի՛  
խաւսիր բարկութեամբ և զայրանկեալ մտօք, զի մի դիւանար կոչեսցեն զքեզ:

Եւ եթէ կամիցես գիտել եթէ զիտրդ ատելի լինիս ի ժամանակի բարկութեանն  
և ի զայրացմանն քս, հայեաց<sup>62</sup> յայլ ոմն<sup>63</sup> բարկացեալ և զայրագնեալ, եթէ զիտրդ  
այլայլին աչքն, շառագունին երեսքն, կապուտանան չրթուքն<sup>64</sup>, թափի լեզուն,  
ճողին փըձիլքն<sup>65</sup>, խառնակի ձայնն, զբրբուրն ստքն, եռան և շլանան աչքն, խա-  
ղան<sup>66</sup> ամենայն անդամք նորա, տես զնա և աւերինակէ զքեզ, տես և ստուգէ թէ չէ՞  
վատթարագոյն քան զգիւտնար, և սրպէս անարդ թըւի նա յաչս քս, նոյնպէս և  
զու յայլոց:

41 տունն յայն բնակելոց էիր, հեծէիր և տաղնապէիր յոյժ, և փափաղէիր հասանել  
ի պայմանն, զոր եղեալ էր Թագաւորն, Գ 42 նոյնպէս պարտիմք և մեք համարել, Գ  
43 զերթալն, ԴեՁ 44 Ձուցի՛ն՝ և յանոյշ ըմպելեաց, ԴեՁ  
45 Ձուցի՛ն՝ և ի քաղցր ընկերաց, ԴեՁ 46 կատարեալ, Գ 47 ունի նա անդ, ԴեՁ  
48 ունիցիս, ԴեՁ 49 Ձուցի՛ն՝ և կամ սրպէս, Գ 50 լինիցի, Գ  
51 ամենայն կերակուր և ըմպելի, հանդերձ և վայելչութիւն, Գ  
52 քանզի որք ի Բս. մկրտեցարուք, զԲս. զգեցեալ էք (Գաղ., Գ. 27), Գ  
53 Արդ ասացից թէ և եզրայր, քանզի ասէ Պօղոս, Գ  
54 Ձուցի՛ն՝ սրպէս և Բրիտոս իսկ ասէ, Գ  
55 ոչ կոչեցից զձեզ ծառայ, այլ բարեկամս, Գ 56 Ձուցի՛ն՝ արդ, Գ 57 յանդմանէ, Ե  
58 ի բանբասաց, Գ 59 Ձուցի՛ն՝ ի յիշընցաց, Գ  
60 և այլ ամ. այսպիսի չարեաց, ի խեղկատակութեանց, Գ  
61 հեղացոյ զզայրանալոյ բնութիւնն, հանդարտեա, և լիբ խաղաղարար. մարդ ես, Գ  
62 և զայրագին սրտիւ, զի մի՛ կոչեցիս դիւանար: Հայեաց, Գ  
63 յայլումն, ԴեՁ 64 Ձուցի՛ն՝ կապուտանան չրթուքն, Գ 65 փըձիլքն, Գ  
66 Ձուցի՛ն՝ և շլանան աչքն, խաղան, Գ

Եթէ ոք զքեզ զրկէ և անարգէ, հայտնէ և թշնամանէ, արտասուեալ ի վերս նորա. և աղաչեալ զԱՅ. ոչ համարել զայն նմա ի մեղս<sup>67</sup>. մի՛ խռովեցիս, այլ լեր նմա ցաւակից, մի՛ բարկանար, և մի՛ ասեր թէ զհոգի իմ փնասեաց, ոչ ոք կարէ փնասել զհոգի քո բայց<sup>68</sup> ի քէն. զի ա՞րդ և կամ որպէս<sup>69</sup>. լո՛ւր և ասեմ քեզ<sup>70</sup>. անարգեալն ոք զքեզ և թշնամանեաց<sup>71</sup>, երարձ ի քէն զամենայն մեղս քո, և ոչ փնասեաց հոգւոյդ քում. իսկ դու եթէ ռիսակալ լինիս և յիշաչար՝ փնասեցեր զհոգի քո. այն բերէ փնաս անձին քում, որ բարկութիւն սրտի քո ոչ թողուս, այլ ջանաս հատուցանել նմա, և առնուլ զքէն վրէժուց նախանձոյ քո ի նմանէ: Իմա՛յ, զի համարս տալոց ես անդ յատեանն Քրիստոսի վասն յիշաչարութեան<sup>72</sup> քո, և ռիսակալութեան քո:

Բամբասեալն զքեզ ոք և թշնամանեաց, հայտնեաց<sup>73</sup> և ապտակեաց, այն ոչ է փնաս հոգւոյ քում և կամ մարմնոյդ. իսկ եթէ դու նմա փոխարէն հատուցանես և զնա անարգես, դու փնասեցեր զհոգի քո: Ապա թէ ներես և համբերես նմա, և չար ոչ հատուցանես նմա, այլ աւրհնես զնա՝ նա անդ տանջի և դու պտակիս ի Քրիստոսէ. նա ապտակի ի հուր գեհենին, և դու փափկանաս ի փափկութեան դրախտին<sup>74</sup>. նա ապտակեցի ի բանակէ դիւաց, և մեծարիս դու ի դասուց հրեշտակաց. նա լինի նման սատանայի, և դու լինիս նման Աստուծոյ: Տեսե՞ր և լուար զպսակ համբերութեան. մի՛ նախանձիր ընդ անարգողն և ընդ թշնամանողն, ընդ ռիսական և ընդ յիշաչարն<sup>75</sup>, այլ փախիր<sup>76</sup> ի նոցանէ և մի՛ հաւատարիւր այնպիսեացն:

Արդ եթէ անսանկիր զոք, որ շնայր և զողանայր և սպանանէր, դու ի մտի քում վարանէիր. որչափ ևս առուել պարտ է փախչել յոխակալութենէ, որ չար է քան զամենայն յանցանս: Ի՞նչ գիտես եթէ զամենայն առաքինութիւնս ապականէ ռիսակալութիւնն և աղարատ, և եթէ բիւրապատիկ մեղս գործեալ իցէ և յանցանս՝ ջնջի<sup>77</sup> և ապականի ամենայն, եթէ բամբասողին և անարգաւորին<sup>78</sup> զքեզ թողութիւն արասցես. զայն իսկ ասացի զի գիտացես թէ զհոգին հաւատացելոյն և քրիստոնէին ոչ ինչ կարէ փնասել, և ոչ նա ինքն սատանայ. քանզի անձեռնհաս արար Աստուած զամենայն դաւաճանութիւնս բանսարկութիւն ի հաւատացելոցս Քրիստոսի<sup>79</sup>, և ոչ կարէ փնասել զմեզ<sup>80</sup> առանց կամաց մերոց:

Այլ լինել առաջի նորա ընտրեալ և վայելել յարքայութիւնն Աստուծոյ, և դասիլ ընդ հրեշտակս և ընդ հրեշտակապետսն. ոչ խոտէ զկաղս, ոչ զկոյրս, ոչ զանդամալոյծս, ոչ զաղքատս, ոչ զվաթարազգիս, ոչ զազատս, և ոչ զծառայոյս, այլ զամենայն զայնպիսիքս, որք առնն զկամս նորա, ընդունի և մուծանէ յարքայութիւնն իւր, և արասցէ հաւատար հրեշտակաց: Զի ոչ եթէ զայն խնդրէ ի մէնջ Աստուած՝ որ ի ձեռս մեր ոչ լինիցին, այլ զայն իսկ պահանջէ՝ որ ի ձեռս մեր է<sup>81</sup>:

Եւ արդ գիտելի է զի ծառայ լինել և ազատ, կարճ և երկայն, ծեր և աղայ, առողջ և հիւանդ, հարուստ և աղքատ, տգէտ և ճարտար, տկար և զօրաւոր. այս ամենայն ոչ<sup>82</sup> ի ձեռն մեր լինիցի<sup>83</sup>. այլ է որ յԱստուծոյ, և է ի դիպուածոց և ի

67 Ձուցի՛ և աղաչեալ ... ի մեղս, ԴեՁ 68 բաց, Գ 69 Ձուցի՛ և կամ որպէս, Գ  
 70 Ձուցի՛ քեզ, Գ 71 Ձուցի՛ և թշնամանեաց, Գ  
 72 չարայոյւշ, փնասեցեր զհոգի քո: իսկ եթէ դու զբարկութիւնն ոչ թողուս, և ջանաս նմա հատուցանես, անդ համար տալոց ես յիշաչարութեանն, Գ  
 73 Ձուցի՛ հայտնեաց, Գ 74 ի վայելութիւն դրախտին, Գ  
 75 Ձուցի՛ և ընդ յիշաչարն, Գ 76 այլ փախիր և հեռացիր, Գ  
 77 Եւ եթէ բիւրապատիկ յանցանաւք մեղուցեալ իցես, ջնջի, Գ  
 78 Ձուցի՛ և անարգաւորն, ԴեՁ  
 79 Ձուցի՛ ի հաւատացելոցս Քրիստոսի, Գ 80 մեզ, Գ  
 81 Ձուցի՛ Այլ լինել ... ի ձեռս մեր է, ԴեՁ 82 Ձուցի՛ ոչ, ԴեՁ  
 83 Քանզի ծառայ լինել և ազատ, երկայն և կարճ, ծեր և ամբողջ, աղքատ և մեծաւուն, անգէտ և ճարտար, տկար և զաւրաւոր, ոչ ի ձեռն մեր լինիցի, Գ

պատահմանը<sup>84</sup>, Այլ հանդարտ կալ, հեզ և խոնարհ, սղորմած և մարդասէր, անսխա-  
կալ և անյիշաչար, պահակաց<sup>85</sup> և աղօթարար, և այլ ամենայն այսպիսիքս ի ձեռս  
մեր կատարին, և զայն խնդրէ Աստուած ի մէնջ, զոր ի ձեռաց մերաց կատարին<sup>86</sup>,  
քանզի ձեռամբ մորմնոյ կատարի մարտ պատերազմի: Եւ այս ամենայն ուղղութիւնս  
զոր գրեցաւ, պատերազմ է ընդ սատանայի<sup>87</sup>:

Եւ այլ ունիմ բանս ասելոյ, եթէ մտադրութեամբ լսէք, եթէ սաղմոսք և ա-  
լէլուք, ուր և կատարին, եթէ ի տան և թէ ի դուսր, թէ ի փողոցի և թէ ի ճանա-  
պարհի, թէ յաշխատանս վաստակոց և թէ յարուեստագործութիւնս, անդ բանակք  
հրեշտակաց ժողովին, և որպէս սաղմոսերգութիւնն սովորէ, զի ուր և կատարի,  
անդ խօսակից զբանակս հրեշտակաց ժողովեացէ<sup>88</sup>: Այնպէս և ընդվայր խեղկա(յ)տա-  
կութիւն և ծաղրածութեամբ բանք, ուր և կատարին, եթէ ի մէջ եկեղեցւոյ և թէ  
ի մէջ հրապարակի, թէ ի մէջ քահանայից, և թէ ի մէջ կրօնաւորաց, անդ և բա-  
նակք դիւացն կաքաւեն, զի ոչ եթէ տեղին սրբէ զմարգն և հարկուորէ, և կամ  
պղծէ և ապականէ, այլ բարք մուրութեանն և առաքինութեան<sup>89</sup>:

Եւ արդ զինչ աւգանցաւ Յուդայ շրջելովն ընդ Գրիստոսի, և կամ զինչ մեա-  
սեցաւ Յովսէփոս<sup>90</sup> բնակելով ի մէջ լիտի Եգիպտացւոցն: Ասեմ զԲարեւոն և զերիս  
մանկուանս և զԴանիէլ, որ միւնն խցեաց զբերանս է առեծուցն<sup>91</sup>, իսկ Գ մանկուանքն  
զԽթ կանգուն բոցն շիջուցին, նշանակէր է առեծքն՝ զէ աւր է շարաթուցս, և Խթ  
կանգուն բոցն՝ զքառասուն և զինն աւուրքս պահոցս յիսնակացն նշանակէր: Եւ ի  
ձեռն այս է շարաթուցս և Խթ աւուրքս քաջացան<sup>92</sup> առաքինիքն, զի ոչ եթէ ա-  
ռեծքն այլափոխեցան<sup>93</sup> ի կերպարանս սշխարաց, այլ կացին մնացին առեծք, և ա-  
ղօթիւք սրբոյն կապեցան բերանք նոցա, և ոչ եթէ հուրն փոխեցաւ ի բնութիւն  
ցօղոյ և ամպոյ<sup>94</sup>, այլ բոցն բարձրացաւ Խթ կանգուն, և ցօղէր անձրե<sup>95</sup> երկից ման-  
կանցն ի բոցոյն<sup>96</sup> և զովացուցանէր զնոսա:

Արդ փութացուք և մեք, ով սիրելիք, զի այնպէս կատարեացուք<sup>97</sup> զաւուրս  
քառասնորաց պահոցս, զոր<sup>98</sup> միջեցաք այսօր իբրև զծով, երեք մանկուանքն ի մէջ  
հնոցին շիջուցին զգօրութիւն հրոյն, փութացուք և մեք այսպէս ի մէջ պահոցս  
ցածուցանել<sup>99</sup> զցանկութիւն մեզաց: Դանիէլ ի դուրն առեծուցն կապեաց զգազանու-  
թիւն նոցա, ջանացուք և մեք, զի ի մէջ պահոցս ցածուցանեմք զգազանացեալ  
բարկութիւնն<sup>100</sup> ընդդէմ ընկերին, որ առաւել խա(յ)ծանէ և վիրաւորէ զհոգիս մեր  
և զընկերին<sup>101</sup>:

84 Ձուցի՛ այլ է ... ի պատահմանց, Գ 85 Ձուցի՛ և անյիշաչար, պահակաց, Գ  
86 Ձուցի՛ զոր ... կատարին, Գ 87 Ձուցի՛ Եւ այս ... ընդ սատանայի, Գ  
88 Եւ այլ ունիմ բանս ասելոյ, եթէ մտադրութեամբ լսիցէք քանզի ուր սաղմոս կա-  
տարի, եթէ ի տան, և թէ ի փողոցի, եթէ ի ճանապարհի, և թէ ի բանատեղի, և թէ յարուես-  
տագործութիւնս, անդ բանակք հրեշտակաց. և որպէս սաղմոսերգութիւնն սովոր է, զի ուր  
և կատարի՝ անդ խաւսակից զբանակս հրեշտակաց ունի, և անդ ժողովին գասք երկնային  
զաւուրացն, Գ  
89 Այնպէս և ընդվայր խեղկասնացն և ծաղրածութեան, ուր և կատարի, եթէ ի մէջ եկե-  
ղեցւոյ և թէ ի մէջ քահանայից, և թէ ի վանս ի մէջ կրաւնաւորաց, անդ և բանակք դիւաց  
ժողովին, զի ոչ եթէ տեղին սրբէ զմարգն, և կամ պղծէ, այլ բարք առաքինութեանն, Գ  
90 Յովսէփ, Գ:  
91 խցեալ, զբերանս է առեծուցն, որ իբր զմխեալ պողովատ, կարծր թուր ժանեաց  
զազանացն, Գ 92 ջանացան, ԴեՁ 93 այլափոխեցան, Ե 94 ցօղոյ և, Գ  
95 Ձուցի՛ն՝ անձրե, ԴեՁ 96 Ձուցի՛ ի բոցոյն, Գ 97 Ձուցի՛ն՝ կատարեացուք, ԴեՁ  
98 զի, ԴՁ 99 շիջուցանել, Գ  
100 ցածուցանել բարկութիւնն, Ձ: զգազանութիւն փրկութեանն ցածուցանել, Գ  
101 Վասն որոյ հայցեմք ի մարդասէր փրկչէն մերմէ Յիսուսէ ֆրիստոսէ փրկել զմեզ ի  
ժանեաց սատանայի և յամենայն շար գործոց նորա, ԴեՁ

Գանիէլ, այր ցանկալին<sup>102</sup>, որ զերթից էնեակոն հաց ոչ եկեր, և ջուր ոչ արբ, և զառիւծսն պահել ուսոյց մտանելով ի գուրն, զի որպէս ի քարէ, կամ ի պղղըն- ծոյ կամ յայլ իմեքէ ի կարծր նիւթոյ, հաստատեալ արկանել ոչ ունէին առիւծքն զատամուռնն, որպէս զմուխ երկաթոյ, այնպէս զմարմին առնն պահքն պնդեցին անվանելի առնելով առեծուցն. քանզի ոչ բանային հակառակ սրբոյն զբերանս իւր- եանց: Այսպէս և դուք եղբարք ջանացարուք ի մէջ պահոցս պինդ պահել ոչ միայն ի կերակրոց, այլ և զմիտս ի շար խորհրդոց, զաչս յայրատ հայելոյ, զականջս ի շար լսելոյ, զբերանս ի մէջում խաւսելոյ, ի բամբասելոյ և ի արանջալոյ, զձեռս ի զրկելոյ, ի գողանալոյ, և անիրաւութեամբ զանաւագան հարկանելոյ, զոտս մեր պահեսցուք ի զարտուղի գնալոյ և յանուղղայս ընթանալոյ, զհաստեկիս մեր պահեսցուք ի մեղաց հոտոյ, զի որպէս ի մէջքն է անձին զուրութիւն մարդոյն, այս- պէս և զուրութիւն պահոցս ի միջին աւուրս հաստատի, զի զզուրութիւն Բ ծայ- րիցն մէջն առ իւր ունի պնդեալ:

Պահքն սղջախոսութեանց մայր, պահքն մանկանց դաստիարակ, պահքն ծերոց զարդ, պահքն բարի ճանապարհորդակից ուղեգնացից, պահքն ամուր խորանակից որք ի առնս են, պահողին պարկեշտագոյն երեսք, ոչ շառագունեալ անամաթ ծաղ- կով այլ դեղնութեամբ, սղջախոս կերպիւ կազմեալ. պահողին ակն ցած, գնացքն ամբուինալ, ծաղրն պարկեշտեալ, սր ոչ անարգի և ոչ թշնամանի, պահողին չափա- ւորութիւն բանի, մաքրութիւն սրտի, պահքն զէն են ընդդէմ դիւսցն գնդի. քան զի այս ազգ ոչ իւրք ելանէ եթէ ոչ պահուք և պաւթիւք: Եւ պահոց բարիք այս- քան և առաւել քան զսոյն. սղ եղբարք, ջանացարուք ի պնդութիւն պահոցս, զոր միջեցաք այսուր, հասուցանել յաւարտ սուրբ քառասնորդացս, և մի հեշտացուք ի սէր մարմնոյս, և ի զբաղանս սուտ կենցաղոյս, զի խարուզ է և կորուստ գործէ հոգոց:

Երկերուք ի մահուանէ՝ զի դառն է, երկերուք ի հրոյն՝ զի անանց է, երկե- րուք ի սառնամանեաց, զի ոչ ունի ջերմութիւն, զարհուրեցայք ի յորդանցն, զի անքուն են, զզուշացարուք ի տարտարոսացն, զի անդադար են, երկերուք ի խաւա- րէն, զի աննշոյլ է, սարսեցէք ի լալ աշացն, զի սաստիկ է, սասանեցայք ի կրճտել ատամանցն, զի անագին է, երկերուք ի դատաւարէն, զի անաշտ է, երկերուք ի դատաստանէն, զի անաւոր է, երկերուք ի թագաւորէն՝ զի անկոշտ է, երկերուք ի հրեշտակացն՝ զի անողորմք են:

Սիրելիք, աստ սերմանեցուք զողորմութիւն, զի անդ հնձեացուք զբարու- թիւն, աստէն տացուք յազքատան և անդէն առցուք յԱստուծոյ:

(Շար. 12)

Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ

102 Զուճիճ՝ Գանիէլ, այր ցանկալին, ցվեբջ, ԴեՁ



**ՏՈՒՆՆԵՐԻՆԻՍՏՆԵՐ**

**ՋԱՏԿԻ ՀԱՐՑԸ**

Վերջին տասը-տասնըհինգ տարիներու ընթացքին, Եկեղեցւոյ պետեր և առժամանակեան զանազան առաջարկներ ըրած են Քրիստոսնէական Եկեղեցւոյ մեծագոյն տօնը - Քրիստոսի Յարութեան Չատիկը - միասին տօնախմբելու, աւելի ճիշդ՝ Չատիկի համար հաստատուն թուական մը որոշելու: Անոնց մէջէն ամենէն աւելի ընդունելութիւն գտած ըլլալ կը թուի Չատիկը Հրէական Պատեփէն - Իրենց ալ մեծագոյն տօնը - անջատելով՝ Ապրիլի երկրորդ կիրակիին տօնակատարելու առաջարկը: Այս յօդուածով կ'ուզենք ընել մե'ր ալ համեստ առաջարկը, դարերու վրայ երկարած գուռած և Եկեղեցիներու կեանքին մէջ անբողձալի դրութիւն մը ստեղծող այս հարցը միանգամ ընդմիջա լուծուած տեսնելու ցանկութեամբ:

Հանրայայտ իրողութիւն է թէ Քրիստոսնէայ Եկեղեցիները դաւանաբանական զեանի վրայ ակնբախ տարբերութիւններ ունին իրարմէ: Տոմարական հարցերը սակայն ո'չ մէկ աղիբս ունին դաւանական կէտերու հետ, և ուստի շատ աւելի գիւրին է յաղթահարուած այն դժուարութիւններուն՝ որոնք արդեւ կը հանդիսանան, զէթ քրիստոսնէական մեծագոյն երկու տօներու - Ծնունդ և Չատիկ - թուականներու միացման: Մանաւանդ որ այլակրօններու համար, որոնք յաճախ լրիւ գաղափար չունին դաւանական մանրու բարդ հարցերու մասին, գլխաւոր տօներու թուականի տարբերութիւնն է որ կը հանդիսանայ ամենէն աչքառու երևոյթը՝ Եկեղեցիներու տարբերութենէն խօսող:

Նախ յայտնենք թէ համամիտ չենք Չատիկը Հրէական Պատեփէն անջատելուն: Եթէ Աւետարանները որոշ կեբպով չեն յայտնէր Քրիստոսի յարութեան թուականը, զէթ Պատեփի օրերուն անոր զուգադիպութիւնը կը հաստատեն անհերքելիօրէն:

Արդ, տեսնենք թէ մինչև հիմա ո՞ր

Եկեղեցին է - և ի՞նչ պարագաներու ներքեւ - որ հաւատարիմ մնացած է այս սկզբունքին:

Գիտենք թէ Նիկիոյ Ա. Տիեզերական ժողովը, զուժարուած 325 թուականին, որոշեց Ս. Չատիկը տօնելու գարնան զիշերահաւասարէն (ուրիշ խօսքով՝ գարնանամուսէն - 21 Մարտ) անմիջապէս հաջորդ լուսնի լրման յաջորդող կիրակիին: Տարիներու ընթացքին սակայն, Արևելեան և Արեւմտեան Եկեղեցիներ տարբեր ձևով մեկնեցին լուսնի լրման յաջորդող բացատրութիւնը: Օրթոտոքս Եկեղեցին լուսնի լրման մօտաւոր կիրակին ընդունեց իբրև լուսնի լրման կիրակի, մղուած թերևս այն իրողութենէն, թէ լուսինը իր կլոր ձևը կը պահէ լրման օրը կանխող երկու և անոր յաջորդող երկու օրերուն ևս (այսինքն լուսնական ամսու 12էն մինչև 16րդ օրը), իսկ կաթոլիկներ տառացիօրէն կառչած մնացին այդ բացատրութեան, այնպէս որ եթէ լուսնի աւագ լրումը զուգադիպէր Շաբաթ օրուան՝ յաջորդ օրը կ'ըլլար Չատիկ և ոչ թէ Ծաղկազարդ:

Արեւմտեան, այս հաշիւով, եթէ լուսնի լրումը զուգադիպի շաբաթուան առաջին երեք օրերուն (Բշ., Գշ., Դշ.), կարելիութիւն կայ որ Չատիկը տօնուի միասին (յաջորդող կիրակիին), եթէ լրման օրը չիյնայ 3 Ապրիլէն (21 Մարտ) առաջ: Այլապէս Հին Տոմարով Չատիկը կ'իյնայ յաջորդ լուսնին (ասկէ՝ 4 կամ 5 հօթնեակներու տարբերութիւնը): Իսկ եթէ լուսնի լրումը իյնայ շաբաթուան վերջին երեք օրերէն (Եշ., Ուր., Ծբ.) մէկուն մէջ, այդ պարագային յաջորդող կիրակին Ծաղկազարդ է ըստ Հին Տոմարի և Չատիկ է ըստ Նոր Տոմարի (ասկէ՝ մէկ հօթնեակի տարբերութիւնը):

Անցեալները երբ ոչքէ կ'անցընէի ներկայ դարուս առաջին քանի մը տարիներու Հին Տոմարի համաձայն պատրաստուած Օրացոյցները, հանդիպեցայ հետեւալ անհեթեթ բացատրութեան. լուսնի լրումն այսօր է ըստ Հին Տոմարի, մինչ 4 օրեր առաջ նշանակուած էր արդէն լրումն լուսնի: Իսկ աւելի ուշ ժամանակներու

մէջ ապագրուած Օրացոյցներ ունին Ապրիլի 3ին (Հ. Տ. Մարտ 21) զարեանախոս բոս Հիմ Տաւարի նստնքան անհեթեթ բացատրութիւնը: Արդ, անվիճելի ճշմարտութիւն մըն է թէ լուսինը իր լրումին կը հասնի ամսուն (լուսնական) 14րդ կամ 15րդ օրը (նայած լուսնական ամսուն 29 կամ 30 օր ունենալուն): Նմանապէս անհերքելի իրողութիւն է թէ գարնանամուտը այն օրն է՝ ուր արեւը ճիշդ Հասարակածին գալով՝ հաւասարապէս հեռու կ'ըլլայ գոյգ բևեռներէն, և երբ հիւսիսային բևեռը կը լուսաւորուի վեցամսեայ խաւարումէ ետք, իսկ հարաւայինը կը խաւարի՝ վեցամսեայ լուսաւորումէ ետք: Արդ, քանի որ աստղաբաշխական հաշիւներով ընդունուած իրողութիւն է թէ արեւը Հասարակածին կը հասնի Մարտի 21ին, ինչպէ՞ս կարելի է որ ունենանք գոյգ գարնանամուտներ: Եւ քանի որ լուսնի լրման օրն ալ որոշ է (և տեսանելի՝ աչքով), ինչպէ՞ս կրնանք տոմարական խնդիր յազդել այդ հարցին չուրջ և լուսնի լրման օր ընդունիլ լուսնական ամսու 17ը կամ 18ը, երբ լուսինը բաւական քան զիջած կ'ըլլայ իր կարութենէն, իր լման վիճակէն:

Սակայն հարցը հոս չի վերջանար: Արեւելեան Եկեղեցիներ այս ձևով հակասած կ'ըլլան Նիկիոյ Ժողովի որոշումներուն, Մարտ 21-Ապրիլ 3ի (Հ. Տ. Մարտ 21) միջև հանդիպող լուսնի լրումը չընդունելով իբրև Աւագ լրում, որուն հետեանքով Զատիկի տօնը կրնայ ուշանալ մինչև 8 Մայիս, այսինքն գարնան եղանակի կէսը անց: Եւ եթէ շարունակուի այսպէս, յաջորդ հազարամեակներուն, ատեն պիտի գայ որ Զատիկը իյնայ Յունիսին, այսինքն ամբան եղանակին(\*):

Հոս ինքնարեքաբար կը ծագի հարցումը. — Ինչպէ՞ս համաձայնեցնել Զատիկը Հրէից Պատեքին կապելու որոշումը

Զատիկը Նոր Տոմարով տօնելու որոշումին հետ (քանի որ այս վերջինին աւելի ճշգրիտ ըլլալուն ապացոյցը տալինք), երբ իննեաւասնեքիակի իւրաքանչիւր շրջանին հանդիպող մէկ լուսնային ամսու ամբարեքութեամբ Զատիկ տօնուած 5 տարիներէն նրկաւքի պարագային՝ Հրէից Պատեքը կ'իյնայ Նոր Տոմարով Աւագ Եօթնեակի ընթացքին, իսկ միւս երեքի պարագային՝ Հին Տոմարով Աւագ Եօթնեակի ընթացքին: Պարզ խօսելով, երբ երբեմն Արեւմտեան Եկեղեցիներ Զատիկը կը տօնեն Պատեքէն ամիս մը առաջ, իսկ երբեմն Արեւելեան Եկեղեցիներ՝ Պատեքէն ամիս մը ետք(\*):

Ուրեմն ինչպէ՞ս կարելի է հասարակաց եզր մը գտնել գոհացնելու համար բոլորը և կանխելու համար հաշուական բարդութիւններ: Մեր խոնարհ կարծիքով, արուած ըլլալով որ Հրէից Պատեքը Նիսան (լուսնային) ամսու 15ին կը գաւազդիպի, որ է ըսել լիալուսնին (որովհետեւ Նիսան ամիսը 30 օրերէ կը բաղկանայ), մեր առաջին ընելիքը կ'ըլլայ վերադիրի միջոցով գտնել թէ աւելի ատարւոյ մը 26 Մարտէն մինչև 25 Ապրիլ (Պատեքի ամենէն կանուխ և ամենէն ուշ եկած թուականները) երկարող ժամանակամիջոցին ե՞րբ կը պատահի լուսնի լրումը (և հետեաբար Պատեքը): Այդ ընելէ ետք մեզի կը մնայ անոր յաջորդող կիրակին նկատել որպէս Զատիկի թուականը: Այս հաշուով պահուած պիտի ըլլան նաև Ա-ՔՓ երկարող (մեր այբուբենի թիւերուն համապատասխանող) տարեգիրները և Զատիկը նորէն 35 օրերու միջև ետ և առաջ պիտի շարժի, հինգ օրերու յառաջխաղացումով միայն: Այսպէս, փոխանակ Մարտ 22էն Ապրիլ 25ի միջև, Զատիկը պիտի տօնուի Մարտ 27էն Ապրիլ 30ի միջև (ուրիշ առաւելութիւն մը՝ Զատիկի ամենէն ուշ եկած օրը կապել Ապ-

(\*) Ուրիշ անհեթեթութիւն մըն է այն՝ զոր Օրթոտոքս Եկեղեցիներէն ոմանք կը կիրարկեն, ամսաթիւի հետ կապուած տօները (ընդ որս և Ս. Մնուէղը) տօնելով ըստ Նոր Տոմարի, իսկ Զատիկն ու անոր հետ կապուած տօները՝ ըստ Հին Տոմարի:

(\*) Կ'արժէ նկատի առնել թէ անցեալ տարի (1978) ո՛չ Նոր և ո՛չ Հին Տոմարի համաձայն Ս. Զատիկը տօնուեցաւ Պատեքի յաջորդող կիրակին: Արեւմտեան Եկեղեցիներ գայն տօնեցին Պատեքէն ամիս մը առաջ, իսկ Արեւելեաններ՝ շաբաթ մը ետք:

բիլի վերջին օրուան), Ուրեմն, երբ Տարեգիրքը ըլլայ Ա՝ Չատիկը պիտի տօնուկի Մարտի 27ին փոխան 22ին, Բ՝ Մարտի 28ին փոխան 23ին, Գ՝ Մարտի 29ին փոխան 24ին, և այսպէս շարունակաբար: Օրինակ՝ եթէ Պատեքը իննայ Մարտի 26ին (ամենէն կանուխ) և այդ օրը ըլլայ Շաբաթ, յաջորդ օրը, Մարտ 27, Կիրակի, կ'ըլլայ Չատիկ (Տարեգիրք Ա): Միւս կողմէ, եթէ Պատեքը իննայ Ապրիլի 25ին (ամենէն ուշ), և այդ օրը ըլլայ Երեքշաբթի (նոս կ'որժէ յիշել թէ Պատեքը կրնայ զուգադիպիլ միայն Գշ. և Եշ. կամ Շբ. օրերուն և քիչ անգամ՝ Կիրակի օրուան), յաջորդ Կիրակի օրը, 30 Ապրիլ, կ'ըլլայ Չատիկ (Տարեգիրք Փ, իսկ նահանջ տարիներուն՝ ՔՓ):

Հարց կը ծագի թէ ի՞նչ պէտք է ընել եթէ Պատեքը զուգադիպի Ապրիլի 24ին կամ 25ին և օրը ըլլայ Կիրակի: Այդ պարագային երկու կերպով կարելի է շարժիլ: Կա՛մ Չատիկը բացառաբար տօնել Պատեքին հետ, միևնոյն օրը(\*), և կա՛մ, ուրիշ բացառութեամբ մը, յետաձգել յաջորդ՝ Մայիս 1ի կամ 2ի Կիրակիին: (Թէև այս կը պատահի արեգակնային 532ամեայ շրջանի ընթացքին մէկ անգամ միայն, քանի որ, ինչպէս ըսինք, հազուադէպօրէն միայն Պատեքը կը զուգադիպի Կիրակի օրուան և հազուադէպօրէն կ'իյնայ Մարտի 26ին կամ Ապրիլի 25ին — ամենէն կանուխ և ամենէն ուշ:)

\* \* \*

Սուրբ Չատիկի տօնին շուրջ խօսելու ատեն, աւելորդ չենք համարեր ալ նաև հետևեալ տեղեկութիւնները, որոնք թէև զուրկ օգտակարութենէ, գէթ վստահ ենք թէ մեծապէս հետաքրքրական են տոմարագէտներու համար:

(\*) ԺԵ. Գարու վերջերը գոյացած տոմարական տարբերութենէն առաջ, քրիստոնեաներ ջանք կ'ընէին խուսափելու Չատիկը Պատեքին հետ միևնոյն օրը տօնախմբելէ: Սակայն անկէ ետք, Արևմտեան Եկեղեցիներու մօտ կը պատահի այդ զուգադիպութիւնը, թէև հազուադէպօրէն (վերջին անգամ պատահած է 1954ին, իսկ յաջորդը պիտի պատահի 1981ին):

1) Ս. Չատիկի թուականի տարբերութիւնը Արևելեան և Արևմտեան Եկեղեցիներու միջև սովորաբար 1 կամ 5 եօթնեակ է: 4 եօթնեակի տարբերութիւնը շատ հազուադէպ է, իսկ 2 կամ 3 եօթնեակներու տարբերութիւնը՝ անկարելի:

2) Ամենէն յաճախադէպն է 1 եօթնեակի տարբերութիւնը, յետոյ միասին տօնուող տարիները և ապա 5 եօթնեակի տարբերութիւնը:

3) Կրնայ պատահիլ որ 2 կամ 3 իրերայաջորդ տարիներ Չատիկը տօնուի մէկ եօթնեակի տարբերութեամբ և 2 իրերայաջորդ տարիներ միասին (թէև շատ հազուադէպօրէն), բայց 4 կամ 5 եօթնեակի տարբերութեամբ տարիներ կրնան պատահիլ նուազագոյն երկու տարիներու ընդմիջումով միայն:

4) Առաւելագոյնը 10 իրերայաջորդ տարիներու ընթացքին կրնայ Ս. Չատիկի տօնը միասին չզուգադիպիլ: Իսկ 4 իրերայաջորդ տարիներ՝ մէկ լուսնական ամսու տարբերութեամբ չպատահիլ:

5) Ս. Չատիկի տօնը թէև 35 օրերու միջև ետ և առաջ կը շարժի, սակայն տարիներու սրոշ շրջան մը ան կը զուգադիպի երկու իրերայաջորդ օրերու և չի զուգադիպիլ միւս երկուքին: Այսպէս, 1950-1979, 30 տարիներու շրջանի մը ընթացքին, եղած են տարի մը կամ տարիներ ուր Չատիկը տօնուած է Ապրիլի 9ին և 10ին (Հին Տոմարով Մարտի 27ին և 28ին), բայց ոչ՝ 11ին և 12ին, տօնուած է Ապրիլի 13ին և 14ին, բայց ոչ՝ 15ին և 16ին, և այսպէս յաջորդաբար: Նոյնն է նաև, ամսաթիւերու տարբերութեամբ միայն, նոր Տոմարի պարագային:

6) Իւրաքանչիւր տարուան Չատիկը նախորդ տարուանէ կա՛մ 8-9 և կա՛մ 15-16 օրեր կանուխ կու գայ, իսկ ուշ գալու պարագային՝ 19-20 և երբեմն միայն 12-13 օրեր ուշ:

7) Չատիկը կրնայ նոյն թուականին հանդիպիլ հինգ տարիներու տարբերութեամբ, բայց ամենէն յաճախադէպն է 11 տարիներ հաջ նոյն օրուան հանդիպումը:

8) Չատիկի միջին օրն է Ապրիլի 8/21ը: Կու տանք նաև ցանկը, մինչև 1990 երկարող տարիներու ընթացքին Պատեքի

# ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

## ԻՐԵՆԷՈՍԻ ՆՈՐԱԳԻՒՏ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

Charles Renoux, *Patrologia Orientalis*ի շարքին նոր պրակ մը լոյս ընծայած է, Irénée de Lyon, *Nouveaux Fragments Arméniens de l'Adversus Haereses et de l'Epideixis* խորագրով, ուր կը ներկայացնէ Իրենէոսի Ընդդէմ Հերձուածոց, և Յոյցք յարջորջուած երկերուն հայերէն թարգմանութեանց մնացորդները:

Ընդդէմ Հերձուածոցի Գ. և Ե. Գիրքերուն հայերէն թարգմանութիւնները գտնուած և հրատարակուած էին գորուս սկիզբը: Հայագէտ Ռենուս նոյն գործին Ա. Բ. և Գ. Գիրքերէն ալ իր ձեռք բերած հատուածներով զօրուար հիմ մը կը հայթայթէ այն տեսութեան, ըստ որում Երանոսի յիշեալ գործը ոչ թէ մասամբ, այլ ամբողջութեամբ թարգմանուած է հայերէնի մեր հրատարածան նախնեաց ձեռքով:

Յարգելի հայագէտը ակնարկուած բեկորները քաղած է Կ. Պալսոյ Հայոց Պատրիարքարանին մէկ ձեռագրէն, որ նա-

խագէս կը գտնուէր Ղալաթիոյ Ազգային Մատենադարանը, 54 թիւին ներքեւ, ինչպէս կը տեսնուի Բարգէն Մ. Վրդ. Կիւլէսէրեանի պատրաստած Յուցակին մէջ (Տպ. Անթիլիաս, էջ 316): Այդ ձեռագիրը շատ շահեկան Մողկաքաղ մըն է կազմուած ամենաշուար Ը. Դարուն:

Ներկայ հատորը կը պարունակէ հայերէն բնագիրը, դիմացը լատիներէն թարգմանութեամբ և ներքեւ ծանօթութիւններով: Հատուածները իրարմէ շատ կը տարբերին երկարութեան տեսակէտէն: Թուարկուած են 1-65, իբրև Յաւելուած ունենալով 6 փոքր բեկորներ, Ս. Յակոբեանց Մատենադարանի թիւ 2331 և 2526 ձեռագիրներէն:

Գրքին կարևորագոյն մասը կը կազմեն առաջին 25 հատուածները, որոնք կը վերաբերին Ընդդէմ Հերձուածոցի Ա-Գ Գիրքերուն և լոյս կը տեսնեն առաջին անգամ (էջ 30-73): Յաջորդ 27 հատուածները քաղուած են յիշեալ երկին Գ. - Ե. Գիրքերէն, իսկ մնացեալները Յոյցքէն, որոնք հրատարակուած էին ժամանակին. սուսի հեղինակը այդ հատուածները չէ տպած ամբողջութեամբ, այլ Ղալաթիոյ ձեռագիրը համեմատած է տպագրեալին հետ և տարբերութիւնները միայն յառաջ բերած (էջ 74 - 151):

Հայերէն թարգմանութիւնէն փրկուած հատուածներուն արժէքը շօշափելի է արդարև: Ահաւասիկ մէկը հեղինակին ուշագրաւ ծանօթութիւններէն, գրուած 23րդ հատուածին ներքեւ. "On remarquera encore la qualité du fragment arménien: il complète le fragment grec privé du verbe *inhonorabatur* attesté par la version latine, il complète aussi la version latine privée du verbe *benefaciebat* attesté par le fragment grec" (էջ 69):

Մանրակրկիտ աշխատութեամբ և խնամեալ տպագրութեամբ ի լոյս հանուած այս հատորը՝ երկասիրող պատուարժան հայագէտին կ'ապահովէ վստահարար խորին շնորհակալութեան զգացումներ, Հայրարանութեամբ և Հայագիտութեամբ պարագող Հայ և օտար բանասէրներէ:

և անոր յաջորդող կիրակիներուն (որոնք պէտք է ըլլան — և երբեմն միայն են — թուականը Ս. Զատիկ տօնին). —

Տարի	Պատեմ	Զատիկ
1979	Եջ. 12 Ապրիլ	15 Ապրիլ
1980	Գջ. 1 »	6 »
1981	Կիր. 19 »	26 »
1982	Եջ. 8 »	11 »
1983	Գջ. 29 Մարտ	3 »
1984	Գջ. 17 Ապրիլ	22 »
1985	Շր. 6 »	7 »
1986	Եջ. 24 »	27 »
1987	Գջ. 14 »	19 »
1988	Շր. 2 »	3 »
1989	Եջ. 20 »	23 »
1990	Գջ. 10 »	15 »

ԳԷՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ

Ն. ԱՐՔ. ԵՐՈՎԱԿԱՆ

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵԱԿԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՁ

Նախորդ տարիներու նման, այս տարի ևս, Ս. Քաղաքիս քրիստոնեայ համայնքները եփուկեցին սգիով և զովելի նախածեռնութեամբ նշեցին Եկեղեցիներու Միութեան Եօթնեակը, Յունուարի վերջին երկու կիրակիներուն միջև ինկող (21-28) օրերու ընթացքին:

Հաւաքոյթին բացումը, 21 Յունուար, կիրակի կէսօրէ կաք ժամը 4ին, կայացաւ դարձեալ Շմիթ Աղջկանց վարժարանի ընդարձակ սրահին մէջ: Կրօնական համերգ մը՝ ուր հինգ երգչախումբեր — Լուսերականներու, Ֆրանչիսկանց Որբանոցի, Հայոց, Մէյրի Լօվէլ Կուրանոցի և Ֆրէրներու վարժարանի — ժամուկէս տեւողութեամբ ներկաներուն հրամցուցին առաւելաբար կրօնական խորքով երգեր: Մեր երգչախումբը միակն էր որ հանդէս եկաւ («Մեծացուցէ» շարականի երգեցողութենէն բացի) ժողովրդային երգերու զոգար փունջով մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին, մեներգներով, Օրք. Սիւրբ Տաքէսեան, Սեդա Մազմանեան և Սիլվա Սարգիսեան: Երգչախումբը կը ղեկավարէր Ս. Աթոռոյս Դպրապետ Պր. Սահակ Գալայճեան: Հայերէն երգերը արժանացան ներկաներու բուռն ծափահարութեան: Յազդիչ էր ունկնդրել առաւելաբար տարիքոտ կոյր կիներէ բողկացած Մէյրի Լօվէլ Հօմի խումբը, որ երգեց Անգլերէն և Արաբերէն լեզուներով: Յիշեալ երկու լեզուներով երգելէ զտա, Ֆրէրներու բազմանդամ երգչախումբը հանդէս եկաւ նաև Ֆրանսերէնով, հեշտալուր մեղեդիներով հմայելով աննպաստ օդին հակառակ ընդարձակ սրահը իր պատշգամովը լեցուցած այլացեղ ներկաներու բազմութիւնը:

Երկուշաբթի, 22 Յունուար, ժամը 5ին, Ֆրանչիսկաններու Ս. Փրկիչ ընդարձակ Մայր Տաճարը լիքն էր բազմացեղ հաւատացեալներով: Մէկ ժամ տեսող յայտագրով մը կատարուեցան Ս. Գրական ընթերցումներ՝ Իտալերէն, Ֆրանսերէն, Անգլերէն, Սպաներէն, Արաբերէն և Հայերէն լեզուներով: Հոգչ. Տ. Անուշաւան վրդ. կատարեց Հայերէն ընթերցումը, Պօղոս Առաքեալի կողոսացուց Թուղթէն: Լատին համայնքի հովիւ Հայր Ժօրժ Ալու Խազէն խօսեցաւ եփուկեցին շարժումի կարեւորութեան ու ծաւալումի շուրջ: Համբաւուոր երգահոնահար Օկիւսթին Լամա նուազեց կրօնական քաղցրալուր մեղեդիներ:

Երեքշաբթի, 23 Յունուար, ժամը 5ին, Լուսերականներու եկեղեցիին մէջ էր հաւաքոյթը, բողկացած Գերմաներէն, Անգլերէն և Արաբերէն հոգևոր երգերէ և Ս. Գրական ընթերցումներէ: Կուռ քարոզով մը հանդէս եկաւ Յոյն-կաթօլիկ համայնքի մեծաւորը՝ Հայր Լուծֆի Լահհամ, յայտնելով թէ բոլորս ալ, եկեղեցական թէ աշխարհական, պարտազանց ենք Տիրոջ առջև, եթէ ձեռնածալ ու անփոյթ մեր կարողութեան չափով սատար չհանդիսանանք Քրիստոսի իսկ բողձանքը եզոզ Միութեան, աւելի ճիշդ՝ Քրիստոսի սիրոյն մէջ կայացած եղբայրութեան: Ժամ մը տեսող հաւաքոյթի աւարտին, ներկաներէն իւրաքանչիւրը իր մայրենի լեզուով արտասանեց Տէրունական Աղօթքը, որմէ կաք, համայնքի հոգևոր պետ Փրօֆսթ Հէլմութ կլաթթէի հրաւերով, բոլորն ալ բարձրացան եկեղեցւոյ կից սրահը, ուր փոխադարձ սէրով շերմացած ընկերային մթնոլորտի մը մէջ Գերապատիւ Փրօֆսթը նախ հաց և քիչ կաք դինի հրամցուց բոլորին, իբրև նախանշան այն Հաղորդութեան՝ զոր, յարեց, «կը հաւատանք թէ երջանիկ օր մը, մօտաւոր ապագային, պիտի կարենանք ընդունիլ զայն բոլոր եկեղեցիներու Սուրբ Սեղաններէն»: Ինչպէս միւս երեկոյթներուն, մեր կողմէ հոս ևս ներկայ եղան Հոգչ. Տ. Անուշաւան վրդ. Չղջանեան, Հոգչ. Տ. Ասպետ Արդ. Պալեան և Հոգչ. Տ. Բարսեղ Արդ. Գալէմտէրեան:

Զորեքշարթի, 24 Յունուար, ժամը 5ին, քաղաքիս արեմտեան բաժնին մէջ գանուող եթովպական քայր եկեղեցւոյ մէջ էր նրկեցողը: Մեծագոյն մասամբ եթովպերէն լեզուով կատարուած կարճ այդ արտարողութիւնը փակուեցաւ Անկլիքան եկեղեցւոյ նրէցնրէն մէկուն օրհնութեան խօսքով:

Հինգշարթի, 25 Յունուար, ժամը 4ին, Սիոն լերան վերջին Ընթրեաց վերնատան մէջ կատարուած հաւաքոյթին իրենց մասնակցութիւնը բերին մեր ժառանգաւորները: Եղան ընթերցումներ Երրայերէն և Անգլերէն լեզուներով՝ Հին Ուխտէն, իսկ Յունարէն, Արաբերէն և Ֆրանսերէն լեզուներով՝ Նոր Ուխտէն: Մերոնք երգեցին Ս. Մննդեան և Հոգեգալստեան շարականներ: Յետոյ բալորն ալ բարձրացան Ս. Հոգւոյ մատուռը, քանի մը վայրկեանի լուծեամբ լեցուելու Պենտեկոստէի օրը Ս. Հոգւոյն առաքեալներուն վրայ իջմամբ Քրիստոնէական եկեղեցւոյ հիմնարկութեան վայրին խորհուրդովը:

Ուրբաթ, 26 Յունուար, ժամը 5ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարն էր սր, իր խորհրդաւոր ու կիսամութ կամարներուն տակ հիւրընկալեց եկեղեցւոյ Միութեան աղօթածաղովը, զոր բացաւ Լուսերականներու Փրօփսթը՝ Գերմաներէնով արտասանուած Տէրունական Աղօթքով: Հայր Լուիֆի Լահամ կարգաց Արաբերէնով համարներ՝ Պնտրոս առաքելի կոթողիկեայ թուղթէն, իսկ Հայր Նէկուօր՝ եթովպերէնով: Քրիստոնէական Տեղեկատուութեանց կեդրոնի Տնօրէն Ֆրանչիսկեան Հայր Իկնաղիօ Մանչինի 23րդ Սողմոսը կարգաց Ֆրանսերէնով: Հայր Ասպետ կարգաց Նարեկացիի «Որդի Աստուծոյ» աղօթքը, իսկ Հայր Մանուէլ իր աղու ձայնով մեներգեց «Ով զարմանալի» և «Այսօր ձայնն հայրական»՝ Մկրտութեան շարականները: Իսկ քորոզը խօսեցաւ հիւրարար Ս. Աթոռ գանուող Ռուժանիոյ և Պուլկարիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Եղիսիպոս՝ Ֆրանսերէն լեզուով: Անկլիքան երէց Քանօն Էա. Էվըրի առաւ փակման օրհնութիւնը:

Շաբաթ, 27 Յունուար, ժամը 5ը քառորդ անց, զանազան համայնքներու պատկանող հաւատացեալներ, եկեղեցական թէ աշխարհական, լեցուցած էին Ս. Յարութեան Տաճարէն ներս գանուող Գողգոթայի վերնամատուռը, սկանջալուր ըլլալու համար ամէն կիրակուտքի մատրան յունական բաժնին մէջ կատարուող Հսկումի հոգեպարար արտարողութեան: Մեր կողմէ ներկայ եղան Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. և Հոգշ. Տ. Բարսեղ Արեղայ: Այս առթիւ միջանկեալ ըսենք թէ, մեզի համար անհասկնալի պատճառներով, այս տարի Յոյն-Օրթոտքս եկեղեցին իր մասնակցութիւնը չբերաւ միւս արտարողութիւններուն: Իսկ Ղպօհներ և Աստրիներ սկիզբէն իրենք զիրենք անմասն պահած են, գէթ Ս. Քաղաքիս մէջ, քրիստոնէութիւնը ոգևորող դրական այս շարժումէն:

Կիրակի, 28 Յունուար, կ. ա. ժամը 11ին, Ֆրանչիսկեաններու Մայր Տաճարին մէջ Հայր Լուիֆի Լահամ Բիւզանդական ծէսով Ս. Պատարագ մատոյց և Արաբերէն քարոզով մը շեշտեց կարեւորութիւնը եկեղեցիներու միջև տիրող համերաշխութեան ու համագործակցութեան, մանաւանդ այս օրերուն՝ ուր ժխտական ազդակներ ամէն առիթով կը միջամտեն ջլատելու ուժն ու կորովը քրիստոնէութեան:

Նոյն օրը, երեկոյան ժամը 5ին, Հայր Անուշաւան և Հայր Բարսեղ, տարբեր յարանուանութիւններէ բաղկացած կոկիկ բազմութեան մը հետ փութացած էին Անկլիքաններու Աէյնթ ձօրճ եկեղեցին, ներկայ ըլլալու համար եօթնեակի եզրափակիչ երկնայթիւն: Մէկ ժամուան ընթացքին Արաբերէն և Անգլերէն լեզուներով կատարուած Աւետարանական և Ս. Գրական այլ հատուածներու ընթերցումները ընդմիջուեցան Ս. Կոյսին ձօնուած «Մեծացուցե՛լ» շարականի երգեցողութեամբ և «Հաւատամք» թէ Տէրունական աղօթքի միարեան արտասանութեամբ: Քարոզեց Անկլիքան երէց Էտուրբա Էվըրի, իսկ փակման օրհնութիւնը առաւ Անկլիքան Արքեպիսկոպոս Գերշնորճ Տ. Ֆայէք Հատատա:

«ՍԻՈՆ» Ի ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գաղութիս երիտասարդ և եկեղեցասէր անդամներէն Կ. Գ. կը հարցնէ. — ա) Ինչո՞ւ Մեծ Պահօքը Քառասնորդական Պահի ևս կը կոչուի, երբ գիտենք թէ ան կ'ընդգրկէ եօթ եօթնեակներ կամ 48 օրերու շրջան մը, և

բ) Ի՞նչ է ներկայիս դրութիւնը Մեծ Պահոց ընդհանրապէս և այլ պահերու մասնաւորապէս՝ այլ եկեղեցիներու մօտ:

ա) Մեծ Պահի Քառասնորդական պահի կոչումը կու գայ շատ հին դարերէն: Եթէ ուշադրութեամբ նայինք մեր Օրացոյցներուն, պիտի տեսնենք թէ Մեծ Պահոց շրջանը բաժնուած է երկու գլխաւոր մասերու և օր մեծ պահոց բացատրութիւնը տրուած է առաջին 40 օրերուն միայն, Բուն Բարեկենդանի յաջորդ օրէն (Բշ.) մինչև Ծաղկազարդը կանխող Ուրբաթը: Իսկ երկրորդ շրջանը, որ կը սկսի Ղազարու յարութեան յիշատակով, նշանակուած է պարզ պահի բառով և կ'ընդգրկէ Աւագ Եօթնեակը, ուր կը դադրին Մեծ Պահոց կարգերը (Արեւազալ, Սաղաղական և ըն.) և կը սկսի երկեցողութիւնը մինչ այդ դադրած հանգստեան շարականներուն:

բ) Յունաց մօտ ուտիքի շրջանէն Մեծ Պահ անցքը սեղի կ'ունենայ երկու հանգրուաններով: Նախ, Բուն Բարեկենդանը կանխող Բշ. օրը, կը դադրեցնեն մտեղէնի գործածութիւնը և Միսի Բարեկենդան կոչուած կիրակիին կը յաջորդէ Նաւակասիի եօթնեակ մը, որմէ ետք, մեզի հետ կը մտնեն եօթ շաբաթներ տեող Մեծ Պահի շրջանը:

Լատիններ միակն են որ միայն 40 օրեր յատկացուցած են Մեծ Պահոց համար: Ուտի անոնց պահոց շրջանը սկիզբ կ'առնէ Բարեկենդանի եօթեայ խրախճանքներու վաղորդային, Չորեքշաբթի օրը, զոր կը կոչեն Օր Մոխրոց, երբ մտխիբ կ'օրհնեն և ժողովուրդի գլխուն կը ցաննեն խաչանիշ, իբր խորհրդանիշ մարդուն հոգէն ստեղծուած և մարմնին հողին սահմանուած ըլլալուն: Եւ դուրս

ձգելով «պղտիկ Չատիկներ» նկատուած կիրակի օրերը, կ'ունենան ճիշդ 40 օրեր պահեցողութեան: Վատիկանի Բ. ժողովը սակայն սահմանափակեց քառասնօրեայ պահեցողութիւնը, հրահանգելով որ այդ շրջանին առաջին և վերջընթեր օրերը — Օր Մոխրոց և Աւագ Ուրբաթ — միայն նկատուին իբրև պահեցողութեան օրեր, իսկ այդ շրջանի Ուրբաթ օրերուն դադրեցուի մտեղէնի գործածութիւնը միայն: Արեւելեան կաթոլիկ եկեղեցիներ վերջերս սկսան Մեծ Պահքը հաշուել Երկուշաբթի օրէն: (Կ'արժէ հոս յիշել թէ մեր մօտ ևս Մեծ Պահոց կարգերը կը սկսին Յրդ. օրէն — Չորեքշաբթի — և ոչ առաջին օրէն:)

Ղպտիք մեզմէ մէկ շաբաթ առաջ կ'անցնին պահեցողութեան, այսինքն եօթի տեղ ութ եօթնեակներու շրջան մը կ'ընդգրկէ Մեծ Պահքը անոնց մօտ: Պատճառը հետեւեալն է. — Չորրորդ դարուն, Դիոկղետիանոս կայսեր հալածանաց ժամանակ, խիստ կը նուազի Ղպտոց թուահամարը եգիպտոսի մէջ: Հեթանոսներու հետ կենակցութենէ զգուշացնելու համար, օրուան Պատրիարքը կ'արտօնէ մերձաւորներու ամուսնութիւնը իր հօտին, պայմանաւ որ մէկ շաբաթ առաջ անցնին պահեցողութեան: Այդ կ'ունենը ի զօրու է Ղպտի եկեղեցւոյ մօտ մինչև մեր օրերը:

Ասորի եկեղեցւոյ մէջ Մեծ Պահոց դրութիւնը նոյնն է մեր եկեղեցւոյ հետ: Բայց կղերական դասուն համար անոնց մօտ տեւաբար արգիւտուած է մտեղէնի գործածութիւնը:

Պահքը ամենէն խտտապահանջ եղանակաւ ներկայիս կը պահուի Յոյն Օրթոտոքս եկեղեցւոյ մէջ: Կաթոլիկներ վերցուցած են Չատիկան շրջանէն դուրս պահքը բննելու սովորութիւնը, մինչ Յունաց մօտ Չորեքշաբթիի և Ուրբաթի պահեցողութենէն բացի, Երկուշաբթի օրերը արգիւտուած է մտեղէնի գործածութիւնը չի պատիւ հրեշտակացո: Բաց աստի, Քրիստոնէական եկեղեցւոյ երկրորդ մեծ տունը՝ Ս. Մնուկը ևս անոնց կողմէ կը դիմաւորուի քառասնօրեայ երկարատե պահեցողութեամբ, իսկ Ս. Կոյսի վերափոխման տունը կ'ունենայ զայն կանխող 2 շաբաթներու պահեցողութեան շրջան

**ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ**

**ՃՕՐՃ Ե՝ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ**

Թագաւորին (ձօրձ Ե.) սպաքինման համար մասնաւոր պաշտամունք մը տեղի տւեցաւ Ս. Քաղաքիս Անկլիիքան Ս. ձօրձ Մայր Եկեղեցւոյ մէջ, Դեկտ. 7, Ուրբաթ օր (1928), Մէք Իննէտ Եպս. Ի նախագահութեամբ: Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ այդ պաշտամունքին ներկայ գըտնըւեցաւ Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Մկրտիչ Եպս. Աղաւնունի, Հագշ. Տ. Կիւրեղ Վրդ. Ի հետ, և պաշտամունքէն ետքը Մէք Իննէտ Սրբազանին հաղորդեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր սղջոյններն ու աղօթքները՝ Վեհափառ Թագաւորին առողջութեան համար:

մը: Հետաքրքրական է նաև գիտնալ թէ Յօյներ և Ղպտիններ ունին ամբան շրջանին Առաքելոց պահ մանուսով պահեցողութեան շրջան մը, որ կ'աճի կամ կը նուազի համաձայն Ս. Զատկի թուականին: Այսպէս, յիշեալ պահքը Ղպտիններու մօտ կը սկսի Հոգեգալտեան յաջորդ օրը, իսկ Յունաց մօտ՝ յաջորդ Երկուշաբթիին (մեր Ս. Հռիփսիմեանց տօնի օրը) և կը շարունակուի մինչև Գլխաւոր Առաքելոց՝ Պետրոսի և Պողոսի տօնին (զոր բոլոր այլ Եկեղեցիներ կը կատարեն Յունիսի 29ին) նախօրեակը: Ուրեմն, տարեգիրը Ա կողմ պարագային, յիշեալ պահքը Յունաց մօտ կ'ընդգրկէ վեց՝ իսկ Ղպտոց մօտ եօթ եօթնեակներու երկար շրջան մը, իսկ նուազագոյն պարագային (տարեգիր ֆ կամ Բֆ)՝ 8 օրեր միայն Յունաց և 15՝ Ղպտոց մօտ:

Մեր Առաջաւորաց պահքը պահք է նաև Ղպտոց համար, Յովնանու պահք կոչուած (մենք ալ պահոց վերջին օրը Յովնան մարգարէի յիշատակը կը կատարենք): իսկ Ս. Ծննդեան պահքը Ղպտոց մօտ 43 օր է, այսինքն Յօյներէն 3 օրեր առաջ կ'անցնին պահեցողութեան:

Այս առթիւ, Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարքը, խորապէս զգածուած, ցաւակցական հեռագիր մը յղեց Քէնթըրպըրիի Գերշ. Արքեպիսկոպոսին:

**Ն. Վ. ԲԱՐՁՐ ԳՕՄԻՍԷՐԻՆ ԺԱՄԱՆՈՒՄԸ**

Ն. Վսեմ. Պաղեստինի և Անդր-Յորդանանու Բարձր Գօմիսէր Սըր Ճօն Չէնսըլըր, Պաղեստին ժամանեց 1928, Դեկտ. 6, Եշ., և առաւան ժամը 10ին մեծ հանդիսութեամբ մտաւ Երուսաղէմ: Ընդունելութիւնը կատարուեցաւ Եաֆայի դրան մօտ կառուցուած առժամեայ փայտակերտ տաղաւարին մէջ: Բոլոր հոգևոր պետեր պաշտօնապէս հրաւիրուած էին ընդունելու Ն. Վսեմութիւնը: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Հագշ. Տ. Կիւրեղ Վրդ. Իօրայէլեանի և Պատրիարքարանիս Դիւանապետ Տիար Կ. Նուրեանի հետ, ներկայ գտնուեցաւ ընդունելութեան հանդէսին:

Ն. Վսեմութիւնը կէսօրին ալ Երուսաղէմի կառավարչատան մէջ կատարեց իր երդման արարողութիւնը, որուն ներկայ գտնուեցան Պաղեստինի կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեաները և հոգևոր պետերը: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը այս հանդէսին ալ ներկայ գտնուեցաւ Հագշ. Տ. Կիւրեղ Վրդ. Ի հետ:

**ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՆՈՒԱՃՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ**

1928 Դեկտ. 9, Կիրակի օր, Մեծն Բրիտանիոյ դրօշին տակ Երուսաղէմի նըւաճման 11րդ տարեդարձն էր: Այս առթիւ մեր (Հայոց) կողմէն գոհաբանական մողթանքներ կատարուեցան Ս. Յարութեան Տաճարին մէջ, Ս. Պատարագէն ետք, և այդ առթիւ մասնաւորապէս աղօթքներ եղան Անգլիոյ Վեհ. Թագաւորին առողջութեան համար:

(Սիսե., 1929, Գ. Տարի, Յունուար, Թիւ 1, էջ 33:)



## ՉԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱԲԵՂԱՅԻ

Կիրակի, 28 Յունուար, Ս. Հեբեսակապեաց եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, հիւրաբար Ս. Արոզանուղ Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Հայոց Առաջնորդ Գեորգ. Տ. Տիրայր Եպս. Մարտիկեանը կատարեց քահանայական ձեռնադրութիւնն ու օծուեց Ս. Արոզոյս Ընծայարանի սան Հրաչ Սրկ. Քեթիբեանի:

Կոչման արտոգոյրքներ կատարուեցան նոյն եկեղեցւոյ մէջ, Շաբաթ, 27 Յունուար, երեկոյեան ժամերգութեանն ետ: Խարտաւիլակն եւ Հոգե. Տ. Մանուկ Աբղ. Սրկաբեան, իրեն առընթերակայ ունենալով Հոգե. Տ. Անուշաւան Վարդապետն ու Հոգե. Տ. Բարսեղ Աբեղան:

Կիրակի օր, ձեռնադրութեան խորհուրդը կատարուեցաւ սպաւորիչ հանդիսաւորութեամբ: Ընծայեալը, ի նշան աշխարհէ հրաժարման ձեռամբարձ ժողովուրդին դառնալէ ետք, ձեռնադրութեան երկրորդ բաժնին մէջ ընդունեց քահանայական գլխաւորման բոլոր մասերը, սրչուրեան ուրոյն աղօթքներով:

Օժման նուիրական պահուն, ընդառաջելով իր փափաքին, Չեռնագրիչ Սրբազանը Հրաչ Սարկաւազը վերակոչեց Տ. Համբարձում Աբեղայ, անունովը անոր հանգուցեալ հօր: Ստանալէ ետ իշխանութիւն մատուցանելու Ս. Պատարագ եւ ալէ ետ իր անդրանիկ օրհնութիւնը ժողովուրդին, բովանդակ Միաբանութիւնը բեմ բարձրանալով ողջագուրուեցաւ իր նոր հոգեւոր եղբօր հետ, համբուրելով անոր նորածն նակասն ու աջր: Նոյնը ըրին դպիրներ եւ ժողովուրդ իչ յետոյ, եկեղեցւոյ դասին մէջ:

Չեռնագրիչ Սրբազանը խօսեցաւ բովանդակալից հարող մը, իրեն յատուկ պերնախօսութեամբ շեշտելով նուիրականութիւնը՝ Նորընծային առջեւ բացուող ծառայութեան ու զոհողութեան ասպարեզին:

Ս. Պատարագէն ետք, Տ. Տիրայր Սրբազան շնորհազարդեց Տ. Համբարձումի գլուխը կուսակրօնութեան խորհրդանիշեր եղող վեղարով, որմէ ետ Նորընծան առաջնորդուեցաւ Ս. Յարութեան Տանար, անցընելու համար քառասունքի ապաշխարութեան իր օրերը, ուսանելով Ս. Պատարագի կարգերը Հոգե. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեանէ:

Ասորեւ՝ կենսագրութիւնը Նորընծային.

ՀՈԳԵ. Տ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ԱԲԳ. ՔԷՇԻՇԵԱՆ ծնած է Պեյրուք՝ 1958ին: Նախակրթութիւնը ստանալէ ետ ծննդավայրի Հայ Աւետարանական վարժարանին մէջ, 1972ին եկած է Մուսսակէմ եւ ընդունուած ժողովարժարանի Բ. գասարանը: Վարժարանի ընթացքը աւարտելէ ետ 1977ին, հետեւած է Ընծայարանի գասարնթացքներուն եւ ստացած Ուրար: Անցեալ տարւոյ Յունիսի 10ին ձեռնադրուած է Աւագ Սարկաւազ՝ Գեորգ. Տ. Շահէ Աբեղայ. Անեմեանէ:

Նորընծան իր անդրանիկ Ս. Պատարագ մատուց Շաբաթ, 24 Փետրուարին, Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ:

«Սիուն», ի դիմաց Ս. Պատարագ Հօր, սրտազինա շնորհաւորելով Նորընծան, կը մաղթէ անոր բեղմնաւոր գործունեութիւն, ի փառս Հայոց. Ս. եկեղեցւոյ եւ մեր բազմաշաշար ժողովուրդին:



# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Բ - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Բ

● Ուր. 5 Յուն. — Կէսօրէ կտք ժամը 2.30ին, Մայրափանքի մեծ դանդը զուարթ գանգիւններով կը ծանուցանէր սկզբնաւորութիւնը Ս. Ծնունդը — կամ Ծննդեան պահը — կանխող Աւագ Տօներուն: Ուրիշ կտք, շքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ ընթացք կ'առնէ աննցմէ առաջինին՝ Դաւթի մարգարէի և Յակոբայ Տեառնեղբոր մեծահանդէս նախատեսակը, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Նոր. Ապա. Թրննեցէք ՂՏէր: Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

● Եր. 6 Յուն. — Ս. Գարի մարգարէին և Յակոբայ Տեառնեղբայր առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Արոռոյս Երուսաղէմի): Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ս. Պատրիարք Նայրը, շուրջառ և եմփորոն առնելով, բարձրացաւ Տեառնեղբոր Աթոռի պատուանդանին ուր, ժամերգութեան աւարտին, ընդունեց Միաբանութեան շնորհաւորութիւնները: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գերշ. Տ. Կիրեղ Եպ. Գարիկեան, որ իր քարոզի ընթացքին բարեմաղթութիւններ ըրաւ Ն. Ամենապատուութեան բարօր կեանքի և արեւշատութեան համար: Ամեն. Ս. Պատրիարք Նայրը նախագահեց Ս. Աթոռոյ հանդուցեալ պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հանգստեան պաշտամունքին:

● Կիր. 7 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատրան մէջ: Ժամարարն էր Նոզշ. Տ. Բարսեղ Արղ. Գալէմտէրեան: Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանի աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն:

— Ամեն. Ս. Պատրիարք Նայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի հանդիսաւոր նախատեսակին:

● Բշ. 8 Յուն. — Ս. Սեփանոսի ճախավային: Առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ս. Աթոռոյ 3 Սարկաւագներն ու 4 Ուրարակիրները, մարգարտաղարդ սաղաւարտ ի գլուխ և տապանակ ու բուրվառ ի ձեռին, պանծացուցին յիշատակը իրենց մատախպարին: Հանդիսապետն էր Ամեն. Ս. Պատրիարք Նայրը: Ս. Պատարագը մատուցուեցաւ աւանդատան — Ս. Ստեփանոս մատրան — աւագ սեղանին վրայ: Ժամարարն էր Նոզշ. Տ. Ոսկի Արղ. Որդիքեան: Տօնին բուրվառակիր Նայրերն էին Տ. Ապետ և Տ. Մանուէլ Արեղաներ:

— Գլխաւոր Առաքելոց՝ Պետրոսի և Պօղոսի հանդիսաւոր նախատեսակը պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպ. Գարիկեանի:

● Գշ. 9 Յուն. — Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ: Ժամարարն էր Նոզշ. Տ. Բարսեղ Արղ. Անուշեան:

● Գշ. 10 Յուն. — Աւագ Տօներուն վերջինին — և փառաւորագոյնին — մեծահանդէս նախատեսակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Նոր. Ապա Ս. Աթոռոյ շարականը երգելով Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

● Եշ. 11 Յուն. — Տօն Ս. Որդուցն Արաման, Յակոբայ առաքելոյն և Յովնանու աւետարանիցն — Բարեկեցեաց Ս. Ծննդեան պահոց: Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատրան մէջ հանդիսաւոր Սուրբ Պատարագը մատոյց Ամեն. Սրբ. Պատրիարք Նայրը և ապա, ամպօղանի տակ և Կենաց Փայտի մատունքն ի ձեռին, նախագահեց երարդարձ մեծահանդէս թափօրին: Արարողութեանց աւարտին, նախորդ օրուան նման, շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ն. Ամենապատուութիւնը Ս. Պատարագի նշխար բաժնեց ժողովուրդին և փակեց շարքը Աւագ Տօներուն:

● Եր. 13 Յուն. — Ս. Բարդի հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխաղբի: Ժամարարն էր Նոզշ. Տ. Վանիկ Արղ. Մանկասարեան:

● Կիր. 14 Յուն. — Նոր Տարի, Կաղանդ բաշին Տոմարի: Կէս գիշերին, Մայրափանքի մեծ դանդը, ձայնակցեցելով Ս. Յարութեան Տաճարի Յունաց զանգերուն, ուրախ զօղանջներով կ'աւետէր ժամանումը Նոր Տարուան:

— Առաւօտուն, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատոյց, ըստ սովորութեան, ժամօրհնողը՝ Նոզշ. Տ. Ռուբէն Վրգ. Յովակիմեան: Յետոյ, Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարանի մեծ դահլիճը, ուր Ս. Թարգմանչաց Մանկապարտէզէն երկու փոքրիկներ զողտրիկ ուղերձներով և ծաղկեփունջի մատուցմամբ Վարժարանի ուսանողութեան Ամանորեան շնորհաւորութիւնները ներկայացուցին Ամեն. Ս. Պատրիարք Նոր, որ տներ շնորհաւորելէ կտք բաժնեց ժողովուրդին մէկական նարինջ:

● Եշ. 18 Յուն. — ճրագալոյց Ս. Ծննդեան: Առաւօտեան ժամը 10ին, պայծառ երկնքի մը և գաղջ արեւի մը ճառագայթներուն ներքև, Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Նոր և ինքնաշարժերու երկար շարանով մը համբայ ելաւ դէպի Բեթղեմէմ: Կէս համբան, Յունաց Ս. Եղիա վանքի մօտ պատուասիրուելէ և Բեթղեմէմի և շրջակայ գիւղերու Մուխթարներուն կողմէ դիմաւորուելէ

եաք, հեծեալ ոստիկաններու ալ առաջնորդութեամբ, պատկառելի թափօրը շարունակեց իր ճամբան և ժամը 11 ին հասաւ Ս. Ծննդեան հրապարակը, ուր կը սողանցէին շայ և օտար Սկստուական խումբեր, մինչ գեղազարդ ու հսկայ տօնածառի շուքին՝ Ոստիկանական նուագախումբը կը նուագէր Ծննդեան մեղեդիները: Ինքնաշարժէ էջքին՝ Ն. Ամենապատուութիւնը զիմաւորուեցաւ Բեթղեհէմի Քաղաքացեալին և Ձին. Կառավարչին կողմէ: Հոն էին նաև ժառ. վարժարանի ուսանողութիւնն ու Ս. Ծննդեան հայալմանքի Միաբանութիւնը, գլխաւորութեամբ նոր Տեսուչ Հոգեշնորհ Տ. Հայկասեբ վարդապետի, որոնք Ս. Պատրիարքն ու իր շքախումբը Վերսուրգ մեծ շարականի երգեցողութեամբ առաջնորդեցին վանք: Օտար հիւրերը պատուասիրուեցան Տաճարի մեր Տեսչարանին մէջ:

— Կէսօրէ ետք, Գեղը. Տ. Կիւրեղ Եպիսկոպոսի կեանքի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարունակեց իր ճամբան և ժամը 11 ին հասաւ Ս. Ծննդեան հրապարակը, ուր կը սողանցէին շայ և օտար Սկստուական խումբեր, մինչ գեղազարդ ու հսկայ տօնածառի շուքին՝ Ոստիկանական նուագախումբը կը նուագէր Ծննդեան մեղեդիները: Ինքնաշարժէ էջքին՝ Ն. Ամենապատուութիւնը զիմաւորուեցաւ Բեթղեհէմի Քաղաքացեալին և Ձին. Կառավարչին կողմէ: Հոն էին նաև ժառ. վարժարանի ուսանողութիւնն ու Ս. Ծննդեան հայալմանքի Միաբանութիւնը, գլխաւորութեամբ նոր Տեսուչ Հոգեշնորհ Տ. Հայկասեբ վարդապետի, որոնք Ս. Պատրիարքն ու իր շքախումբը Վերսուրգ մեծ շարականի երգեցողութեամբ առաջնորդեցին վանք: Օտար հիւրերը պատուասիրուեցան Տաճարի մեր Տեսչարանին մէջ:

— Կիւրեղ Եպիսկոպոսի կեանքի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարունակեց իր ճամբան և ժամը 11 ին հասաւ Ս. Ծննդեան հրապարակը, ուր կը սողանցէին շայ և օտար Սկստուական խումբեր, մինչ գեղազարդ ու հսկայ տօնածառի շուքին՝ Ոստիկանական նուագախումբը կը նուագէր Ծննդեան մեղեդիները: Ինքնաշարժէ էջքին՝ Ն. Ամենապատուութիւնը զիմաւորուեցաւ Բեթղեհէմի Քաղաքացեալին և Ձին. Կառավարչին կողմէ: Հոն էին նաև ժառ. վարժարանի ուսանողութիւնն ու Ս. Ծննդեան հայալմանքի Միաբանութիւնը, գլխաւորութեամբ նոր Տեսուչ Հոգեշնորհ Տ. Հայկասեբ վարդապետի, որոնք Ս. Պատրիարքն ու իր շքախումբը Վերսուրգ մեծ շարականի երգեցողութեամբ առաջնորդեցին վանք: Օտար հիւրերը պատուասիրուեցան Տաճարի մեր Տեսչարանին մէջ:

— Կիւրեղ Եպիսկոպոսի կեանքի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարունակեց իր ճամբան և ժամը 11 ին հասաւ Ս. Ծննդեան հրապարակը, ուր կը սողանցէին շայ և օտար Սկստուական խումբեր, մինչ գեղազարդ ու հսկայ տօնածառի շուքին՝ Ոստիկանական նուագախումբը կը նուագէր Ծննդեան մեղեդիները: Ինքնաշարժէ էջքին՝ Ն. Ամենապատուութիւնը զիմաւորուեցաւ Բեթղեհէմի Քաղաքացեալին և Ձին. Կառավարչին կողմէ: Հոն էին նաև ժառ. վարժարանի ուսանողութիւնն ու Ս. Ծննդեան հայալմանքի Միաբանութիւնը, գլխաւորութեամբ նոր Տեսուչ Հոգեշնորհ Տ. Հայկասեբ վարդապետի, որոնք Ս. Պատրիարքն ու իր շքախումբը Վերսուրգ մեծ շարականի երգեցողութեամբ առաջնորդեցին վանք: Օտար հիւրերը պատուասիրուեցան Տաճարի մեր Տեսչարանին մէջ:

— Կարճ հանդիսատէ մը ետք, Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ, ուր հասաւ

ժամը 8 ին և բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Ս. Ծննդեան աւետիսով օրհնեց ու արձակեց ամէնքը:

— Երուսաղէմի մէջ, ձրագալոյցի արարողութիւնը կատարուեցաւ Ս. Յարութեան Տաճարին մէջ, Ս. Կերեղմանին զիմաց: Իսկ Ս. Պատրիարքը Քրիստոսի Ս. Կերեղմանին վրայ մատոյց չոգչ. Տ. Բարգէն Արղ. Անուշեան: Տաճարի Տեսուչ Հոգչ. Տ. Վաղարշ Վարդապետ նախագահեց նախատօնակին:

— Ուրբաթ առաւօտ կանուխ Մայր Տաճարին մէջ պաշտուած ժամերգութեան աւարտին, Աւագ Սեղանին վրայ Ս. Պատրիարք մատոյց, ըստ սովորութեան, Ս. Հրեշտակապետաց վանոց Տեսուչը՝ Հոգչ. Տ. Սեան Վրղ. Ղարիպեան, որ ապա նախագահեց շքօրհնէքի սրբատաղրաւ արարողութեան:

— Ի բացակայութեան ժառանգ. սաներու, թէ՛ երէկ և թէ՛ այսօր երգեցողութիւնները կատարուեցան տեղացի գովիւններու կողմէ:

— Նախատօնակին Ս. Յակոբ նախագահեց Գեղը. Տ. Կիւրեղ Եպ. Գարիկեան:

● Եր. 20 Յուն. — Յիւստակ մեկոյց: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատրիարք մատոյց, ըստ սովորութեան, Աւագ Թարգմանը՝ Հոգչ. Տ. Ասպետ Արղ. Պալեան: Հանգրստեան պաշտամունքին նախագահեց Լուսարարապետ Գեղը. Տ. Հայրիկ Արքեպոս. Ալանեան:

● Կիր. 21 Յուն. — Ս. Պատրիարք մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատոյց մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ասպետ Արղ. Պալեան:

● Ել. 25 Յուն. — Նախատօնակին Ս. Յակոբ նախագահեց Գեղը. Տ. Տիրայր Եպոս:

● Ուր. 26 Յուն. — Անուամակոյն իր Տեսուչ: Առաւօտեան ժամը 8.30 ին, Գեղը. Տ. Տիրայր Եպոս. Մարտիկեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շարունակեց իր ճամբան և ժամը 11 ին հասաւ Ս. Ծննդեան հրապարակը, ուր կը սողանցէին շայ և օտար Սկստուական խումբեր, մինչ գեղազարդ ու հսկայ տօնածառի շուքին՝ Ոստիկանական նուագախումբը կը նուագէր Ծննդեան մեղեդիները: Ինքնաշարժէ էջքին՝ Ն. Ամենապատուութիւնը զիմաւորուեցաւ Բեթղեհէմի Քաղաքացեալին և Ձին. Կառավարչին կողմէ: Հոն էին նաև ժառ. վարժարանի ուսանողութիւնն ու Ս. Ծննդեան հայալմանքի Միաբանութիւնը, գլխաւորութեամբ նոր Տեսուչ Հոգեշնորհ Տ. Հայկասեբ վարդապետի, որոնք Ս. Պատրիարքն ու իր շքախումբը Վերսուրգ մեծ շարականի երգեցողութեամբ առաջնորդեցին վանք: Օտար հիւրերը պատուասիրուեցան Տաճարի մեր Տեսչարանին մէջ:

— Նախատունակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Եր. 27 Յուն. — Ինուոնդ Յովհաննու Կարպեթին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մանուէլ Արղ. Երկաթեան:

● Կիր. 28 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Արղ. Գալաճեան:

● Եր. 3 Փետր. — Ս. հայրապետացն Արամասի եւ Կիրղի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեան Վրդ. Դարիպեան:

● Կիր. 4 Փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, վերնատան մեր մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բարսեղ Արղ. Գալէմտէրեան:

● Եր. 10 Փետր. — Ս. Գրիգորի Ասուածարացին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Արղ. Որդիբեան:

● Կիր. 11 Փետր. — Բարեկենդան Առաջաւորի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Արղ. Մանկասարեան:

● Ուր. 16 Փետր. — Յիւստակ Յովհաննու մարգարէին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ Հոգշ. Տ. Ասպետ Արեղայ կատարեց ընթերցումը Յովնանու Գրքին:

— Նախատունակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Եր. 17 Փետր. — Ս. Սարգսի զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Գանձատան նախագահի թը եղող Ս. Սարգսի մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան: Ապա, ընկալեալ սովորութեան համաձայն, հոգեհանդատեան պաշտօն կատարուեցաւ հանգուցեալ ազգային մեծանուն բարերար Գալուստ Կիւլպէնկեանի հօր՝ Սարգսի հոգեոյն համար, անոր անուան տօնին առթիւ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Կիր. 18 Փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Եր. 24 Փետր. — Ս. Իսահակայ Պարբէի հայրապետին: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ իր անդրանիկ Ս. Պատարագը մատուց Հոգշ. Տ. Համարածում Արեղայ Բէշիշեան:

● Կիր. 25 Փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, վարժիչ-ուսուցիչը նորընձային՝ որ կը սպասարկէր Ս. Խորհուրդին:

● Բշ. 26 Փետր. — Տեառնընդառաջի մեծանաղէս նախատունակին և անոր յաջորդող առաջին սննդատանին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

— Գերշ. Սրբազանը նախագահեց նաև գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած եկեղեցեցէի և Հսկման կարգերուն, որմէ ետք, Ժառ. սաներ նախկին վարժարանի դաշտին վրայ վառեցին աւանդական կրակը: Խուռնեամ ժողովուրդ փութացած էր դաշտ, ձմեռնաօվերջի տաքուկ օդով ու անամպ երկնքի մը տակ գիտելու հեթանոսական վերջամնաց սովորութիւններէն եղող Խարսկահանդէսը:

● Գշ. 27 Փետր. — Տեառնընդառաջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս:

● Գշ. 28 Փետր. — Վարդանանց մեծանաղէս նախատունակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Բշ. 8 Յուն. — Օրթոտքս Եկեղեցւոյ Ս. Ծննդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարքը, ի գլուխ Միաբանութեան, շնորհաւորական այցելութիւն տուաւ Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին, որմէ ետք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Հապէշաց և Ասորւոց Եպիսկոպոսներուն և Ռուսաց վանքի Մեծաւորին:

● Ուր. 12 Յուն. — Բեթղեմէմի Զինուորական Կառավարիչը այցելեց Ս. Պատրիարք Զօր:

● Եր. 13 Յուն. — Դիւերուան ժամը 7ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Ալէքս և Մարի Մանուկեան ժառանգ. Վարժարանի Ամանորի Հանդէսին, որ առաջին անգամ ըլլալով կայացաւ նորակառոյց վարժարանի ընդարձակ սրահին մէջ:

● Բշ. 15 Յուն. — Կէսօրէ ետք, Ս. Էջմիածին մատարան մէջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Կապիտղի առաւօտուն վախճանած Պատրիարքարանի պահակ-բարապան Հայկ Մկրտիչեանի յուզարկաւորութեան:

● Եր. 20 Յուն. — Մեր Ս. Ծննդեան տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Պատրիարքարան յաջորդարար շնորհաւորական այցելութեան եկան — Յունաց Միաբանութիւնը՝ գլխաւորութեամբ Ամեն. Տ. Բենեդիկտոս Պատրիարքին, Լատինաց Միաբանութիւնը՝ գլխաւորութեամբ Սեն. Տ. Գէլթրիթթի Պատրիարքին, Զրանչիսկեանք՝ գլխաւորութեամբ Գերշ. Կիւթոսին, Պապական Նուիրակը, Անկիլիբան Արքեպիսկոպոսը, Ասորւոց և Հապէշաց Եպիսկոպոսները՝ իրենց Միաբանութեան անդամներով, Յոյն և Հայ Հոռովմէական և Մարոնիթ համայնքի Մեծաւորները՝ իրենց օգնականներով, Ռուսաց Միաբանութեան Մեծաւորը, Ռուսկն Եկեղեց-

ւոյ ներկայացուցիչը և Լուտերականներու փրօփաթն ու Արար-Լուտերականներու երէցը:

● Կիր. 21 Յուն. — Նոյն առթիւ շնորհաւորութեան եկան՝ Բաղաքապետ վսեմ. Թէտի Բօլլէք՝ Բաղաքապետարանի երկրաչափ Պր. ձարալլաշի հետ, Կրօնից Նախարարութեան ներկայացուցիչն ու Ոստիկանապետը, ինչպէս նաև շնորհակ Ռուսերու վանքին Մեծաւորը:

● Բշ. 22 Յուն. — Նոյն առթիւ շնորհաւորութեան եկան օտար տէրութեանց Հիւպատոսները:

— Կէսօրը քիչ անց, օրերս Իսրայէլ այցելող Ամերիկայի Միացեալ Նահանգաց նախկին Նախագահ Պր. ձէրալտ Ֆօրտ, իր ազնուափայլ տիկնոջ հետ, այցելեց Ս. Աթոռ: Վանքի դրան զմաւորուեցաւ Միաբանութեան կողմէ, մինչ վարժարանի աշակերտութիւնը, ատենէ մը ի վեր սաստիկ ցուրտին հակառակ հոն սպասող, ջերմ ծափահարութեամբ եկեղեցւոյ գաւթին մէջ ողջունեց մեծայարգ հիւրերը, որոնք յետոյ առաջնորդուեցան Մայր Տաճար, ուր ընդունուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ և Ս. Գլխադրի վրայ իրենց յետադրելէ ետք լաւ տպաւորութիւններով մեկնեցան:

● Շր. 17 Փետր. — Երեկոյեան, Սկոպտական St. Andrew's Եկեղեցւոյ մէջ, Եկեղեցւոյ երէց Թօմ Հուսթօնի հրաւերին ընդառաջելով, Գերշ. Տ. Կիրեղ Եպօ., Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ասպետ Արղ. և Տիար Գէորգ Հինգիեան ներկայ եղան Ս. Բաղաք այցելող վեր. Պրօտիի ի պատիւ տրուած ընդունելութեան:

● Կիր. 18 Փետր. — Ընդառաջելով Մարտնիթ համայնքի Մեծաւոր Մօնս. Օղոտիին Հարֆուշի հրաւերին, Հոգշ. Տ. Անուշաւան վրդ. Զղջանեան ներկայ գտնուեցաւ Մարտնիթներու Եկեղեցւոյ մէջ, 9 Փետրուարին զուգարկուած Ս. Մարտնի տօնին առթիւ յիշեալին մատուցած Ս. Պատարագին և եկեղեցւոյ կից քրահին մէջ տրուած ընդունելութեան:

Ծննդեան Ութօրէքին Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ հանդիսաւորապէս պատարագելէ և քարոզելէ զատ, կատարեց նաև քահանայական ձեռնադրութիւնն ու օծումը Հրաշ Սարկաւագին, այդ առթիւ խօսած յորդորական իր քարոզին մէջ յայտնելով թէ իր Ս. Աթոռոյս հացը կերած ըլլալուն (Սրբազանը, ծնած Պէյրութ, 1910ական թուականներուն աշակերտած է Ս. Աթոռոյս փառնգ. վարժարանին և ապա ներգաղթած Հայքենիք) պարտքն է որ մասամբ մը հատուցած եղաւ իր կատարած ձեռնադրութեամբ:

3 Փետրուար, Շարթ գիշեր, Սրբազանը խիստ շահեկան ու հետաքրքրական բանախօսութիւն մը տուաւ Ռուսմանհայ ու Պուլկարուհայ գաղութներու անցեալին ու ներկային մասին, Ն. Ե. Միութեան ակումբին մէջ:

Գերշ. Սրբազանը 14 Փետրուարին, Զորեքշարթի օր, Իսթանպուլի ճամբով վերադարձաւ իր պաշտօնատեղին, ականատես ըլլալէ ետք Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարքով գլխաւորուած Ս. Յակոբեանց Միաբանութեան արձանագրած նուաճումներուն՝ կրօնական ու կրթական գետններու վրայ:

Հ Ի Ի Ե Բ Ի Հ Ա Յ Բ Ն Ե Ի Գ Է Ն

22 Յունուար, Երկուշարթի օր, ընդառաջելով Ամեն. Ս. Պատրիարք Հօր հրաւերին, Հայաստանէն Ս. Աթոռ ժամանեցին Մայր Աթոռոյ պաշտօնաթերթ լէջմիածին Ամասդրի Սիմրադի Տիար Արթուր Հատիտեանը և Միջեկեղեցական Յարգբերութիւններու Քարտուղար Տիար Պարգև Շահպաղեանը, երկուքն ալ դասախօսներ Հոգևոր ձեմարանի:

Յարգարժան հիւրերը Երուսաղէմ մնացին մինչև 11 Մարտ, մօտէն հսկելով Ս. Աթոռոյ Տպարանին մէջ նոր, էլէքթրօնիկ մեքենայով կատարուած Աստուածաշունչի տրեմտահայ թարգմանութեան տպագրութեան: Թարգմանութիւն մը՝ զոր տարիներու տքնաջան աշխատանքով գլուխ հանած էին, նմանապէս Հոգևոր ձեմարանի դասախօս Տիար Սամուէլ Անթոսեանի հետ, վերին հսկողութեամբը Ազգիս սիրեցեալ վեհ. Հայրապետին:

16 Փետր., Ուրբաթ գիշեր՝ Պր. Հատիտեան իսկ 6 Մարտ, Գշ. գիշեր՝ Պր. Շահպաղեան բանախօսեցին Հայ Երիտ. Միութեան սրահին մէջ: Առաջինը խօսեցաւ իրենց աշխատանքին ու առաքելութեան շուրջ, իսկ երկրորդը՝ Հայաստանի Երիտասարդութեան մասին:

Գ Ե Բ Ե. Տ. Տ Ի Բ Ա Յ Բ Ե Գ Ս. Մ Ա Բ Տ Ի Կ Ն Ա Ն Ա Մ Ե Բ Մ Է Ջ

12 Յունուար, Ուրբաթ օր, Պուքրէէն Ս. Բաղաք ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միաբան և Ռուսմանիոյ ու Պուլկարիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Տիարայ Եպօ. Մարտիկեանը, Ս. Ծննդեան տօնը մեր մէջ անցընելու համար, հրաւերովը Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

Գերշ. Սրբազանը Ս. Աթոռ մնաց աւելի քան ամիս մը, և եկեղեցական հանգիստութեանց իր մասնակցութիւնը բերելէ և Սուրբ



Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ամեն. Ս. Պատրիարք Լոր Մննդեան պատգամը Բեքդեհեմի Սուրբ Այրեն	2
Շնորհաւորական գիր՝ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն	5
» հեռագիր՝ Յովնանէս - Պողոս Բ. Պապէն	6
» գիր՝ Թուսաց Պիմէն Պատրիարքէն	6
» գիր՝ Տիար Ալեքս Մանուկեանէն	7
Հեռագիր՝ յղուած Ամենայն Հայոց Հայրապետին	7
<b>ՓՈՅԱՆ ԽՄԱՆԳՐԱԿԱՆՆԵՐ . -</b>	
- Պատրիարքական Կոնգրակ՝ Վսեմ. Տիար Ալեքս Մանուկեանի ուղղուած	8
Վսեմ. Տիար Ալեքս Մանուկեանի Հ. Բ. Ը. Մ. Ի Նախագահութեան 25ամեակը	10
<b>ԿՐՕՆԱԿԱՆ . -</b>	
- Նորագուտղ ժամանակը	Գ. ձ. 12
<b>ԲԱՆԱՍՏՆՉՆՈՒԿԱՆ . -</b>	
- Երբ կը նայիմ	ԵՂԻՎԱՐԳ 14
- Քառեակներ	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ 17
- Վարդանանց յիշատակիմ	Գ. ՃԱՐՏԱՐ 18
- Քառեակներ	» » 18
<b>ԳՐԱԿԱՆ . -</b>	
- Անկապ խոհեր	Գ. ՃԱՐՏԱՐ 19
<b>ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ . -</b>	
- Ասեփանոս Կրղ. Աղբամարայ	Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ 22
- Two Leaves of Acts in the Perkins Library	MICHAEL E. STONE 24
- «Պատմութիւն Բարաղամու եւ Յովասափու»	ՓԱՅԼԱԿ ԱՆԹՈՊԵԱՆ 25
<b>ՄՅՏՆԱԿՐԱԿԱՆ . -</b>	
- Վասն պանոց	Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ 29
<b>ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ . -</b>	
- Զատիկ հարցը	ԳԼՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻՋԵԱՆ 35
<b>ԳՐԱԽՅԱԿԱՆ . -</b>	
- Իբնէնոսի նորագիտ հասուածներ	Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ 38
Եկեղեցիներու Միութեան Եօրենսակը Երուսաղէմի մէջ	Գ. 39
<b>«ՄԻՈՆ», Ի ԼՈՒՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ . -</b>	
- Մեծ Պահիր ինչո՞ւ Քառասնորդական կը կոչուի	41
- Այլ Եկեղեցիներու մօտ պահիր ինչպէ՞ս կը պահուի այսօր	41
<b>ՅԻՄՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ . -</b>	
- ձօրն Ե. Թազաւորի հիւանդութիւնը	42
- Ն. Վ. Բարձր Գովապրիմ ժամանուի	42
- Երուսաղէմի նուանման տարեկարձը	42
Զեւոնգրութիւն Արեղայի	43
<b>Ս. ՅԱԿՈՒԹ ԼԵՐԱԿԱՆ . -</b>	
- Եկեղեցականք - Բեմականք	44
- Պատճառականք	46
- Գեր. Տ. Տիրայր Եպս. Մարտիկեան մեր մէջ	47
- Հիւրեր՝ Հայրենիքէն	47